

Παρθενον της Γαλιουρας
η ορφανον η Γαλιουρα
αποφαινη η παρθενον:

Lbn.

✓ 2154

1999

ՈՒՂԵՑՈՅՑ
ԿԱՆԱՆՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՅ


Ի ԿԵԱՆՍ

ԱՌՏՆԻՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ Ի ԳԵՐՄԱՆԵՐԷՆԷ

Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ

ԱՆԳՍՏ ԱՐՏԱԲԻՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆ
Ի ԳՈՒՌՆ ՍՊԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ



معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتیہ طبع اولت شد

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Դ. ՊԱՐՏԻՉՈՒԹԵԱՆ

1885



Ltin
2154

Л. б. о. б.
87020000



**ՈՒՂԵՑՈՅՑ
ԿԱՆԱՆՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ**


Ի ԿԵԱՆՍ

ԱՌՏՆԻՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ Ի ԳԵՐՄԱՆԵՐԷՆԷ

Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ

Անդամ արտաքին բոլորակցութեան հիմանին
ի դուռն Սպարապետութեան



Կ. ՊՕԼԻՍ

ՑԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻՉԱՆԵԱՆ

1885



784


ԲԱՆ ՔԱՐԳՄԱՆՁԻՆ

Մարց Է. աղջկանց կրթութեան Է. կենցաղա-
վարութեան պարտեաց վրայ ամեն ազգաց մեզ
շատ բարոյախօսներ Է. փիլիսոփաներ ընդերկար
գրած են : Բայց այդ գրուածոյք ժողովրդեան եր-
կու. սեռին վրայ ալ ա՛յնպիսի իմն ազդած են , որ՝
դահճին , եկեղեցւոյ դրնեն ներս մտա՛ծ ատեն մի-
այն քրիստոնեական պարտաւորութիւնը միտքն
ինկածին պէս , այդ գրուածոյք ալ ընթերցողին
ձեռքը գտնուա՛ծ ատեն միայն ազդեցութիւն կ՛ու-
նենան իրենց բացատրութեան ոճովը կամ ճաշա-
կան : Իսկ ընդհակառակն՝ այս գիրք գործնա-
կանապէս կը պարզէ մարդկան բարոյականին հիմ-
նական պարտաւորութիւններն Է. հաստատ կանո-
նաւորութիւն մը կուտայ ընկերական յարաբերու-
թեանց եղանակին Է. առտնին պարտուց : Այս
կրկնակ պատճառներուն համար փափաքեցայ
բարգմանել զայս գործ՝ որոյ տերն է Ֆրեդերիք
Լեստրը՝ գերմանացի նշանաւոր բարոյախօսունին ,
Է. որ բազմիցս վերատպուած , Է. համայն Գեր-
մանիոյ ընտանեաց հանապազօրեայ դասագիրքն
եղած է :

Ճշմարիտ է թէ ամեն ազգ իւր սովորութիւն-
ներն ու ծեսերն ունի , զորս պէտք է յարգել .
սակայն ասկէ ջնետեւի՞ր թէ սովորութեանց Է. ծի-
սից կանոնաւորութիւն մը ջունեցողն ալ լաւ է :

92154. Լա

29 2159



օրինակելի սովորութեամբք ջլրացնէ իւր պակասը :
Անա գերմանացոց բարքն ու վարքն յայսմ մա-
սին կրնայ միակ օրինակ հանդիսանայ մերայնոց :

Զիա՛րդ եւ իցե , ինչ որ այ լինի այլոց կար-
ծիքն , իմ համոզումն է թէ մերայնոց համար օգ-
տակար ծառայութիւն մ'ըրած էմ :

Եթէ ոմանք գործոյս ամբողջութիւնն անպատ-
շան համարին ազգային կենաց , բո՛ղ պատշանա-
գոյնները ծաղկաբաղ ընեն աստի :

Կրթութեան եւ քաղաքավարութեան օրէնք միջ-
ազգային են : Քաղաքակրթութիւնն իւր մեջ գա-
նազանութիւն ջընդունիր : Հոգւոյ կրթութիւնը
միայն մեկ վարժապետ ունի : Մարդկային շնորհն
այլազան ջէ :

Եթէ արդէն գտնուած յաւ սովորութիւն մը
փոխելով ուրիշ մը տրամադրել լինէր նպատակս ,
թերեւս յանդգնութիւն համարաւեր յոմանց . բայց
ես ջեղածի մը տեղը գոցելու համար փոյթեռանդն
գոյով՝ ի հանդես բերի գայս : Իրասունք ունիմ
յուսայու որ օգտամացոյց պիտի լինի այս գործն ,
այն է՝ թէ ջըբտմ ասելի , գէթ այս գրքին ոգւով
բարեկիրք մայրեր եւ օրիորդներ ունենայ սիրելի
Ազգս :

Գ Լ Ո Ւ Խ Ա

Մարտ Իրձայ ջընկել յափեհայնէ ,
Բայց է՝ մարտոյ՝ ո՛ւ . . .

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ , ԱՅՅԵՏՈՄՍՔ , ԵՒԱՅԼՆ

Մեր այցելութեանց ատեն պարտիմք ուշադիր
լինել թէ առ ո՛ր յայց կ'եղնենք եւ ի՞նչ առթիւ : Այ-
ցելութիւնը կան , որ պատճառաւ են , եւ կան որ
քաղաքավարութեան պահանջմունք են : Կարեւոր
այցեր կ'ընէ սատկ մարդ :

Այցը հինգ կարգի կը բաժնուին :

Եթէ բարեկամուհւոյ , ծանօթի կամ ազգակա-
նի մը ուրախառիթ դէպք մը պատահի , պարտա-
ւոր եմք յայց ելանել առ նա առ ի շնորհաւու-
րութիւն : Այդ այցելութիւնն այնչափ կանուխ
պէտք է լինի , որչափ մտա լինիմք նոյն անձին , եւ
այնչափ կարճատեւ՝ որչափ հեռու լինիմք ջնորհա-
ւորելի անձէն :

Եթէ մեզ քաջածանօթ անձի վիշտ մը պատ-
ճառի , մեր վշտակցութիւնն յայտնելու համար ,
պարտիմք յայց ելանել առ նա առ ի ցաւակցու-

Թիւն : Այս տեսակ այցելութիւնք պէտք չէ որ վաղվաղակի կատարուին : Աշտակցական այցելութիւնք սակաւ մի յապաղելու են . վասն զի աճապարանքն՝ հակառակ մեր ցաւակցութեան՝ լոկ քաղաքավարական ձեւի մը կամ հետաքրքրութեան կրնայ վերադրուիլ :

Եթէ մեր յարգած անձն յայց ելնէ առ մեզ , պարտիմք այցելել առ նա փոխադարձաբար : Պէտք չէ յապաղել այս տեսակ այցելութիւն մը :

Պարագայն այնպէս կը բերէ՝ որ մենէ բարձր անձի մը ներկայանալու պէտք կ'ունենամք . այդ է ն երկայացման այց :

Եթէ ոք ընկերական ակումբ մը կազմելու նըպատակ ունենայ , պարտի անձամբ հրաւիրել հիւրերը : Սակայն մեծ խրախճանաց համար , հրաւէրը գրութեամբ կը լինի : Հրաւէրի այցից ատեն , հիւրոց գուարճութեան համար ըլլալիք պատրաստութեանց վրայ խօսիլ պատշաճ չ'է . այլ ամենայն պարզութեամբ զեկուցանել՝ թէ ո՞րչափ խնամ կը տարուի հրաւիրելոց ձանձրութեան տեղի չտրուելու համար :

Հինգերորդն է հրատեչտի այցն , զոր մարդ իւր մերձակայ բարեկամաց պարտի , երբ քիչ ատենէն , կարճ կամ երկար եւ կամ մշտատեւ բացակայութեամբ իւր բնակավայրէն հեռանալու դիտաւորութիւն ունենայ : Այդ ատեն , հագուստք պէտք է « փողոցի արդուզարդով » լինին եւ այցելի անձին վիճակին յարմար : Այցելութեան նպատակն առաջին ողջունէն անմիջապէս ետքն յայտնելու է :

Այցելութիւնք տաղտկալի լինելու չափ ստէպ լինելու չեն : Այցելութեան սովորութիւնք միօրինակ չեն . ուստի պէտք է տեղական սովորութեանց յարմարիլ :

Երեւելի անձանց հետ խօսուած ատեն , խօսքի ձեւերը , շարժումնք եւ բառերը մեծարանաց եւ յարգանաց դրոշմն կրելու են , որովք մարդ յարգելի կ'ընէ զանձն : Բայց այդ մեծարանք մեր անձին արժանապատուութեան զպչելու չափ չափազանց լինելու չեն :

Պէտք չէ որ մարդ մեծամեծաց շուրջն յածի , այլ պարտի սպասել նոցա հանդիպելու եւ յարգելի համեստութեամբ դիմաւորել զնոսա : Զգուշանալ պէտք է ո՛ր եւ է մտերմական խօսքէ եւ շարժմանէ , եւ զմեզ ի նոցանէ բաժանող սահմաններն անցնելու չէ :

Քաղաքավարութեան հակառակ է , երբ մարդ իրմէ բարձր աստիճանաւոր անձի մը խօսածին ուշադրութեամբ ականջ չդնէր :

Մարդ իրեն ուղղեալ հարցմանց , կտրուկ , որոշ բայց համեստ կերպով պատասխանելու է : Խօսողի մը խօսքն ընդմիջել՝ անկրթութիւն է :

Մեր վարմունքն , յանդիման բարձրաստիճան անձանց , պէտք է որ չափաւոր եւ խոնարհ լինի :

Երբ մարդ հեռաքնակ լինի այն անձէն , առ որ կ'ուզէ այցելել , իւր այցեւորմը կը զրկէ :

Ընդհանուր սովորութիւն է , որ տեղ մը նոր գացողները նախապէս իրենք յայց կ'եննեն առ ընտանիս տեղւոյն , որով ազատ կը մնան իրենց ըն-

կերական չըջանալն ըստ կամաց իւրեանց որոշել եւ կարգադրել :

Փոխադարձ այցելութեան երկար կամ կարճ ժամանակամիջոցէն կը յայտնուի , թէ անձի մը կամ ընտանեաց հետ այցելութեանց փոխարինութիւնք փափաքելի՞ են , թէ՛ ոչ : Երբ մարդ ուզէ բարեկամական պարզ յարաբերութիւն մ'ունենալ՝ իւր փոխադարձ այցելութիւնը մէկ երկու եօթնեկէ ետքը կը կատարէ . իսկ եթէ այդ այցելութիւնն ամիս մը յապաղի , յայնժամ ըսել է թէ շատ նուազ արժէք տրուած է այցելութեանն , եւ այս՝ կսկծեցուցիչ է : Ընդհակառակն՝ եթէ փոխադարձ այցելութիւն մը , եօթնեկէ յառաջ կամ մէկ քանի օր ետքը տեղի ունենայ , դժպիսի եւ անպատշաճ այց մ'ըլլալովն հանդերձ , սովորութից եւ պատշաճից դիտակցութեան պակասութեան նշան է : Ընդհանրապէս , տեղ մը նոր դացողին փոխադարձ այցելութիւն մը մէկ եօթնեկէ ետքը պէտք է կատարի . այդ ժամանակամիջոցէ յառաջ տրուած այցն անզէպ է , իսկ աղկից անագան՝ վիրաւորիչ :

Պարզ այց մը մէկ քառորդ ժամէ աւելի տւելու չէ : Այս կանոնն , ո՛չ միայն աստ խօսուած այցելութեանց , այլ ամեն պաշտօնական այցից համար պահանջելի է :

Եթէ ո՛ք փոխադարձ այցելութեան մը յապաղման համար ներումն խնդրել ուզէ , աւելի լաւ է որ ցոյց տալիք պատճառն առանց կասկածելի ընելու ըսէ : Շատ զգայականութիւն ալ ցուցնելու չէ , վասն զի յայնժամ ըսել ուզած կը լինի թէ ո՛րչափ մեծ կարեւորութիւն կուտայ նոյն անձին , յորմէ

ներումն կը խնդրէ : Ընդհակառակն՝ պէտք է այսպիսի պարագայի մը մէջ ի չափաւոր ներողամտութիւն հարկադրել , եւ խօսակցութեան մէջ , կամ լաւ եւս՝ մասնաւորապէս մեկնելու ատեն վերոյիշեալ յապաղման պատճառին համար անկեղծաբար ցաւ յայտնել : Այսու ամենայնիւ օրինաւոր արդարացուցմունք իրօք ընդունելի են , վասն զի շատ անգամ , հակառակ մեր կամաց եւ հաշուոց այնպիսի դէպքեր տեղի կ'ունենան որ պատճառ կը լինին այցելութեան մը յապաղման :

Այս պարագայի մէջ պէտք է ներող աչօք նայիլ այնօրինակ անհողութեանց վրայ , առանց սակայն ո՛ր եւ է կերպիւ զանձն ստորնացընելու . եւ վերոյիշեալ պատճառներուն աչք դոցել , վասն զի չափազանց զգայականութիւն անյարմար է ընկերական յարաբերութեանց մէջ . երկկողմանի վշտակցութեան տեղի կուտայ եւ ընկերական յարաբերութեանց ճշմարիտ նպատակը կ'անհետի :

Այցելութեան ժամն որոշելու համար լաւ է եւ սովորական որ տեղեկութիւն առնրուի կանխաւ թէ սովորաբար ժամը քանի՛ն կը ճաշէ այն ընտանիքն՝ առ որ կ'ուզուի յայց ելանել . եւ ըստ այնմ որոշել այցելութեան ժամն , այնպէս որ տան տիկինն՝ յետ ընդունելութեան՝ մինչ ցժամ ճաշու գոնէ կէս ժամ ժամանակ ունենայ տնական կարգադրութեամբք զբաղելու :

Սակայն եթէ մարդ այցելել ուզած ընտանեաց տնական կարգադրութեանց անտեղեակ լինի , բայց իւր ներքին յարաբերութիւնք մտերիմ լինին , կըրնայ այցելել . միայն այս պարագային մէջ՝ յետ մի-

Չօրէի ընդ մէջ 3-5 (Բ. Լ.) ժամուց : Առ նշանաւոր մարդիկ այցելութեան ժամն է 12¹/₂-1 : Գլխաւորապէս կանոն է այն ժամուց մէջ յայց երանել , յորս կ'ընդունուին այցելութիւնք : Բայց խիստ մը տերիմ ընտանեաց համար պէտք չէ այսչափ ուշադիր լինիլ այցելութեան ժամուց :

Որպէս ըսինք , պարզ այց մը մէկ քառորդ ժամէ աւելի տեւելու չէ . հետաքրքրական խօսակցութեան մ'ատեն իսկ այցին տեւողութիւնը չերկարելով , ջանալու է շուտով վերջացնել խօսակցութիւնը . վասն զի շատ անպատշաճ կը լինի խօսակցութիւնը կիսատ թողլով մեկնել :

Մեկնելու յարմար վայրկեան պէտք է նկատել երբ խօսակցութիւն մը կը վերջանայ . ուստի ուրիշ խօսակցութեան մը սկսելէ յառաջ մէկ երկու երկվայրկեան լուռ կենալով , պէտք է ոտք ելնել . այս՝ այն պարագային համար է , յորում մարդ իւր այցի ատեն առանձին կը դանուի եւ կը մնայ այնպէս : Եթէ ուրիշ այցելու մը ներս մտնէ , մարդ այս առիթէ օգուտ քաղելով տան տիկնոջ հրաժեշտ կուտայ , եթէ մինչեւ իսկ տասն վայրկեան հազիւ նստած լինի , եւ զնորեկ հիւրն թեթեւ խոնարհմամբ մը կ'ողջունէ :

Տիկնայք *) ակնածական հաճոյատեսիլ խոնարհութիւն մը կ'ընէին իբրեւ նշան խորին յարգանաց , բայց այդ ձեւը դադրած է այժմ : Տիկին մը պար-

*) Ամուսնացելոց եւ ո'չ ամուսնացելոց համար , ընդհանուր առմամբ տիկին բառը գործածուած է այս գրքի մէջ :

զապէս կը խոնարհի , առանց մարմնոյն վերի մասն ծռելու , որպէս արանց մէջ սովորական է այս շարժումն : Արդարեւ շնորհալի եւ արժանապատուութեամբ խոնարհում մը , նշան է բարեկրթութեան : Ուստի այդ շարժումն պէտք է խնամով եւ պատշաճապէս գործածել . ազոր յարմար ատենն է պարուց ինչպէս նաեւ մեծայարգ ակմբոց սրահն մտնելու ժամանակ :

Տանը տիրուհին՝ հիւրընկալութեան օրը՝ պատուոյ սրահին մէջ կ'ընդունի այցելուները , կամ բազմոցի կամ թիկնաթոռի մը վրայ կամ կրակին մօտ եւ կամ այլ տեղ նստած : Եթէ նշանաւոր կին մը կամ տարիքոտ տիկին մը լինի այցելուն , տան տիրուհին իւր տեղը նմա կը թողու , որպէս միշտ պէտք է հոգ տանիլ պատուոյ տեղը տարիքոտ տիկնայց տալու : Եթէ տարեւոր տիկին մը՝ քաղաքավարութեան համար՝ դեռատի տիկնոջ մը ներս մը տած ատեն ոտք ելնէ , սա՛ շնորհակալ լինելով այդ պատուասիրական ցոյցէն , անարժան ցոյց տալու է զանձն : Տարեւոր տիկին մը կրնայ իրեն նուիրեալ պատուոյ տեղն առանց ո՛ր եւ է յարգական շարժման ընդունիլ . ապա թէ ոչ՝ պայքար մը կը լինի ընդդէմ համեստութեան եւ քաղաքավարութեան :

Նոքա՝ որք տան տիրուհւոյն մտերիմն են , քիչ մը ետքը ներս կը մտնեն , որպէս զի այլք ժամանակ ունենան առ նա մօտենալու :

Եթէ այցելուն դեռատի օրիորդ մ'է եւ տան աղջկանց ծանօթ , պարզաբար սովորական ձեռաց պնդումով մը կը բարեւեն զմիմեանս . իսկ ընտանեաց տարեւոր անդամոց ձեռք երկնցնելու չէ մին-

չեւ որ նոքա ձեռք չկարկառեն : Դեռատի տիկին մը , ընտանեաց որդւոց եւ եղբարց եւ երիտասարդաց հետ քաղաքավարական պարզ բարեւ մը միայն փոխանակել պարտի : Բարեկիրթ երիտասարդք եւս գիտնալ պարտին , թէ օրիորդի մը հետ ընտանեբար ձեռաց պնդում մը դժպէի է :

Եթէ դեռատի օրիորդ մը ոտքի վրայ դըտնուող տարեւոր տիկինէ մը հարցում մ'ընդունի , պարտի ինքն ալ ոտք ելնել , եւ կանգնեալ պատասխանել ցորժամ հարցանողն իւր տեղը չնստիր : Երբ տիկինն յատկապէս խնդրէ որ օրիորդը նստի , սա առանց բառ մ'ըսելու կրնայ նստիլ . սակայն միշտ ընդունելի է որ օրիորդ մը մեղմիւ եւ չնորհօք չընդունի նորա խնդիրն եւ յտին կանգնեալ մնայ մինչեւ որ տարեւոր տիկինը նստի :

Ճաշի , երեկոթի կամ այս տեսակ հրաւիրագրոց ստորեւ Պ. Խ. Է. (պատասխանը խնդրելի է) տառերը կը նշանակուին , որով հրաւիրեալն եթէ չկարենայ ներկայ գտնուիլ , պարտի պատասխանել շուտով , որպէս զի հրաւիրողը ժամանակ ունենայ իւր հրաւիրելոց թիւն այլովք լրացնել : Իսկ հաճութեան պատասխան մը պէտք չէ փութանակի յղել , վասն զի հրաւիրողն՝ եթէ անմիջական պատասխան մը չընդունի , իրաւունք ունի հաստատական նկատել զայն . եւ այս պարագային մէջ բաւ է պարզ տոմս մը զրկել : Բայց հաճոյագոյն եւ քաղաքավարական կը լինի , երբ հրաւերի ընդունելութիւնը նամակաւ հաղորդուի :

Յայտնի է , թէ ճաշի որոշեալ ժամուն պէտք է ներկայ գտնուիլ ճշդիւ : Որոշեալ ժամէն յառաջ

երթալն անդէպ է , իսկ ուշ երթալն ալ բարեկըրթութեան հակառակ լինելով հանդերձ , խորին անարգանք մ'է ոչ միայն հրաւիրողին , այլ անդ ներկայ գտնուող ընկերութեան : Եթէ ուշ գացող անձը հրաւիրողին համահաւասար բարձրաստիճան մէկն է , նորա ուշ երթալը մասնաւոր յաւակնութեան նշան կը համարուի , որ ընկերական շրջանակին մէջ անվայել է : Բարձրաստիճան անձի մը դիրքը պատճառ չէ իրեն որ քաղաքավարական պարտուց զանցառու լինի . ընդհակառակն՝ աւելի բարձր կրթութիւն մը եւ օրինակելի վարք մը կը պահանջէ իրմէ , եւ ընկերական յարաբերութեանց ձեւակերպութեանց աննկատողութիւնք՝ կրթութեան եւ դատողութեան պակասութեան նշան են , որք այնչափ առաւել աչքի կը զարնեն , որչափ բարձր լինի այդ անձի դիրքն :

Պարահանդէսի համար եղած հրաւերք կարելի եղածին չափ վաղ կը լինին եւ բացման ժամը նշանակեալ :

Պարահանդէսէ , երեկոթէ կամ հացկերութէ մէկ քանի օր ետքը , սովորական է յայց ելանել առ հրաւիրողն . մասնաւանդ այն ատեն՝ երբ ընդունուած հրաւերին անձամբ պատասխանել կարելի եղած չէ : Սակայն պետական-պաշտօնական հանդէսներէն մէկ շաբաթ յետոյ կատարել անհրաժեշտ է այդ քաղաքավարական պարտաւորութիւն :

Երբ մարդ այց մը անձամբ կատարել չկարենայ , իւր այցետոմսը կը զրկէ : Այցետոմսից համար զանազան կանոնք արժանի են նկատառման :

Մարդ պէտք է միշտ իւր վրայ պատրաստ ունենայ իւր այցեւորման :

Այցեւորմանը պէտք է ընտիր թղթի վրայ գեղեցիկ տպուած լինին , ընթեռնլի տառերով : Գունաւոր կամ ձեռագիր այցեւորմանը սովորաբար անյարգ են :

Այցեւորման անձամբ տրուած ատեն , պէտք է մէկ ծայրը դէպ ի գրեալ կողմն կտորել :

Այցեւորմանից անկեանց վրայ նշանակեալ կան , այց , շնորհաւորութիւն , գործ եւ հրաժեշտ բառերն , որով կտորուած անկեան վրայ գտնուող բառէն այցելութեան պատճառը կը յայտնուի , բայց տակաւ կ'անհետի այս սովորութիւն :

Գեռատի օրիորդք իրենց համար մասնաւոր այցեւորման չեն կրնար ունենալ : Եթէ իրենց ծնողաց ընկերակցութեամբ այցելեն , ներելի է յայնժամ իրենց հօր կամ մօր այցեւորման վրայ իրենց անունը յաւելուի :

Գաղղիացի կանայք , որոց ձեւակերպութեանց ընտրական ճաշակին կը հետեւինք , այցեւորմանից գործածութեան մէջ՝ իբրեւ ամուսնացեալ՝ այնչափ յառաջ կ'երթան , որ դոցա վրայ իրենց անուան հետ , իրենց ամուսնոց ընտանեկան անուան սկզբնատառը կը դնեն . որպէս՝ Տիկին Ժիւլի Պ. :

Այլք եւս , եւ գլխաւորապէս գաղղիացի դեռատի կանայք , իրենց այցեւորմանից վրայ փոխանակ իրենց անուան՝ իրենց ամուսնոց անունը կը դնեն . որպէս՝ Շառլը Թ. :

Այս՝ անօրինակելի սովորութիւն մ'է , վասն զի այդ կերպով շատ չփոթութիւնք կը ծագին .

մասնաւանդ թէ անբնական է եւ ականջի գէշ կուգայ , երբ կանայք իրենց արանց անունը գործածեն :

Խիստ անպատիւ բան է նաեւ երբ տիկին մը իւր այցեւորման վրայ բնակատեղին ալ նշանակէ :

Այր եւ կին , որ միատեղ յայց կ'ելնեն , աւելի պարզ եւ վայելուչ է որ երկուքին ալ անունները կրող այցեւորման պատրաստել տան . որպէս՝ Բժիշկ Սայտէլ եւ կինն :

Բնականաբար այցեւորման կը ձգէ մարդ երբ չը գտնեն այն անձն առ որ յայց ելած է :

Արք իրենց այցեւորմանից վրայ իրենց անուան հետ , իրենց տիտղոսն ու պաշտօնն , իսկ կանայք՝ միայն իրենց անուան հետ ընտանեաց անունը նշանակել պարտին :

Միեւնոյն թաղին մէջ թղթատարութեան միջոցաւ շնորհաւորական տոմս ղրկել՝ նոր տարւոյ առթիւ միայն ներելի է : Սակայն այդ տոմսն սպասաւորի մը ձեռք ղրկելն աւելի քաղաքավարական է :

Եթէ ընտանիք մը միայն տիկիններէ բաղկացած լինի , այդ գտնուող ուրիշ ընտանիքի մը այցեւորման ղրկելու չէ : Իսկ եթէ նախապէս այդ ընտանիքը կատարած լինի քաղաքավարութեան այդ պահանջումն , յայնժամ տիկնայք կրնան փոխաւրինել :

Եթէ ոք նշանտուութեան , ծննդեան կամ մահու ծանօթագիր մ'ընդունի եւ ի մօտոյ չկարենայ այցելել առ այն ընտանիքն , ի նշան ընդունելութեան իւր այցեւորման կը ղրկէ :

Յայց ելնել պարտիմք խօսեցելոց , նոցա առ մեզ այցելելէն յետոյ :

Մահու գուժագիրն ընդունելէ ետքը , պէտք

է վախճանելոյն ընտանեաց յայց ելանել, վասն զի անմիջական եւ անձամբ այցելութիւն մը ճշմարիտ ցաւակցութեան ապացոյց մ'է :

Եթէ ոք սգառիթ լուր մ'առնու ի հեռուստ մի ընտանիքէ, որոյ հետ մտերմական յարաբերութիւն ունեցած է, պարտի անմիջապէս միսթարական գիր ղրկել : Բնականաբար այդ գրուածոց մէջ զգուշանալով ուրախառիթ բառերէ, ջանալու է պարզ, բնական եւ ճշմարիտ ցաւակցական ոճով գրել : Մննդեան զեկուցագիրն արանց կողմանէ կը ղրկուի : Մահուան ծանուցմանց մէջ, ազգականաց եւ մանաւանդ հեռուոր ազգականաց անուաները, տիազոսներն եւ արժանիքը գովաբանել փոքրոգութիւն է . իսկ ընդհակառակն պէտք է, որ եւ է չփութութեան տեղի չտալու համար, վախճանելոյն տխորոսն, արժանիքն ու պաշտօնը նշանակել :

Նշանտուութեան եւ ամուսնութեան ծանօթագիրք երկու օրինակ կը ղրկուին, երբ հարսին ու փեսային ծնողք չեն մեռած : Մին՝ փեսային ծնողաց կողմանէ՝ իրենց որդւոյն, իսկ միւսն՝ հարսին ծնողաց կողմանէ՝ իրենց աղջկան նշանտուութիւնը կամ ամուսնութիւնը զեկուցանող : Եթէ այն անձն, առ որ կը ղրկուի ծանօթագիրն, երկու ընտանեաց մին միայն կը ձանչնայ, յայնժամ անծանօթ ընտանեաց տոմար, ծանօթ ընտանեաց նա՞մակին մէջ կը ղրուի, որով զիրն ընդունողը նախ իրեն ծանօթ եղող ընտանեաց անունը կը տեսնէ :

Գ Լ Ո Ւ Թ Բ .

Զէն Է' Գ
Եւ Ի՞նչ անդիւր Վարձաբեր,
Ի հանդէս ոչորի բերես արժանիք :

ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՎԱՐՄՈՒՆՔ

Բացարձակապէս նոյն իսկ մենէ կախումն ունի, որ այլք զմեզ հաճելի դատեն եւ սիրեն, կամ տաղտկալից եւ ձանձրացուցիչ ոք նկատեն զմեզ : Շատ պարագայից մէջ մեր վարուց նայելով վճիռ կուտան, որ շատ անգամ մեր ամբողջ կենաց կ'ազդէ :

Պէտք է որ մարդ ըստ կարելւոյն զգոյշ լինի իւր անձին վրայ խօսելէ եւ երբէք կարծեցեալ գերզանցութեան վրայ ամբարտաւանելու չէ . ընդհակառակն մարդ պարտի ձանչնալ իւր նմանեաց լաւ ձիրքերն, յարգել նոցա կարծիքն եւ նոցա հետ ունեցած յարաբերութիւնը կատարելապէս քաղցր ընել :

Ո՛չ ոք երբէք մէկու մը սուտը երեսին տալու չէ . քանզի կսկծեցուցիչ է :

Պէտք չէ որ տիկին մը բարձրաձայն եւ աղմուկաւոր խօսի :

Կարգ մ'անձինք կան , որ միշտ տհաճելի են , թէպէտ նոցա բարի ձիրքերն կը գովեմք : Ինքնահաւանք են դոքա . ինքնահաւան ոք միշտ անբարեկիրթ կը ճանչցուի , եւ այս ալ կարի բնական է : Միայն ինքզինքին հաւնած է . նորա սիրելի են իրեն համար աւելի բարձր կ'արժէ քան փափուկ հայեացք մը իւր նմանեաց վրայ : Նորա դատողութիւնը միայն յարգելի է . ինքն է լաւագոյն . ինքն է իմաստնագոյն անձն եւ կարեկցութեամբ կը զիտէ բարձրէն այլոց կարծիքն :

Ինքնահաւան տիկին մը ծիծաղական է . ինքզինքը կը դաւանի կարող ամենայնի որ մեծիմաստ մարդոց գործք են , եւ իւր յիշողութեան մէջ բազում աննշան գիտնոց անուանք կան , որոց մասնաւոր յարգ կ'ընծայէ . գարմանալի չէ որ ինքնահաւան տիկնայք խորշելի կը լինին եւ վերջապէս կը լքանին : Ո՛վ կը զիջանի կամաւ ենթարկիլ տիկնոջ մը խստութեանց :

Պէտք է որ հեղահամբոյր բարեկամութիւն մը , մեր նմանեաց հետ ունեցած վարմանց գլխաւոր հիմն լինի :

Ուստի ընկերային ակմբոց մէջ հաճելի լինելու համար , բացարձակապէս անհրաժեշտ է , սուտնին եւ ընկերական շրջանակաց մէջ միշտ հեղաբարոյ եւ ուշադիր ցոյց տալ դանձն : Այդ սիրալիր վարմունք պէտք է որ ազատ եւ ինքնաբերաբար լինի , եթէ կ'ուզէ մարդ որ հաճելի տպաւորութիւն մ'ընէ իւր շրջակայից վրայ . վասն զի ինչ որ սրտէ

կը բղիւի ինքնաբերաբար , կը ներդործէ սրտից եւ հաճոյք կ'ազդէ : Այս ճշմարիտ սիրալիր , շնորհալի եւ քաղցրահայեաց վարմամբ , օրիորդ մը կրնայ ընկերային ակմբի մը մէջ՝ արտաքուստ նպաստաւոր փայլ մը տալ անձին , եւ այդ փայլ նորա անձին մասնաւոր նախապատուութիւն մ'ընծայելով ստուերի մէջ կը սքողէ նորա պակասութիւններն ու տկարութիւնները : Բնական վեհերոտութիւն մը , կարի յոյժ կը վայլէ դեռատի տիկնոջ մը , քան արուեստական դժնեղիմութիւնն եւ տխմար տկարամտութիւնը , վասն զի բնական վեհերոտութիւնն ինքնաբեր է եւ յատկանիշն է սրտի անբուժեան եւ ինքնաճանաչութեան : Ուստի դեռատի տիկին մը պէտք չէ որ յանձնապաստանութեամբ կամ յանդուգն համարձակութեամբ ներս մտնէ այն սըրահէն , ուր ընկերային ակումբը մը կայ . այլ պարտի կիսահակ աչօք , հանդարտութեամբ , պարկեշտ դէմքով եւ աննենդ ու սիրալիր ժպտով , իւր ծընողաց կամ աղգականաց միտն քով գտնուած ներս մտնէ : Եթէ առն միոյ թեւը մտած է , պէտք է որ շատ չկրթնի կամ չկախուի , այլ ուղիղ զիրքով այնպէս քալելու է , որ իւր ընթացքն փոքր ինչ տատանեալ յանկուցիչ լինի . իւր ձեռներն ընդունայն երեքընելու չէ . աւելի շնորհալի կը լինի երբ գեղահիւս թաշկինակ մը կամ ծաղկեփունջ մը բռնէ : Սրահը մտած ատեն , սովորութիւն է խոնարհութիւն մ'ընել ներկայից , ապա տանտիրուհոյն եւ աղջկանցը զիմել բարեւելու համար զնոսա :

Սրահը մտնելէ ետքը , նոյնպէս ներկայից մէջէն իրենց երկուքէն միոյն ծանօթ եղող անձանց

առջեւէն պէտք չէ անտարբերութեամբ անցնելով ուղղակի տանտիրուհւոյն դիմել . այլ պէտք է գըլխոյ թեթեւ խոնարհմամբ բարեւել զնոսա , բայց չխօսիլ ընդ նոսա , եւ տան տիրուհւոյն երթալ պէտք եղած քաղաքավարական ձեւերը կատարելէ յառաջ :

Տան տիրուհւոյն հետ սովորական ողջոյնատուութիւնը կատարելով ակմբին մէջ նստելէ ետքը , իւր ծանօթները վնասուելու համար տեղէն ելնելու չէ անմիջապէս , այլ ազոր համար յարմար առթի մը սպասելու է :

Նթէ ակմբի սրահէն ներս արք մտնեն , տիկնայք նոցա բարեւն ընդհանրապէս գլխոյ խոնարհմամբ փոխարինելու են . սակայն եթէ նորեկը տարիքոտ կամ նշանաւոր անձ մ'է , ոտք ելնելով ընդհատելու է խօսակցութիւնը : Նորա նստելէն ետքը նստելու են ե'ւ այլք , որով մեծ յարգանք մը ըրած կը լինին :

Գեոատի տիկին մը , քաղցր ձայնով մասնակցելու է այն խօսակցութեան որ ներկայից հաճոյ թուած է , եւ այդ խօսակցութեան մէջ ցոյց տալու է իւր տաղանդն , զգոյշ լինելով սակայն ուրիշ նիւթի մը վրայ խօսելէ : Երբ բան մը հարցուի իւրեն , կրնայ ազատօրէն եւ համարձակ կերպով արտայայտել իւր կարծիքն , ուչ զնելով որ ներկայից կարծեաց հետ ներդաշնակին , եւ խօսակցութեան նիւթէն չհեռանալ :

Ինչպէս որ կինը , տան հողին է եւ մասնաւորապէս իրմէ կախումն ունի տան ներքին վիճակը , նոյն է նաեւ ընկերական յարաբերութեանց հա-

մար : Կնոջ գլխաւոր ջանքը պիտի լինի հիւրոց հաճելի եղող զուարճութեան համար ամենայն ինչ հոգալ : Տան մը գեղեցկագոյն զարդը , շրջանկատ տանտիկնոջ մը լռիկ , հոգատար եւ սիրալիլ կառավարութեան արգասիքն եղող հաճելի անդորրութիւնն է : Այս բարեյարդար անտեսութիւնը պէտք է մեծարուի ամենէն եւ ըստ այնմ ամէն ոք փոյթ յանձին ունենայ սիրալիլ կերպով երախտապարտ լինիլ ամէն այս ճգանց :

Խօսակցութեան մ'ատեն , ո'չ միշտ միայն նիւթն' այլ միանգամայն խօսակցութեան , խորհրդակցութեան եւ քննադատութեան եղանակը գիտելի է : Մտաւորական այդ յատկութիւնը՝ ընկերային ակմբոց մէջ՝ էական պայման մ'է : Պէտք չէ խօսիլ միշտ՝ մասնագիտութեան առարկայ եղող նիւթոց վրայ միայն : Բարեկիրթ անձանց պարտ է ընկերութեան մէջ համեստ լինիլ , եւ մասնաւոր իրմէ նուազ զիտուն կարծեցելոց համակարծիք ցոյց տալ զանձն : Այդպէս՝ կը զիւրանան տանտիրուհւոյն պարտքն առ այցելուս : Բնական է , թէ տան տիրուհին կը ճանչնայ զնրաւիբեալսն . ուստի պէտք է կանխաւ հոգ տանիլ որ այն անձինք , որք միմեանց հետ լաւ յարաբերութեանց մէջ չեն , իրարու քով չնստին . նոյնպէս եւ պարտի միմեանց ճանչցընել ջանալ այն անձինքն՝ որք անձանօթ են մէկմէկու : Այդ ծանօթացուցման ատեն միշտ պէտք է այրը՝ տիկնոջ , օրիորդը՝ տիկնոջ , այսինքն փոքրը մեծին ներկայացընել : Այսպէս՝ սովորութիւն է բարձրաստիճան անձանց եւ կամ այն անձին , որոյ մասնաւոր պատիւ մ'ընել կ'ուզուի , միայն այլոց

անուանները տալ : Երբ երկուստեք զիրքով եւ տես-
քով հաւասար լինին , պարզապէս նորեկը ներկա-
յին կը ներկայացուի : Բարձրաստիճան եւ բազմա-
ծանօթ անձինք բնականաբար անուանակոչու-
թեամբ չեն ներկայացուիր , ենթադրելով թէ նոքա
ծանօթ են ներկայից : Մեծ եւ բարձր ակմբոց մէջ
երբէք ներկայացուցումն չլինիր . այդ պարագային
մէջ տանտիրուհին կը ջանայ լռելեայն իմն իւր հրա-
ւիրելոց ծանօթացընել ներկայ գտնուող օտարականի
մ'անունն , որպէս եւ ակմբի անդամոց գլխաւոր-
ները ճանչցնել նմա : Պատահաբար խօսք մը կ'ուղ-
ղէ առ նա , կոչելով նորա անունն իւր պատկան
տիտղոսին հետ եւ յետոյ զանազան հարցում-
ներ կ'ընէ հրաւիրելոց , միշտ նոցա անունները տա-
լով :

Եթէ բարձրաստիճան կամ ուրիշ ո՛ր եւ է նա-
խապատուութիւն մ'ունեցող հրաւիրեալ մը չյար-
գուի արժանապէս , սիրազեղ տանտիրուհին պէտք
է ջանայ մասնաւոր ուշադրութիւն մը նուիրել առ
նա , այնպէս որ տեսանելի լինի յայլոց :

Այսու ամենայնիւ , այդ պատճառաւ տանտի-
րուհին այդ անձին հետ ունեցած խօսակցութիւնը
պէտք չէ երկարէ , այլ յոյժ կարճ ընելու է : Պէտք
է նաեւ ջանալ ո՛չ միայն խօսակցութիւնը ներկա-
յից կողմանէ հետաքրքրեալ նիւթի մը վրայ դար-
ձընել , այլ քաղցրացնել զայն հաճոյ եւ սիրալիր ու
շնորհալի դէմքով ու գիրքով :

Սակայն , որպէս ըսինք , հիւրերն ալ պարտին
այդ սիրալիր հոգածութեան երախտապարտ գոլով ,
մատչիլ միմեանց անսենդ : Գլխաւորապէս այն տիկ-

նայց համար կ'ըսեմք , որ կը կարծեն թէ արուես-
տակեալ դժնեղիմութեամբ իրենց ազդեցութեան
մասնաւոր զարկ մը կուտան , բայց կը սխալին .
վասն զի իրական սեռի ճշմարիտ ազդեցութեան
բարձրագոյն եւ աղնիւ տարրն է շն ու ր հ ք եւ ար-
ժան ա պ ա տ ու ու թ իւ ը ն : Սակայն ընդ մէջ
բարձրագունին եւ ծիծաղականին քայլ մը միայն
կայ . զայս գիտնալ պարտի մարդ միշտ : Արուես-
տակեալ դժնեղիմութիւնն ո՛չ միայն ծիծաղական
այլ խոտելի կ'ընէ զանձն եւ արտայայտութիւն չէ
շնորհաց եւ արժանապատուութեան :

Ընդհակառակն՝ արուեստակեալ դժնեղիմու-
թիւնն ու գոռոզութիւնը քանի՛ անհեթեթ , կսկը-
ծեցուցիչ եւ անմիտ պատկեր մը կը ներկայացնէ :
Այդու՝ իմացականութիւնն որ ներքին ճշմարիտ
ճանաչողութեան արդիւնք է՝ կը կորսուի : Գատա-
պարտելի է ո՛չ միայն միակողմանի կրթութիւնն ,
այլ արագ եւ վաղահաս բարձրացումն ու փառա-
ւորութիւնն անդր քան զսահման եւ զչափ բուն ար-
ժանեաց : Բազումք չեն կրնար տանիլ այդ փու-
թանակի եւ անակնկալ բարձրացումն եւ կը զեղ-
ծանին . կը մթազնի իրենց ճշմարիտ ճանաչողու-
թեան լոյսն եւ տակաւ կ'անհետի , մինչեւ որ վեր-
ջապէս անզգայութիւնը կը հասնի , որ ոչ միայն
իւր մերձակայից այլ նոյն իսկ յանձին կը ծանրա-
նայ . եւ երանի՛ այնմ որ կրնայ այդ անկրելի բե-
ռը իւր անձէն եւ ուրիշներէն հեռու պահել : Մաս-
նաւոր պարագայից մէջ կը կրկնապատկի այդ բե-
ռը եւ միշտ լաւ կրթութեան մը , յստակ մտքի եւ
ճշմարիտ աղնիւ ոգւոյ գոյութիւն ցոյց կուտայ , ո-

բում իւրաքանչիւր ոք արժանի պատիւը կ'ընծայէ ինքնարեւոյժար :

Ընկերային ակմբոց մէջ բնականաբար արք պարտին մօտենալ կանանց ամենայն յարգանօք եւ սկսիլ խօսակցութեան : Որովհետեւ արք մեծ ազատութեան տէր են , պարտին փափուկ նկատողութիւն ունենալ կանանց հետ խօսակցած ատեն . այդ խօսակցութեան ատեն փափկութիւն եւ ուշմութիւն անհրաժեշտ են առաւել քան այր ընդ այր խօսակցութեան ատեն . վասն զի արք կանանց հետ խօսած ժամանակ գուշակել սչարտին շատ բան , զորս արանց հետ գտնուած ատեն բացարձակաբար ըսել ներելի է : խօսակցութեան նիւթը կանխաւ որոշեալ չլինելով , արանց բարեկրթութենէն եւ ուշմութենէն կախեալ է զիտնալ թէ այս կամ այն տիկին՝ ի՞նչ նիւթ է կ'ախորժի առաւել : Ընթերցման , թատերց , նուագաց , գիտութեան , ճանրորգութեան , արուեստից , ընութեան գեղեցկութեանց կամ պարզապէս գիտական կամ անական խնդրոց , վերջապէս ի՞նչ բանի վրայ որ լինի , միշտ պէտք է կատարեալ եւ հաւասար ախորժանօք եւ եռանդով խօսակցիլ , վասն զի եթէ խօսակցութիւն մը հետաքրքրական եւ հրահանգիչ լինի , օգտակար կը լինի եւ կը գոհացնէ երկու կողմն ալ . եւ այդ իսկ է խօսակցութեան նպատակը :

Մանկամարդ օրիորդի մը ներելի չէ , որ շարունակ մի եւ նոյն անձի հետ խօսակցի մեկուսի : Գրեթէ նոյնչափ անպատշաճ եւ անընդունելի է՝ այնչափ ցած ձայնով խօսիլ որ մերձանիստ անձ մը չկարենայ բառ մ'իսկ լսել : Գեռատի տիկնոջ մը

որչափ փափաքելի եւ հաճելի լինի մասնաւոր յարգանաց եւ սքանչացման առարկայ տեսնել զինքն , պարտի եւ ո՛չ մէկ կերպիւ զգալի ընել զայդ փափաք , վասն զի այդու շատ դիւրաւ կը մլասի եւ օրիորդ մը քանի՛ յաճախ այդպիսի անխորհուրդ եւ անմիտ վարմամբ մեծապէս կը մլասէ անձին . վասն զի տիկնայք իրենց մէջ այնպիսի անվերջանալի սուր լեզու մ'ունին , որ երբեմն շատ հակամէտ են , անխոհեմութեամբն իրենց խճրճանաց եւ քըննադատութեան թակարդին մէջ խնող կարի յոյժ անմեղն իսկ անխնայ զրպարտել : Այդ անմեղներն զիրենք պաշտպանելու համար դեռ անփորձ լինելով , այդ լեզուք դիւրաւ գործ կը տեսնեն : Այդ տիկնայք մէկու մը ետեւէն անդգոյճ զրպարտութիւններ ընելով եւ վճիռներ արձակելով կը յուսան մէկգմէկ դերագանցել ի մեծարանս : Իգական սեռին ամենամեծ տկարութիւնն է այդ , եւ մախանքըն որ ընդհանրապէս տարածեալ է ի նոսա , մասնաւորապէս կանացի կիրք մ'է : Այդ կանացի տրկարութիւնը վտանգաւոր իսկ է , վասն զի ամենաբարձր զրից մէջ իսկ կը ստորնացընէ զմարդ , որով բարի բնաւորութիւնք ամբողջապէս ապականելով , բազում անպատշաճութիւն յինքն կը ձգէ : Կանացի այդ սոսկալի տկարութիւնը կարելի է միայն սիրոյ ճշմարիտ բարի եւ աղնիւ դաստիարակութեամբ ի բաց վանել . վասն զի ուր սէր չկայ , չկայ ո՛չ ինչ . ուր սէր չէ սերմանեալ՝ կարելի չէ սէր քաղել եւ բնականաբար այդ անմշակ ու անցան վայրն մախանօք , անիրաւութեամբ եւ մինչեւ իսկ դձձութեամբ կը լցուի : — Արք դատեն ըստ

իրաւանց . կնոջ վճիռն իւր սէրն է . ուր որ կինը
չսիրեր , տուած է իւր վճիռն » : - « Կանայք կրնան
սիրել եւ ատել . բայց արդարադատ լինիլ առանց
սիրելու՝ այդ իմաստուն արուեստն ո՛չ կը յարգեն
եւ ո՛չ կը սովորին » : Շիլլեր :

Օրիորդք՝ ի սրահս՝ ի՛նչ պարագայի մէջ ալ որ
լինին , երբէք բարձրաքրքիջ խնդալու չեն . այլ նե-
րելի է միայն քաղցր ժպիտ մը : Նոյնպէս անպատ-
շած է որ տիկնայք իրենց մէջ ցած ձայնով խօսին .
վասն զի այդու ո՛չ միայն ընկերութեան մէջ զրտ-
նուողք կրնան կարծել թէ իրենց վրայ կը խօսին
կամ կը ծաղրեն զիրենք , այլ քամահրանք մը կը
համարուի ընկերութեան միւս անդամոց դէմ : Տիկ-
նայց ծաղրն ընդհանրապէս իրենց տկարամտու-
թեան նշանակն է . եւ ապացոյց իւրեանց սառնու-
թեան եւ անզգայութեան : Սրտի , մտաց եւ ոգւոյ
տէր եղող տիկնայք երբէք չեն ծաղրեր . ինքզինք-
նին բարձր կը զգան այդ ստորին եւ անմիտ տկա-
րութենէն : Նմանապէս շատ վտանգաւոր է մէկու
մը դէմ խօսիլ ի բացակայութեան նորին . վասն զի
որու համար որ կը խօսուի՝ նա կրնայ տեղեկանալ
եւ ա՛յնպիսի կերպիւ վրէժն առնուլ , որ կարելի է
ծաղրողաց շատ անհաճոյ լինի :

Ընկերական ակմբի մը մէջ , եթէ դեռատի տի-
կինէ մը տեղեկութիւն խնդրուի ա՛յն դիպաց վրայ
զորս զիտէ , կրնայ համարձակապէս պատասխանել .
սակայն եթէ անտեղեակ դսնուի եւ կամ ապահով
չլինի հանդարտութեամբ եւ պարզութեամբ պատ-
մելու զայնս , յայնժամ աւելի լաւ է , քաղաքավա-
րութեամբ եւ համեստութեամբ չընդունիլ զայդ

խնդիր : Իսկ եթէ կրնայ կատարել այդ խնդիրն ,
ո՛չ թէ սեթեւեթիւ , այլ քաղցր , հաճելի եւ հա-
մեստ եղանակաւ , որպէս վայել է տիկնութեան :
Որպէս ըսինք , միայն խօսքի նիւթը չէ նկատելի ,
այլ խօսելու ոճն իսկ : Առնական , անշնորհ , եւ
պչրական եղանակն անհաճոյ է եւ երբ խօսքի նիւ-
թը հետաքրքրական չլինի , հաճելի խօսակցութեան
մը գլխաւոր կէտը կը պակսի ըսել է :

Կան կարգ մը տիկնայք , որ երբ չմեծարուին ,
նուաստացած կը նկատեն զանձինս : Այդպիսիք եր-
բմն կ'աշխատին բռնական եւ պատշաճից հակա-
ռակ միջոցաւ մը ինքզինքնին ցոյց տալ . եթէ եր-
բէք յաջողին իսկ՝ ո՛չ թէ իւրեանց մտային կարո-
ղութեան նախապատուութիւն մը տրուելով է ,
այլ իրենց ի գործ դրած բռնական միջոցաւ , որ
տակաւ տաղտկալի կը լինի եւ վերջապէս ներկայից
կողմանէ փոխանակ յարգանաց , ծաղու եւ պար-
սաւանաց կ'արժանանայ :

Պէտք չէ ուրիշի մը խօսքն ընդմիջել : Ինքն-
իշխանութեան պակասութեան նշան է այդ : Նոյն-
պէս ուրիշի մը խօսած ատեն ազմկաւոր շշուկ մը
հանել աններելի է : Եթէ ոք մէկու մը հետ խօ-
սակցած պահուն , զիպուածով ուրիշ անձ մը ներս
մտնէ , պէտք չէ խօսակցութիւնը դադրեցնել , վա-
սըն զի նորեկը կրնայ կասկածիլ թէ իւր անձին
կամ անվայել նիւթի մը վրայ կը խօսուէր :

Ուստի , որպէս ըսինք , բարոյականութեան եւ
պատշաճից բացարձակ օրէն է՝ ընկերային ակմբոց
մէջ՝ երկու խօսակիցներու միայն լսելի լինելու
չափ ցած ձայնով չխօսակցիլ . այս պատճառաւ է

որ այսպիսի խօսակցութիւն անպարկեշտ նկատուած է : Հետաքրքրական խօսակցութեան մ'ատեն , երբ նորեկ այցելու մը ներս մտնէ , պատմուածը կամ խօսուածը համառօտապէս կրկնելու է :

Երբ տարիքոտ կամ երեւելի տիկին մը , հարցում մ'ընէ դեռատի կնոջ կամ օրիորդի մը , պարտին տքա ուշադրութեամբ ականջ դնել եւ մերթընդ մերթ կարճ , պարզ , համեստ եւ հանճարեղ պատասխաններ տալ :

Երբէք խօսելու չէ մարդ գանձնէ իւրմէ . այսու ամենայնիւ պէտք չէ լռութիւն պահել այն բանին համար որ իւր անձին կը վերաբերի : Մարդ միշտ պարտի մտքէ չհանել թէ ի'նչ որ մասնաւորապէս մեր անձնականին կը վերաբերի , անկարելի է որ զայս հետաքրքրէ . այդու այլք դիւրաւ կը տաղտկանան , եւ այս՝ վերջին աստիճան անվայել է :

Ընկերական ակմբոց մէջ ներելի չէ այնպիսի լեզու մը գործածել , որով ներկայից մին նեղուի , ծիծաղելի լինի եւ կամ վշտանայ : Խօսակցութեան ընթացքին մէջ եթէ սխալ մը լինի եւ մեք կարող լինիմք աւելի լաւ տեղեկութեամբ ուղղել զայդ սխալ , պարտիմք զգուշանալ անմիջական եւ ծանրը ընդգիծախօսութենէ եւ հանդարտութեամբ ըստպասել յարմար առթի՝ ամենայն քաղաքավարութեամբ ուղղելու համար : Բայց երբ յայտնի ստութիւն մը կամ զբարտութիւն մը լինի եւ ներկայից միոյն պատուոյն դպի եւ մարդ զնա պաշտպանել ուղէ , յայնժամ պէտք է ուղղել ո՛չ թէ բուռն այլ հանդարտ ու մեկին կերպով եւ առանց

բարեկրթութենէ հեռանալու : Անբարեկիրթ կամ կրակոտ բնաւորութիւնք , ոչ միայն իրենց նպատակին չեն հասնիր , այլ իրենց անձին անգամ կը մլասեն :

Ընկերական ակմբի մէջ գտնուող խօսեցեալք պէտք չէ որ շարունակ եւ միայն միմեանց հետ խօսակցին . այսպիսի ընթացք մը բարեկրթութեան հակառակ է եւ դէպ ի ընկերութիւնն անտարբեր լինիլ ըսել է :

Խօսեցեալք ակմբի մը սրահն մտած ատեն ընկերութեան կը պատկանին որպէս զամուսնացեալսուստի բարեկրթութիւնը կը պահանջէ որ միւս ներկայից պէս ընկերութեան դարձընեն իրենց ուշադրութիւնը . միայն սուղ ու պատեն վայրկեաններու մէջ կրնան իրարու նուիրուիլ . ուրիշ ժամանակ միայն հայեացքով կամ մտօք իրարու հետ կրնան զբաղիլ : Ըմպելիք կամ միրգ բաշխուած ատեն , պէտք է առնուլ ակորօթելին . շատ անվայել բան է չառնուլ ուղելն : Ըսելն աւելորդ իսկ է թէ իւր պնակը բեռնաւորելն ալ ամօթ է : Ընդունելի չէ նաեւ ճաշի կամ ըմպելեաց ատեն եռանդով խօսակցիլ : Հրաժեշտի ատեն պէտք է տանտիրոջ եւ տիրուհւոյն պարզ եւ սրտազին շնորհակալութիւն յայտնել : Պատշաճից հակառակ է , որ մարդ իւր մեկնելու դիտաւորութիւնը յայտնելէ ետքը , երկար խօսակցութիւն մը վերսկսի :

Մարդ կանոն ընելու է իրեն , որ երգի եւ դաշնակահարութեան ատեն ելնէ դաշնակ ածել կամ երգել , եթէ վստահ է յաջողութեան վրայ . ապա թէ ոչ՝ ինքզինքը մեծ չիտթութեան մէջ կը

ձգէ, ներկայ հանդիսականները կը տաղտկացնէ եւ ծաղրելի կը լինի : Բայց չափաւոր կարողութիւն ունեցողն ալ այլոց երկար աղաչանաց տեղի տալու չէ . անհաճոյ ծեփծեփանք մը կը նկատուի երբ տիկին մը շատ աղաչել տայ իրեն :

Երգելու ժամանակ զգուշանալու է չընտրել ողբերգական հատուած եւ հատուածի մը յաջող ու լաւ երգման ատեն երգողն ընկերութեան հաւանութիւնը վնասելու պէս չորս կողմն հարցական հայեացք պէտք չէ ուղղէ, զի այդ՝ ընդհանուրին տհաճելի կը լինի : Անձ ինամբողջ չարժելու է հատուածի մը ընտրութեան ժամանակ . գլխաւորապէս բերանացի ասացուածոց ատեն յստակ հատուածներու նախապատուութիւն տալու է :

Ընկերական յարաբերութեանց կարգէն է նաեւ շրջադայութիւնը : Քալուածքը պէտք է յարմարցընել ընկերացող անձի գնացքին : Քալած ատեն մասնակցելու է ընդհանուր խօսակցութեան :

Իմաստուն կանայք բարեմտաբար չտեսնելու կը դարնեն, արանց կողմանէ իրենց սեռին մատուցանելի ընկերական յարգանաց թեթեւ զանցառութիւններն . սակայն ծանր զանցառութիւնները կը պատժեն փափկութեամբ . այսու ամենայնիւ, ամէն պարագայի մէջ կանայք զգուշանալու են ո՛ր եւ է կոխ կամ յանդիմանութիւն ընելէ այդպիսի անտարբեր անձանց :

Այդպիսի արանց անձայն անարգանօք պատասխանելու են եւ մոռնուիլու են կատարելապէս . վասն զի իրաւունք չունին վերջապէս իրենց անարժան երեւցող այրերն ընկերական ակմբէն վանելու :

Ք Լ Ո Ւ Ծ Ք .

→→→○×○←←←

Տուր ինչ այն տէրելի բաժակն,
Որ հողէ շինուած է .
Ի հողէ եղէ ես,
Ի հողու ընդ հողով պիտի մեռնի :

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՈՉՈՒՆՔԻ

Առաջին գլխոյն մէջ ըսուեցաւ, թէ կոչունքի կամ նմանօրինակ հանդիսի մը հրաւիրեալք պարտին ճիշդ որոշեալ ժամուն ներկայ գտնուիլ : Հետեւաբար հրաւիրողաց պարտ է՝ հրաւիրադրոց մէջ նշանակել որոշեալ ժամ մը :

Ձանալու է ճի՛շդ ժամուն երեւիլ, ո՛չ կանուխ ո՛չ անադան : Կանուխ երթալը՝ մասնաւորապէս տանտիկնոջ անհաճոյ է, վասն զի ո՛չ միայն նորա տնական դեռ անկատար պատրաստութիւնները կը խանգարին, այլ որ աւելին է՝ կը կորուսանէ այն ժամանակը, զոր իւր արդուզարդին պիտի յատկացնէ :

Չզուշաւոր տանտիկին մը, ամենայն պատրաստութիւն, մինչեւ իսկ մանրամասնութիւնները

կանխաւ կը կարգադրէ եւ սպասաւորներն այնպէս խնամով կը հրահանդէ, որ ընկերային ակմբէն բաժնուերու պէտք չունենար : Վասն զի համախըմբեալ ընկերութեան մը համար, ոչինչ այնչափ խանգարիչ եւ նեղացուցիչ է որչափ երբ տանտիկինն անդադար տնական գործերով կը զբաղի եւ մէկ սենեկէն միւսն կ'երթեւեկէ եւ կամ պէտք կ'ունենայ կշտամբել եւ ուղղել սպասաւորաց ընթացքն : Այս վիճակը կը խանգարէ ամբողջ ընկերութեան հանդիստն ու բարեկայելչութիւնն, որոյ համար շատ հոգ տանիլ տանտիկինոջ գլխաւոր պարտքն է : Գիտնալու է թէ այն տանտիկինն, որ ինքզինքն իսկ մոռնալով, միայն իւր աչաց ելուաց կը նուիրէ զանձնն, հոգին է ընկերութեան . կապ մը՝ որ ներկայից ամենքն ալ կը պահէ ամփոփ եւ յանդորրու :

Կոչուներ ի մը կարգադրութեան սովորութիւնք վերջին ժամանակներս յոյժ փոխուած են՝ հին ժամանակաց սովորութեանց հետ բաղդատմամբ, եւ ուրիշ օտար աղագաց սովորոյթք ընտանեցած են . սովորութիւնք՝ որ գերմանական տեսութեամբ եւ զգացմամբ թէեւ ծաղրելի, այլ սակայն վերջին ատիճանի ճաշակաւոր են : Այսպէս, սեղանի վրայ ճաշէն ետքը, բերանի եւ ձեռաց լուացման սովորութիւնն անպատշաճ մաքրասիրութիւն մ'է, որ փափկասիրութիւնը կը վիրաւորէ մինչեւ իսկ եթէ այդ գործողութիւնն ամենաճարպիկ կերպիւ կատարի :

Չմրան մէջ, ճաշի սրահը պէտք է տաքցնել . եթէ սաստիկ ցուրտ է, մերթ կոչուներէն մէկ քա-

նի օր յառաջ, վասն զի շատ անգամ պէտք կը լինի մեծ, երկայն եւ չգործածուած սրահներուն հաճելի ջերմութիւն մը տալու համար, մէկ քանի անգամ տաքցնել զայնս :

Հանդիսաւոր կերպիւ զարդարեալ սեղան մը տուրնջեան լոյսէն աւելի, ճրագով եւ մանաւանդ փայլուն ջահի մը լուսավառութեամբ առաւել ազդեցիկ տեսք մը կ'առնու : Ուտի աւելի լաւ կը լինի, եթէ դեռ արեւ կայ, կոչնականք ճաշի սրահը մտնելէ յառաջ, պատուհանաց ստորներն իջեցնելով փայլուն լուսաւորութեամբ մը շքեղել : Սովորական է, սեղանը ծածկելէ յառաջ, սեղանին վրայ ասուեղէն ծածկոց մը կամ գորգ մը պրկեալ փռել :

Այդ ծածկոցը՝ սեղանին տակէն՝ չորս անկիւններէն կապերով ամրապնդելու է : Այս նախազգուշութեամբ ոչ միայն սեղանին ուղղութիւնը կը պահուի, այլ նաեւ անօթք եւ ըմպանակք հաստատ դիրք մը կը ստանան . սեղանին ձերմակ սփռոցն ամուր կը լինի եւ աստ անդ չհակիր, որպէս կը պատահի յղկեալ սեղանից վրայ : Երբ ըմպանակ կամ անօթ մը իյնայ՝ կոտրելէ զերծ կը մնայ այս կերպով :

Բնական է որ թարմ ծաղկունք սեղանի մը ամենաչքեղ զարդն են, իսկ ընդհակառակն արուեստական ծաղկունք շատ քիչ անգամ լաւ ճաշակի կը յարմարին :

Փոխանակ ծաղկակալներու, այժմ շատ վաշելուչ կերպով շինուած սակառփներ կան որոց մէջ բնական ծաղկունք ընդ երկար կրնան լաւ

պահուիլ : Գոցա մէջ թիթեղեայ բոյն մը կայ , որ թաց աւազով կը լցուի եւ ծաղիկներն ադոր մէջ կը դնեն : Ծաղկանց ցօղունները շատ կարճ կը թողուին , որով իրարու քով թաց աւազին մէջ՝ կարելի կը լինի զետեղել : Կոցա անջրպետներն ալ կանաչ մամուով կը լցուի : Աեղանին յարմարութեան համեմատ կա՛մ սեղանին միջավայրը մեծ եւ ձուռ- ձեւ սակառի մը եւ կամ անջրպետաց մէջ կանո- նաւորապէս բազում փոքր սակառիներ կը դրուին : Իւրաքանչիւր կոնչականի սպասին ձախ կողմն պատառաքաղն , եւ աջ կողմն դանակն ու դգալը կը դրուի : Պնակի վրայ կը դրուի հացն՝ անձեռոցին տակ : Մեծ կոչունքի ժամանակ , ամէն մէկ սպա- սի մօտ չորս ըմպանակ կը դրուի . մեծը՝ ջրոյ , փո- քըր մը՝ մատերա կամ պօռտոյի համար , միջակ մը՝ զանազան գինւոց եւ ուրիշ մ՛ալ շամբանեայի հա- մար :

Պղպեղի եւ աղի ամանները , փոքրիկ դգալով մը պէտք է սեղանին վրայ այնպէս դնել , որ հիւ- բերը դիւրաւ հասնին : Զանազան համեղաճաշակ չամչարակք եւ աղանդերք կը զարդարեն սեղանը : Աղանդերք կը բաղկանան աղիերէ , համեմեալ ձուկէ կամ աստակոսէ , ոստրէներէ եւ սունկէ :

Միջին կարգի ոչ - պաշտօնական կոչունքի ա- տեն տանտիկնոջ սպասին մօտ կը դանուին , թանի դգալ , ձկան դգալ , բաժնի դանակն եւ ադոր պատ- կան մէկ քանի սովորական դգալներ , եւ պարապ սկաւառակներ եւ թանի պնակներ : Իսկ մեծ պաշ- տօնական հանդիսից ատեն պէտք չէ որ թա- նի պնակներ երեւին , այլ դոքա պէտք է կոչ-

նականաց մուտքէն անմիջապէս յառաջ լցուած լի- նին : Վերջէն տրուելիք ուրիշ ամենայն ինչ որ- պէս եւ մրգեղէնք , նախապէս կարգադրուած կը լինին նոյն իսկ ձաշի սրահին մէջ եւ կամ ընթե- րակայ սենեկի մը մէջ , որպէս զի սպասաւորք ա- ռանց ո՛ր եւ է յապաղման ի սեղան ածեն զայնս :

Ամէն մէկ սպասի համար մրգեղէնի փոքր պը- նակ մ՛եւս յատկացեալ պէտք է լինի , որպէս զի հարկ չլինի չամչարակը կերակրոյ պնակի մէջ դը- նել : Մրգեղէնք , խոր պնակներով որպէս եւ սա- կառներով կամ տափակ ափսէներու վրայ կը դիդ- ուին : Բաց յայտցանէ բանդակաց համար զանազան պնակներ կան , որոց մէջը դուրս ցցուած է : Զրոյ եւ գինւոյ շիշերն յղկեալ պատուանդանաց վրայ կը դրուին :

Ինչպէս ըսինք , միջին կարգի կամ 8-10 հիւ- բէ բաղկացեալ մտերիմ հացկերութի ատեն պարապ սկաւառակներ եւ թանի պնակներ տանտիկնոջ ա- թոռին առջեւ կը դրուին : Իւրաքանչիւր բազմա- կան սեղանի նստած ատեն , իւր ընթերանստին բա- րեկամական խոնարհում մը , ելնելու ատեն եւս յարգական խոնարհում մը կ'ընէ եւ տանտիկնոջ որ- պէս եւ ամէն ծանօթաց ձեռք կարկառելով « ա- նոյններ ըլլայ » կ'ըսէ : Ամենքն ալ իրենց տեղերը նստելէն ետքը , անձեռոցը պարզելով , ծածկելու է մինչեւ ծոնկերն ու կուրծքը : Ապուրէն ետքը , զոր տանտիկինը կը լեցնէ եւ կը յանձնէ սպասա-ւորաց որ բաշխեն , կը տրուի ձուկ , ընդեղէնք իւր պարազայիւք , խորտիկք , հաւեղէնք եւ մըր- դեղէնք : Աղանդերք խորտիկէն յառաջ կը տրուին ,

սակայն ոչ շատ հեղուկով, վասն զի դորա ձեռքէ ձեռք տրուած ժամանակ զգեստուց վրայ կաթելու վախը, յոյժ կը նեղէ զտիկնայս :

Ընդհանրապէս, տանտիկինը եւ մերթ սպասաւոր մը կը կտրատէ խորովածը՝ մերձակայ սեղանի մը վրայ . իսկ միւս կերակուրները, ներկայացուելէ անմիջապէս յառաջ կը կտրէ եւ վերստին կը կարգաւորէ, այնպէս որ իւր առջի վիճակն ըստանայ, մանաւանդ որ այս գործողութիւնը հրաւիրելոց ի սրահն մտնելէն յառաջ պէտք է կատարուի :

Մասնաւորապէս գիտնալ պէտք է, թէ ամէն մէկ կերակուրի՝ դանակը եւ պատառաքաղք պէտք է փոխուին . եթէ այս ալ չլինի, ձուկէն ետքը ըսպասաւորք պարտին մաքուր լաթով մը սրբել զայնս :

Մրգեղինաց տրուելէն յառաջ, սպասաւորը բոլորչի խողանակով մը կը մաքրէ սեղանը : Մըրգեղինաց հետ կը տրուին միշտ պանիր եւ կարագ : Ամառն՝ կարագի հետ մէկ քանի կտոր սառն դնել պէտք է : Երկուքն ալ, կարագ եւ պանիր, բիւրեղեայ սկահակի մը մէջ կը դրուին, խփով մը ծածկուած եւ ամէն մէկ սկահակի հետ դանակ մը : Այս օրինակ միջնակարգ հացկերութից ատեն, խահուէն՝ հրաւիրելոց դեռ սեղանէն չելած կը մատրուակի . իսկ հանդիսաւոր կոչուներ ատեն զայդ ո՛չ թէ ճաշարահին, այլ մերձակայ սրահին մէջ կուտան :

Ք Լ Ո Ւ Պ Գ .

— — — — —

Հեռե՛ զբացման վայելչին եւ ուղղութեան .
խորհասարութեան՝ փակ բարեին է շարաց :

ՍԵՂԱՆԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՅ

Օրէն է որ տան տիրուհին եւ իւր չափահաս աղջկունք չափազանց շքեղ արդուզարդ չընեն, զգուշանալով այնպիսի երեսութէ մը, որով թուի թէ մարդ իւր հիւրերը նսեմացնել կ'ուզէ : Նոյնպէս զգուշանալու է, որ մարդ իւր տան մէջ փառաւոր եւ թանկագին գոհարեղէն չկրէ : Արդուզարդի պարզութիւնն ապացոյց է գործունէութեան, որով տիկնայք կը ճգնին հիւրոց հանգըստեան համար . պարզութիւնը ցոյց կուտայ նաեւ թէ ամէն կերպիւ հիւրոց առաջնութիւն տալ կ'ուզուի : Գիտնալ պէտք է նաեւ թէ տան տիկինը երեսելու չէ խոհարանի ղենջակով կամ կերակրոց շոգով կարմրցած դէմքով եւ կամ այնպիսի աղտոտ ձեռօք, որ խոհարանի մէջ աշխատիլը կը ցուցընէ :

Արդարեւ, խոհարանի մէջ աշխատիլը տիկնոջ

մը համար ամօթ չէ . բայց այդ աշխատութեան տեսանելի հետքը պէտք չէ որ իւր վրայ կրէ :

Սեղանի պատրաստ լինելը տանտիրինոջ ծանուցուելուն պէս , սա ոտք կ'եխէ եւ ընկերութեանէն առն միոյ թեթեւ խոնարհութիւն մ'ընելով , թեւը կը ներկայացնէ առ նա՝ առաջնորդելու համար մինչեւ ի սեղան . ապա տանուաէրը կը հետեւի նոցա , տարիքով կամ աստիճանաւ մեծ տիրինոջ մը առաջնորդելով : Տանտէրն ու տիրուհին սեղանին մէջ տեղը դէմ առ դէմ կը նստին եւ անտի հոգ կը տանին իրենց հիւրերուն ուտելեաց եւ խօսակցութեան համար : Նոքա կ'որոշեն հիւրոց տեղերը , իսկ ընկերական մեծ ակմբոց ատեն տոմսերով կը ցուցուին այդ տեղեր : Տանուտեառն եւ տանտիրուհւոյն երկու կողմերը պատուոյ տեղեր են , որք ընկանաբար տարիքոտ եւ նշանաւոր անձանց կ'ընծայուին : Տանտիրոջ ամենազլխաւոր պարտաւորութիւնն է հաճելի կերպիւ տեղաւորել հիւրերն եւ միմեանց քով նստեցընել իրերապատկան եղողները :

Սեղանի վրայ պէտք է ըստ կարելւոյն ուղիղ նստիլ . բայց ոչ արձանի պէս գոռոզ այլ բնական դիրքով : Շատ անշնորհ բան է երբ դեռատի տիկին կամ օրիորդ մը թիկնկոր սեղան նստի : Պէտք է նաեւ անհանգիստ չառնել իւր ընթերանխտան . աւելի լաւ է զոհել ո՛ր եւ է հանգիստ եւ կամ փափաքի մը լրացումն : Նթէ սպասաւորք մօտ են , պէտք է ուղուած բան մը անոնց ձեռօք հեռուէն առ ինքն բերել տալ :

Կերակրոց բ ա շ ի մ ա ն ժամանակ պէտք չէ

ընդերկար սպասեցնել բաշխողն , այլ առնուլ չուտով այն կտորն որ իւր առջեւ կայ . սկաւառակի մէջ դրուած կերակուրն ընդերկար հետադառնիչ նայուածքով մը դիտելը , ընդերկար որոշելը կամ այս ու այն կտորը պատառաքաղով աստ անդ շարժելը յոյժ անպատշաճ է : Մարդ իւր յատուկ պատառաքաղով կամ դգալով երբէք կերակուր առնելու չէ : Նոյնպէս շատ անպատշաճ է սեղանին վրայէն կամ ընթերանխտին սպասին վրայէն կերակուր առնուլ , այլ եթէ պէտք լինի , յատկապէս խնդրելու է : Ապուրը լմնալէն ետքը դգալը պնակին մէջ գնելու է : Նթէ ապուրը տաք լինի , զայն զովացնելու համար փչելու չէ . նոյնպէս ապուրը խմած ատեն օդ ձգելով ըմպելու չէ , վասն զի անհաճոյ կը լինի սեղանակցաց :

Նրբ երկու արք ուղեն ո՛ր եւ է մեծարանք մ'ընել տիրինոջ մը , սա պարտի պարզապէս այն անձին խնդիրն ընդունիլ որ նախապէս ըրած է , միայն թէ միւսը պատուով բարձր եւ կամ տարեւոր մէկը չլինի :

Այդ պարագային մէջ մասնաւորապէս քաղաքավարական նկատմամբ բացառութիւնք պահանջելի են :

Կերակուրն ո՛չ այնչափ աճապարանօք ուտուու է , որպէս թէ շատ անօթի եղած լինիմք , եւ ո՛չ այնչափ ծանր , որպէս թէ կերակուրին հաւնած չլինիմք : Նոյնպէս կարի անշնորհ բան է անյագութիւն մը ցոյց տալ . պէտք է մէկ անգամէն սակաւ ինչ առնուլ եւ ուտել զայն ախորժանօք : Նթէ ո՛ր եւ է կերակուր չուղուի , առանց անոր

դպնալու, թող տալու է որ անցնի սպասաւորն :
Ուտելու ստիպելը վայելուչ չէ . շնորհաշուք տան-
տիկին մը կը համարի թէ հրաւիրեալը կ'առնուն
իրենց մատուցեալ ամենայն ինչ, զոր հաճելի կը
գտնեն, Նթէ տանտիկինը գիտնայ որ իւր հրաւիր-
եալներէն մին կերակուր մը կամ ըմպելի մը մաս-
նաւորապէս կը սիրէ, սպասաւորաց միջոցաւ բա-
ցառիկ կերպով եւ առանց խօսքի, անգամ մ'եւս
տալ կուտայ նմա :

Արդիւեայ է նաեւ, տաք ըմպելի մը զովացնե-
լու համար գաւաթի պնակին մէջ լնուլ, կամ ըմ-
պելին մինչեւ վերջին կաթիլը ծծել կամ մրուրը
փոքր դգալով մը քերել :

Առնուած կերակուրը մէկ անգամէն կտրրտելու
չէ որպէս կ'ընեն տղայք, որ դանակ գործածել եւ
ուտել չեն զիտեր դեռ, այլ մասն մը կտրել յայն-
ժամ՝ եբբ բերան պիտի տարուի . լաւ է որ միւր
նեարդից հակառակ ուղղութեամբ կտրուի, որով
զիւրին կը լինի ծամելն եւ ախորժանօք կ'ուտուի :

Չուկը պէտք է պատառաքաղով ուտել, եւ փո-
խանակ դանակի, ձախ ձեռքը հացի կտոր մը բռն-
նելու է . դանակը բերան տանիլը հաճելի չէ :
Նոյնպէս շատ անդէպ է խմորեղէն, կերակուր եւ
այսպիսիք դանակով ուտել : Փուշերը պատառաքա-
ղով բերնէն հանել պէտք է . բայց աւելի աղէկ է
ձուկն այնպիսի զգուշութեամբ ուտել, որ փուշը
բերան չերթայ :

Ո՛ր եւ է ումպ անձայն լինելու համար, պէտք
է դգալին ծայրը բերնին մօտեցնել եւ բերանը քիչ
բանալով բոլորակ ձեւ մը տալ նմա, որ մասնա-

ւորապէս թուի թէ ախորժանօք կ'ուտուի : Ընդ-
հանրապէս ի տղայ տիոց ընտանեաց մէջ այս այն-
պէս հետեւելի պէտք է լինի՝ որպէս սեղանի ամէն
սովորութիւնք՝ որ իբրեւ բնութիւն լինի . սա միշտ
լաւ ու ճշմարիտ կրթութիւն մը ցոյց կուտայ : Չար-
դուած հացը մատով, իսկ կարագոտ հացը բնակա-
նաքար դանակով առնելու է :

Համեմները միշտ կերակրոց հետ խառն ուտե-
լու է, եւ մասնաւորապէս նոցա մէջ հաց թաթխե-
լը հակառակ է վայելչութեան :

Որպէս յիշեցինք, սեղանի վրայ միշտ ուղիղ նստիլ
պէտք է, սակայն բնական դիրքով . ներելի չէ ար-
մըկով սեղանին յենուլ : Մեծ զգուշութիւն ընել
պէտք է, որ կերակուրէն մասն մը գետին չիջնայ
կամ պնակէն չսահի, չթափի կամ չզլտորի :

Սկաւառակը կամ ըմպանակն անձեռոցով սըր-
բելը, կը վիրաւորէ տանտիրուհին . վասն զի պար-
զապէս նորա մաքրասիրութեան վրայ տարակու-
սիլ կը նշանակէ : Չաչէն ետքը անձեռոցը վերստին
ծալելն անդէպ է, վասն զի կասկածի տեղի կը
տրուի թէ ծալողը կը կարծէ թէ անգամ մ'եւս պի-
տի գործածուի այդ անձեռոցն, այլ պէտք է պար-
զապէս սկաւառակին քով դնել զայն գործածուած
կերպիւ : Գեռատի տիկին մը ամէն պարագայի մէջ
զգուշանալու է՝ ոսկրոտ մտեղէններն ու հաւեղէնները
ձեռօք ուտելէ, ո՛չ միայն թէ աչքի անհաճոյ կ'երե-
ւի, այլ առ այն՝ թէ հակառակ է մաքրութեան : Նոյն
իսկ ծներէկը, որ պարզապէս ձեռօք կը բռնուի,
այդպէս ուտելը դեռատի տիկնոջ մը վայել չէ . որ-
պէս եւ անվայել է ընդհանրապէս հացէ, միրգէ

կամ մրգեղէն աղանդերէ զատ ուրիշ ո՛ր եւ է ինչ մասներով ուտել :

Երբ պատահաբար կերակուր մը գտնուի , զոր մարդ չճանչնար կամ երբէք կերած չէ ուրիշ անձ գամ , բնաւ յայտնի ընելու չէ , այլ նայելու է թէ իւր սեղանակիցք ի՛նչպէս կ'ուտեն դայն , եւ ինքն ալ նոյն կերպիւ ուտելու է : Եթէ հաղուազիւտ ուտելիք մը ներկայացուի եւ մարդ զիտնայ թէ շատ նուազ քանակութեամբ կայ , յայնժամ ի քաղաքաւարութիւն եւ ի պատիւ առ ընկերութեան տարեւոր անդամս , առանց ձեռք դպցնելու անցընելու է եւ կամ յոյժ փոքր մասն մը առնելու է :

Առանց յաղենալու , սեղանէն անօթի ելնելն ստորնութիւն է : Ամէն վիճակի դէմ է ուտելու կամ խմելու ստիպել եւ կամ յականէ յանուանէ հրամացունել : Տան տիկինը , իբրեւ տիրուհի սեղանին , պարտի աչալըջութեամբ հոգ տանիլ որ իւրաքանչիւրին փափաքը գոհանայ ըստ կարելւոյն :

Պտուղ , հաց եւ բանդակ միշտ ձեռօք կ'առնուին : Յայտնի է թէ ով որ իւր ուտել չուզած բանը ձեռօք կը խառնէ , շատ անվայել կերպիւ վարուած կը լինի :

Արկանդակք , իրենց սկաւառակին մէջ յատկապէս դրուած դանակով կ'առնուին :

Սկաւառակը հացով սրբելու չէ՛ բնաւ : Սկաւառակաց փոփոխ ու մն սպասաւորաց թողուլ պէտք է : Եթէ պէտքը պահանջէ որ ո՛ր եւ է կերակուրէ ետքը դանակ եւ պատառաքաղ փոխուին , երկուքն ալ պնակին վրայ դնելու է . ապա թէ ոչ պէտք է պնակին քով գտնուած սպասակային վրայ

դնել : Բարեկրթութեան հակառակ է դանակ եւ պատառաքաղ մաքրել անձեռոցով :

Լաւ ակմբոց մէջ ամենեւին ներելի չէ , մըրգեղէնէ մասն մը գր պ ան ե լ , եթէ տանուտէրն յատկապէս չհրամայէ :

Սեղանի վրայ , ներկայից միոյն օտար լ ե գ ու ո վ դիտողութիւն մ'ընել ներելի չէ բնաւ , եթէ այդ լեզուն կոչնականաց ամենեցուն հասկնալի չլինի :

Իսկ գալով յարեւ կամ ի կենդանութիւն ուրօք գինի խմելու պարագային , սորա սկզբնաւորութիւնը միշտ տան սովորութենէն կախումն ունի , որ դեռ մէկ քանի ընտանեաց մէջ կայ : Սակայն ո՛չ մէկ պարագայի մէջ , առանց տանուտեառն սկզբնաւորութեան կամ հաճութեան՝ կանխելու չէ . այլ պէտք է բացարձակապէս հետեւիլ տան սովորութեան եւ կարգադրութեան : Ինքնայայտ է թէ տիկնայք չեն կրնար սկսիլ գինւոյ բաժակի առաջարկութիւնը . ո՛չ թէ սոքա խօսելու անկարող լինելուն , — ո՛չ . այլ պատշաճից հակառակ լինելուն համար . վասն զի նախ՝ եթէ տիկին մը առն միոյ համար բաժակ առաջարկելու շափ յառաջ երթայ՝ թէեւ պատուաւորութեամբ՝ ինքզինքն իւր սեռին նախանձաւոր եւ երգիծական ըստգտնաց պիտի ենթարկէ եւ պիտի վնասէ անձին . երկրորդ՝ թէ երբ տիկնոջ մը արեւշատութեան համար խմէ , ներկայ արանց դէմ անուղղակի անարգանք մ'ըրած պիտի լինի , վասն զի ո՛ր եւ է յարգանք եւ մեծարանք միայն արանց կողմանէ կը տրուին առ տիկնայս : ձաշի ատեն միայն իւր ընթերակցին հետ

խօսելու է . վասն զի շատ անպատշաճ է , հեռա-
ւորի մը հետ սեղանին վրայէն դէպ անդր խօսակ-
ցիլ : Ինքնայայտ է թէ մարդ մէկու մը հետ խօ-
սելէ յառաջ , բերանը պարապ է . ուստի պէտք է
հոգ տանիլ որ ուրիշի մը բերանը լեցուն եղած ա-
տեն պատասխանելու չստիպէ զնա :

Ճաշի ատեն տեղի ունեցած խօսակցութիւնք
պէտք է մեկին եւ ինքնաբեր լինին . լաւայարդար
խօսակցութիւնն ակորովակ կը բանայ . տխրառիթ
եւ յուզիչ խօսքերէ զգուշանալու է :

Երբ ճաշը լրանայ , նախ տան տիրուհին կ'ել-
նէ սեղանէ եւ վերստին թեւ կուտայ այն անձին ,
որում ի սեղան առաջնորդած էր . ապա կ'երևնն
այլք , իրարու թեթեւ խոնարհում մը կ'ընեն որ-
պէս եւ տանուտեառն եւ արք վերստին ի սրահ
կ'առաջնորդեն տիկնանց : Աստ խահուէ կը տրուի .
արանց ոգելի ըմպելի ալ կը հրամայուի :

Ո՛չ ինչ այնքան անհաճոյ եւ անընդունելի է
որչափ գործածուած անօթք՝ տեղի ունեցած ըն-
կերային համախմբութենէն անմիջապէս ետքը ի-
րենց տեղը չ'ընելը : Ուստի գործունեայ տանտիկ-
նոջ մը գլխաւոր եւ անհրաժեշտ պարտաւորութիւ-
նը պէտք է լինի , կոչունքէ մը ետքը ամէն նիւ-
թեր եւ անօթներ մէկ կողմ դնել , գլխաւորապէս
սա պատճառաւ որ առաջին առնրուի այդ անօթից
կոտորուելուն , որ կարելի է այսպիսի պարագայից
մէջ :

Տանտիկինը պարտի այդ անօթից մաքրու-
թեան ու պահպանման հսկել , որպէս զի ամենայն
ինչ ըստ իւր պատուէրի , զգուշութեամբ եւ մաք-

րութեամբ կատարի : Այդ խիստ հսկողութիւնք
միշտ կը վարձատրուին , նոյն նիւթոց տեւական եւ
գեղեցիկ պահպանմամբ :

Արծաթեղէնները պէտք է պարզապէս լուալ
եւ ապա լաւ մը չորցընել : Գրչաքանդակ արծա-
թեայ անօթներն , երկու տեսակ խողանակաւ պէտք
է մաքրել . ողորկ կողմն՝ փափուկ , եւ քանդակեալ
կողմն ալ փոքր ինչ կարծր խողանակաւ . դոցա
մաքրութեան համար գործածուած սպանիական
կաւիճը թէ չոր եւ թէ թաց կը գործածուի . թաց
եղած ատեն շատ քիչ առնելու է , վասն զի արծա-
թեղէնք մթորակ կը լինին : Խիստ լաւ կը փայլին
երբ նախ ասուակի կտորով , քիչ մը իւղ քսուի վը-
րան , եւ ապա արծաթեղինաց յատուկ փոշի ցան-
ուի եւ շիուի մինչեւ որ իւղն անհետի եւ ա-
պա կակուղ ու մաքուր բրդեղէնով մը սրբուի :

Գանակաց շեղըր , տախտակի մը վրայ մաք-
րուելով , չոր ասուիով կամ կակուղ կաշիով մը կը
սրբուի : Արծաթեայ աղամանները պէտք է անմի-
ջապէս պարպել . վասն զի աղը շարունակ խոնա-
ւութիւնն առ ինքն կը ձգէ եւ այդպէս արծաթի
վրան սեւ բիծեր կ'արտադրին : Այն շիշերն որ շատ
քիչ անդամ կը գործածուին , պէտք չէ խիցերով
զոցուած պահել , վասն զի նոցա մէջ գարշահոտու-
թիւն մը յառաջ կուգայ . մաքրելէ ետքը բերաննին
բաց պահելու է :

Ճենապակիներն երբէք տաք ջրով մաքրելու
չէ . ոսկեղօծմունք կ'աւրուին :

Պ Լ Ա Ի Խ Ե .



« Այս առար ինչորս պէտք չէ որ զնախ
Մեր ապագայ կենաց հաճոյնց .
Յեմարտիտը շատ առաջ կը բնէ ,
Մէ շահու ինչորով քաղմատայ զիշտ : »

Պ Ա Ր Ա Հ Ա Ն Դ Է Ս

Պարահանդիտից կամ ընդհանրապէս ընտանեաց մէջ այդպիսի հանդէս մը տեղի ունեցած առտեն , տիկնայց համար արդուզարդի սենեակ մը պէտք է գտնուի , որպէս զի իրենց վերարկուններն սպասաւորաց յանձնելէն զկնի , վայելչապէս կարգադրեն իրենց զգեստները : Անտի դուրս կ'ելնեն տիկնայք երթալու համար այն սենեակին , յորում տանուտէրը կը սպասէ պատրաստ իւր չափահաս որդւոց եւ իւր այր ազգականաց հետ : Յետ բարեւելոյ , արք թեւ կուտան տիկնայց , անոնց առ տանտիրուհին առաջնորդելու համար , որ սրահին մէջ իւր հիւրերը կ'ընդունի :

Ի պարահանդէս հրաւիրեալ անձանց մեծագոյն մասն համախմբուելուն պէս , ներկայք խմբովին

պարի սրահը կ'երթան : Օրիորդք պարտին ընկերացած լինի իրենց մարց կամ մօր տեղ բռնող ուրիշ տարեւոր տիկնոջ մը հետ եւ իրենց առաջին մտից ատեն կարելի եղածին չափ պարզ արդուզարդով երեւի :

Ինչպէս յառաջագոյն ալ ըսուեցաւ , ներկայացուցումը տանտիրոջ կողմէ տեղի կ'ունենայ : Ինքնայայտ է թէ դեռատիք՝ տարեւորաց , ստորապատիւք՝ բարձրաստիճանաց , արք՝ տիկնայց կը ներկայացուին . ո՛չ երբէք տիկնայք՝ արանց :

Եթէ պատահի , որ յոյժ նշանաւոր կամ հանրածանօթ անձ մը գտնուի , այն ատեն նմա ներկայանալու պատիւ ունեցողին անունը կը արուի միայն :

Օրէն է , որ տիկնոջ մը հետ պարել ուզող այր մը նախապէս ներկայացուի նմա : Տանուտէրն ու տիրուհին կը ստանձնեն այդ պաշտօնն եւ այդ երկու անձանց մէջ խօսակցութիւն մը բանալու առիթը կը փնտռեն : Ապա այրը տիկնոջ կը դիմէ , խնդրելով որ իրեն հետ պարելու պատիւն ընէ : Տիկնոջ կամ թեթեւ խոնարհմամբ մը կ'ընդունի այդ առաջարկութիւնը , եւ կամ՝ եթէ յառաջագոյն խօսք տուած է ուրիշին՝ քաղաքավարական բառերով եւ պատճառն յայտնելով չընդունիր : Եթէ այր մը հաճոյ չլինի տիկնոջ մը , յայնժամ տիկնոջ պարտի չմերժել այդպիսուն յառաջարկութիւնը , եթէ ամէն պարուց համար խօսք տուած չէ : Տիկնոջ միշտ պարտաւոր է այնպէս ընդունիլ արանց առաջարկութիւնը , ինչ կարգաւ որ յաջորդած են իրարու : Եթէ բազում պարուց համար կ'ան խաւ

խօսք տուած լինի, պէտք է ուղիղ ցուցակ մ'ունենալ, վասն զի խոստացեալ պար մը մոռնալը, խիստ անարգանք մ'է, որ դիւրաւ չը ներուիր:

Կարի յոյժ ուշադրութիւն ընել պէտք է որ տիկին մը մի եւ նոյն պարի համար երկու արանց խօսք չտայ. այդ սխալումն յոյժ կը վիրաւորէ: Պարէն ետքը, այրն իւր պարակից տիկինը տեղը կը վերադարձընէ, եւ սա թեթեւ խոնարհմամբ կը բարեւէ զնա:

Պարի մ'ատեն, եթէ տիկին մը ուրիշ այրէ մը հրաւիրուի մասնաւոր պտոյտ մ'ընելու եւ ինքն տրամադիր լինի այդ հրաւիրի ընդունելութեան, պարտի նախ խնդրել այդ այրէն որ իւր պարակցին թոյլտուութիւնը խնդրէ:

Եթէ այր մը, իրեն ծանօթացեալ տիկնոջ կամ օրիորդին ծնողաց եւս ներկայացուիլ փափաքի, յայնժամ այդ ներկայացուցումը տանուտեառն ձեռամբ տեղի կ'ունենայ եւ ո'չ թէ օրիորդին:

Պարի ատեն դեռատի տիկին մը պարտի թեթեւ եւ չնորհալի շարժիլ. սակայն առանց կոտորուելու, միշտ ուղիղ բռնել զանձն եւ չփարել բընաւ իւր պարակցին: Ծաղու առարկայ լինել չուզողը, պարտի չպարել այն պարն զոր չգիտէ:

Քատրիլի եւ հակապարուց չըջանք պէտք է լաւ գիտցուին. սակայն գործածական չէ պարի ուսման ատեն սովորեալ եւ վարժեալ քայլերը նոյնութեամբ գործածել պարահանդիսից մէջ. այլ պէտք է յարմարիլ նուազածութեան զարկին, չնորհալի ընթացիւք: Այդ ոստոստ քայլերը, վարժութեան ատեն օգտակար են թէպէտ ուսանողաց,

բայց պարահանդիսից մէջ անվայել են տիկնայց: Անդ լուրջն ու ծիծաղականը շատ մօտ են միմեանց, վասն զի այդ երկու վիճակաց մէջ գտնուած անջըրպետը քայլ մ'է: Ապաքէն, անչնորհ բան է, որ այր մը յայտնապէս կարգաւ աչքէ անցընէ զտիկնայս յառաջ քան զընտրութիւն իւր: Դադարի ատեն, այրը պարտի ջանալ իւր պարակցին հետ մեծաւ քաղցրաբարոյութեամբ վարուիլ, կանոնաւոր խօսուածքով. ներելի չէ այդ ատեն համարձակ եւ անպատշաճ կերպով վարուիլ. զի սա ո'չ միայն իւր պարակցին, այլ ամբողջ ընկերութեան դէմ սխալ մ'է եւ մեծ անկրթութեան մը նշան:

Պարահանդիսից մէջ խօսակցութիւնը ընդհանրապէս վերացական կրնան լինիլ. իսկ երբ խօսակիցը մասնաւորապէս ծանօթ են միմեանց եւ ջարեկամացած, յայնժամ մերթ խօսակցութիւնը մասնակի հետաքրքրական ձեւ մը կ'առնու. բայց այս պարագային մէջ եւս՝ արանց անկէ միշտ ըստ կարելւոյն հետաքրքրական նիւթ մ'ընտրել խօսակցութեան համար: Պարակից տիկնոջ հետ յայտնի շողքորթութեամբ եւ կեղծաւորութեամբ վարուիլը կարի յոյժ ստորնութիւն է, եւ յաճախ դեռատի տիկնայք շատ հրապուրիչ կը գտնեն զայդպիսիս, իսկ տարեւորք անմիտ կը կոչեն զանոնք: Խօսակցութեան նիւթի պակասութեան պատճառաւ, ընկերութեան մէջ ուրիշի մը վրայ խնդարով զուարճանալ եւ նորա պակասութիւններն ու տրկար կողմերը յերեւան հանելն ոչ միայն անմտութիւն այլ եւ ցածութիւն է:

Տիկնայք մերթ իրենց անձին վրայ կը խօսին

մեծ չափաւորութեամբ եւ կը սքողեն իրենց ճշմարտիւ ունեցած բարեմասնութիւններն , այսպէս որ արք բացարձակապէս ստիպուին ընդդիմախօսել եւ պատուասիրական ցոյցեր ու յարգանքներ ընել : Սակայն այսպէս ձեռք բերուած պատիւք կիսարժէք են , որք վերջապէս յակամայից ցոյց կը տրուին եւ որք թերեւս շատ արք աւելի հակառակութեամբ քան համոզմամբ կ'ընեն :

Բարեկիրթ եւ լաւ դատողութեան տէր տիկին մը զգուշանալու է այս օրինակ դարպասէ :

Նոյնպէս ոմանք կահուց կամ ուրիշ նիւթոց վրայ մասնաւոր դարմանք մը յայտնելով ինքզինքնին ցոյց տալ կ'ուզեն . բայց այսպէս՝ կը հաստատեն թէ այդպիսի բաներ շատ քիչ անգամ տեսնելու առիթ ունեցած են եւ կամ թէ կարի յոյժ թեթեւ ակնկալութեամբ եկած են անդր : Մարդ կրնայ զանազան դիտողութեամբք իւր մասնաւոր գոհունակութիւնն յայտնել , առանց ինքզինքին սոսկականութիւն տալու : Ընդհակառակն , երբ մեծամտութեամբ խճճէ ոք կարգադրութիւնը , կամ փոխանակ շնորհակալութեան , ծիծաղի հիւրապատուութեան վրայ , այդպիսին անազնիւ բնաւորութիւն մը եւ շնորհաց ու փափկազգացման նուազութիւն մը ցոյց կուտայ : Յաճախ այն դեռատի տիկնայք , որք սիրելի եւ որոնեալ պարուհեաց դասուն կը վերաբերին , կը սոնքան եւ պարտաբանին մէջ իրենց մասնաւոր յաղթանակները կը տօնեն , որք միայն իրենց նպատաւոր են : Սակայն այդպիսիք պարտին ընդնշմարել թէ դոցա պատճառը գլխաւորապէս արտաքին է եւ տեւողութիւ-

նը կարծ . այդ արտաքին գերազանցութիւնք բնութեան նուէր են եւ ո՛չ անձնական արժանիք : Ահա այս վիճակ կրնայ գոհացնել բազում այրերէ անտես եւ անյարգ մնացած տիկիներն , որք այնպիսի բարձր մտաւորական գերազանցութեանց տէր են , որ արտաքին գեղեցկութենէ աւելի բոլորովին տարբեր արժանիք եւ տեւականութիւն ունին : Արդարեւ , այդպիսի գերազանցութիւններ գնահատելու համար , պէտք է ունենալ մտաւորական այն խորին կարողութիւնն ու ոգին , որք արդի սերընդեան եւ դաստիարակութեան ծնունդ եղող արանց քով յոյժ հազուադիւտ են : Նթէ լինին այդպիսի արք , շուտով ի յայտ կուգան այդ կարգի տիկնայք . այսինքն թէ՛ արտաքին գեղեցկութեան հետ , ճշմարիտ կնութեան միակ արժանիքն ի սրտի , եւ հրապոյրն՝ մտային շնորհաց եւ արժանապատուութեան մէջ կը կայանայ : Յաճախ գեղեցկութիւնը փափուկ դաստիարակութեամբ եւ շատ կանուխ ըսքանչացմամբ խիստ դժբաղդագոյն գաղափարական մը կը լինի , վասն զի ենթակայն շարունակական պատրանօք , երբէք ճշմարտութիւնը չճանչնար , եւ եթէ ճանչնայ իսկ , շատ ուշ մնացած կը լինի : Արդարեւ , անհաշտ եւ դժգոհ թէ՛ իւր անձէն եւ թէ՛ յայլոց , շատ կանուխ կ'եղծանի եւ կենցաղավարութեան մէջ դժբաղդ էակ մը կը լինի . մինչդեռ միւս կողմանէ շատեր՝ որ պարահանդիսի մէջ այդչափ յառաջ չեն երթար , իրենց համեստ եւ անկեղծ բընոյթով , կենաց ասպարիզին մէջ , ճշմարիտ սիրոյ եւ ամուսնութեան փառաց կ'արժանանան , եւ այդ իսկ է իրենց կենաց կոչումն ու կէտ նպատակին : Չայդ

ժամանակին ճանչնալն եւ բնական ու օրինաւոր ճանբով յաջողիլն իգական սեռին պարտաւորութիւնն ու պաշտօնն է :

Որպէս հանդիսատիրոջ անկ է հոգ տանիլ որ խօնակցութիւնը կանոնաւոր լինին , նոյնպէս պարահանդիսի կարգադրութեան ատեն մասնաւորապէս պէտք է կանխաւ՝ տիկիներէ աւելի այր հրաւիրել որպէս զի տիկնայք միշտ ի պար խընդրուին եւ զբօսնուն :

Պարզ թէյի-երեկոյթներու ատեն , որք սովորաբար ժամը 7ին (Ը . 1.) կը սկսին եւ մինչեւ 11 կը տեւեն , առաջին պարէն անմիջապէս ետքը , լաւ հաստեայք եւ կարագոտ հացով թէյ կը բաշխուի : Ուրիշ դադարաց ատեն ալ ջերմօղի , լիմօնաջուր եւ զանազան զինիներ կը արուին : Պաղպաղակ բաշխուած ատեն , բիւրեղեայ փոքր պնակ մը եւ դգալ մը միատեղ կը դրուի : Իսկ պարահանդէսք ժամը ծին կը սկսին . աստ նախ՝ դադարաց ատեն՝ լիմօնաջուր , թէյ , ջերմօղի եւ զինի կը բաշխուին : Եթէ կարելի չլինի ընդհանուր կերպով մէկ սեղանի վրայ ճաշ տալ , մօտակայ սենեկի մը մէջ պիւլֆէ մը կը պատրաստուի , զանազան պաղ մսեղինօք , կարագոտ հացերով , կարկանդակներով , զինիով եւ միրգերով :

Ընթրիքն՝ եթէ արուի՝ ճիշդ կէս զիշերի կը արուի , եւ մինչ ցայնժամ պարզապէս թէյի-երեկոթից յատուկ բմպելիք կը մատուակին հիւրոց : Ընթրեաց ատեն նախ կը արուին արգանակ եւ փոքր հայտեր , համեմեալ ձկնեղէնք կամ հաւեղէնք , կողիկը կանաչեղէնով , եւ իբր աղանդեր՝ թառափկիթ ,

ոստրէ . ապա՝ խորտիկք , յետոյ քաքար , պաղպաղակք եւ մրգեղէնք . յետ աւարտման պարահանդիսի՝ խահուէ եւ թէյ :

Իսկ գալով պարահանդիսի արդուզարդուց , որպէս զիտել տուինք , օրիորդք՝ որք առաջին անգամ կ'երեւին ի հանդէս , յոյժ պարզ եւ համեստ արդուզարդ մը ընտրել պարտին : Շատ բաց գոյներն յարզի չեն . գլխոյ ազանելիք միշտ պէտք է յարմարին զգեստուց եւ զարդուց գոյնին : Բնականաբար դոցա տեսակներն աւելորդ կը լինի աստ նկարագրել , վասն զի նորեկքն կը կատարէ զայդ գեր . սակայն պէտք է հետեւիլ անձնական ճաշակին ալ , վասն զի այդ առաւել ընտրելի է քան զայն այլանդակ նորեկքն , որ ստէպ անձաշակ եւ ծիծաղելի են եւ փոխանակ գեղեցկացնելու՝ աւելի տգեղ կ'ընեն : Զգեստուց պատասան յոյժ բարակ եւ թեթեւ լինել պէտք է , եւ դորա գոյնին յարմար լինելու են գլխու կապերն ու ծաղկունք : Գոհարեղէնք շատ պարզ լինելու են եւ կամ լաւ եւս՝ ամենեւին չընելու է : Պարահանդիսից մուճակները կամ ճերմակ սնդուսէ եւ կամ զգեստուց գոյնին յարմար լինելու են :

Խոհեմութիւն է՝ պարահանդիսի զգեստուց որոշեալ պատասան , եթէ կարելի է , զիչերն արուեստական լուսով գնել , որով գնողն անձնապէս կը համոզուի թէ այս կամ այն պատասառը զիշերուան լուսաւորութեանց մէջ ի՞նչպէս կ'երեւի : Մեծ վաճառատունք այդ պատճառաւ լուսաւորեալ սենեակներ ունին :

Սովորութիւն է , որ պարահանդիսից մէջ մին-

չեւ մէկ աստիճան ուսամերկ զգեստիւք կ'երեւին . բայց ադոր ալ չափն անցընելու չէ . զի այդու կը կորնչի այն պարկեշտ շնորհքն , այն անդիմադրելի եւ յանկուցիչ դիւթը զոր շատեր առ ինքն կը ձըգէ : Սին զարդուց չափազանցմամբ կ'անհետին աւմէն բարձր եւ գաղափարական հրապոյրք , եւ յայնժամ զբօսանքն կը կորսնցնէ իւր նշանակութիւնը :

Փոքր պարուց մէջ պարողք այնչափ ուշադիր չեն լինիր պատուասիրական ցոյցերու , քան մեծ պարահանդիսից մէջ , եւ իրենց ընթացք աւելի բընական է , վասն զի պարողք մեծ մասամբ միմեանց ծանօթ են :

Արդարեւ , տիկնայց պարտ է՝ պարահանդիսից մէջ՝ բնաւ չհեռանալ բարեվայելչութեան զգացմանէ եւ բարեկրթութենէ :

Դիմակաւոր պարահանդիսից մէջ , տիկին մը պարտի մեծ զգուշութեամբ վարուիլ , իւր արտա-յայտութեանց մէջ վերջին աստիճան նախազգոյշ լինիլ , եւ վարման պարկեշտութիւնը չթողուլ , վասն զի դիմակի քողին տակ նոցա պէտքը առաւել եւս պահանջելի է :

Չէ մարթ՝ ո՛ր եւ է մէկու մը կամ նորա բիրտ կատակաբանութեանց դէմ դժկամակիլ . ով որ չը կրնար հանդուրժել , հրաժարելու է դիմակաւոր պարահանդէսէ :

Թերեւս անօգուտ չլինի , պարահանդիսից մէջ պէտք եղած բանաձեւից օրինակները նշանակել աստ :

Ա. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ Ի ՊԱՐ .

ԱՅՐՆ . Կրնա՞մ զձեզ այս պարին ինձ ընկերա-նալու պատիւը խնդրել ձեռնէ :

ՏԻԿԻՆԸ . Մեծաւ հաճոյքով կ'ընդունիմ ձեր առաջարկութիւնը :

Այլ . Շատ բարետիրտ էք , շնորհակալութեամբ կ'ընդունիմ :

Այլ . Շատ կը ցաւիմ հետեւեալ պարին համար արդէն խօսք տուած լինելուս :

Այլ . Մի՛ վշտանաք եթէ չընդունիմ զայդ պատիւ . վասն զի շատ յոգնած եմ :

Այլ . Եթէ առաջիկայ պարին ձեզ ընկերանալու հաճոյքն ունենալ կարենայի , շատ հաճելի պիտի լինէր ինձ :

Այլ . Շատ հաճելի պիտի լինէր ինձ՝ հետեւեալ վայցն , (կամ բողբան եւայլն) ձեզ հետ պարել :

Այլ . Մեծ հաճոյքով :

Բ. ՅԵՏ ՊԱՐԻ .

ԱՅՐՆ . Շնորհակալութիւն ձեզ՝ ինձ ցոյց տուած պատուոյդ համար :

ՏԻԿԻՆԸ . Որպէս եւ ես :

Այլ . Կարի յոյժ պատուեցիք զիս :

Այլ . Շատ վեհանձն էք , տէ՛ր իմ .

Այլ . Այդ պատիւը դո՛ւք ըրիք ինձ :

Գ. ՅԵՏ ՀԱՆԴԻՍԻ .

ԱՅՐՆ . Կրնամ ձեզ մինչ ի տուն առաջնորդելու պատիւը խնդրել ձեռնէ :

ՏԻԿԻՆԸ . Շատ շնորհալի էք . կ'ընդունիմ ձեր անկեղծ առաջարկութիւնը :

Այլ . Կը ցաւիմ որ հօրեղբորորդիս արդէն նոյն առաջարկութիւնն ըրած է ինձ :

Այլ . Շատ շնորհակալ եմ ձեզ . եւ երախտապարտ եմ ձեր բարութեան համար :

Պէտք է երկրորդ թաշկինակ մը եւ ուրիշ զոյգ մը ձեռնոց ի պահեստի հետ ունենալ , որպէս զի կարելի լինի միշտ մաքուր երեւիլ . փոքր սանտր մը որպէս եւ վարսակալ ասեղներ հետ ունենալու է իրբեւ անհրաժեշտ պիտոյք . վասն զի պարիշարժումները շատ զիւրաւ կը խանդարեն արգուզարդըն եւ գլխաւորապէս գլխոյ կեղծամներն , որք շուտով կը թուլնան :

Զօրաւոր անուշահոտութիւն մը ընտրելու չէ երբէք . եւ այդ ալ միայն թաշկինակի վրայ ցօղելու չէ , այլ պէտք է որ ամբողջ զգեստն անոյշ բուրումն ունենայ :

Անմտութիւն է հետեւիլ պարուց մինչ ցաւարտ . եւ առողջապահական նկատմամբք պէտք է վերջին պարուց համար խոստումն չլինի . վասն զի ի վերագարձի կարելի է որ ցուրտ առնըրի :

Տարեւոր տիկնայք պարտին հեռու կենալ պարելէ . վասն զի առանց շնորհի եւ երիտասարդական շնորհալի շարժմանց , ծիծաղական երեւոյթ մը

կ'առնուն : Այդպէս է նաեւ սպիտակ կամ վարդեգոյն զգեստաւորիլ : Ատոր հակառակ վարուող տիկնայք իրենց տարիքին վրայ անխնայ դիտողութիւններ կը հրաւիրեն եւ խոհականութիւնն իսկ կը պահանջէ , որ յառաջացեալ տարիք մ'ունեցողն , երիտասարդական հաճոյից մասնակցելով , իւր նըմանեաց ծաղուն ենթակայ չընէ զինքն :



Փ Լ Ո Ւ Խ Զ .



« Նե՛սո հանդարտ և խաղա՛,
էթէ հորո՞սանես խէ՛ .
Թո՛ղ խաղ մը լինէ՛ տեղ խաղն
է՛ ո՛չ դառն դանձանք մը : »

Խ Ա Ղ

Թէպէտ ընդհանրապէս դեռատի տիկնայք չեն սիրեր թղթախաղն , բայց երբեմն կը պատահի որ ընկերային փոքր ակմբոց մէջ , պարագային պահանջմամբ , կը մասնակցին այդ խաղի : Խաղի նպատակը միայն զբօսնուլ է . սա կը գրգռէ միտքն եւ կը սրէ յիշողութիւնը : Ուխտին աւելի հաճելի է եւ տիկնայց համար շատ գիւրին :

Կը պատահի նաեւ որ խաղալ ուզուած խաղի մը խաղացողաց թիւը պակաս լինի . յայնժամ ներկայք կրկնակի շնորհակալ պէտք է լինին , երբ դեռատի տիկին մը կարենայ եւ հաճի պակասելոյն տեղը բռնել : Ո՛վ որ այսօրինակ պարզ զբօսանաց համար կարգադրեալ խաղի մը մասնակցիլ որոշէ , պէտք չէ նշանաւոր խաղացող մը լինի , այլ միայն

հարկ է ուշադրութեամբ խաղալ եւ ջանալ ըստ կարելւոյն ուղղութեամբ վարուիլ : Անուշադրութեամբ խաղալը , խաղակիցներու դէմ անյարգութեան նշան է : Խաղի ատեն պէտք է մեծ հանդարտութիւն ունենալ եւ միշտ անտարբեր մնալ թէ այլք լաւ կամ դէշ թուղթ կ'առնուն : Ո՛ եւ է պարագայի մէջ ո՛չ վշտանալու եւ ո՛չ ալ ուրախանալու չէ , զի սոքա դէշ տպաւորութիւն մը կ'ընեն միւս խաղակցաց վրայ , դատողութեան մեծ պակասութիւն մը ցոյց կուտան եւ խաղին գլխաւոր նպատակն եղող զբօսանքը կը խանգարեն : Ուստի զգուշանալու է նաեւ ուրիշ նիւթի մը վրայ մասնաւորապէս խօսակցելէ , եւ նոյն իսկ խաղին վրայ շատ խօսելու չէ , այլ պէտք է գլխաւորաբար գլխոյ եւ յիշողութեան թողուլ աշխատութիւնը քան բերնի :

Կը կարծուի թէ խաղի ատեն կարելի է ո՛ եւ է մէկու մը բնաւորութիւնը ճանչնալ . այս ուղիղ լինի , թէ՛ ոչ , սա՛ ճշմարիտ է թէ ստուգիւ մարդ իւր տկար կողմը կը ճանչցընէ . ուստի խաղի ատեն անձին տէրը լինելու է , եւ որպէս ըսինք , անտարբեր եւ զուարթ հանդարտութիւն մ'ունենալու է : Հետեւապէս վճիռը նպատաւոր կը լինի միշտ :


Վիճաբանութեան տեղի տալը խիստ դժպչի է եւ ի վեր կը հանէ ամբարհաւած ու կոռուսէր բնաւորութիւն մը , որ ինքնին իսկ չկրնար զսպուիլ : Կան նաեւ կանայք , որք շատ կը սիրեն թղթախաղն , եւ այս ո՛չ թէ զբօսանաց , ո՛չ , այլ շահու համար . դոքա ազանութեան եւ ինքնասիրութեան գձուձ գրգամանց տէր բնաւորութիւններ են :

Նրբեմն տան մը տիկնայք հիւրոց վրայ մեծ բռնութիւն կը դործածեն, հակառակ նոցա վճռական մերժման՝ խաղի պարտաւորելով զանոնք. այդպիսիք ամբողջ գիշերն ապաբաղդ կը համարին զանճինս, վասն զի ոչ միայն չեն կրնար դբոսնուլ այլ եւ իրենց մասնաւոր միտումներն ու հաճոյքը չեն կարենար գոհացընել :

Պէտք չէ տարակուսիլ, թէ բազրի խաղերն ալ բարեհամբաւ տանց մէջ աններելի են :

Յիշեմք աստ, թէ խաղի թուղթերը միշտ նոր եւ առ առաւելն՝ միայն մէկ անգամ դործածուած լինելու են : Նշանք՝ եթէ հարկաւոր լինին, պէտք է խաղի սեղանին վրայ դանուին : Փղոսկրէ եւ սատափէ կամ եփենոսէ շինուածք աւելի ընդունելի են :

Սեղանին ամէն մէկ անկեան վրայ լոյս դրանուելու է :



Փ Լ Ո Ւ Խ Է .



« Մարտիկ կոփան, կը դեմնեն
և կը ճանչան զիբարս,
« Վերստին բաժնուէլու համար
ի միտանց : »

ԿԱՆԱՆՑ՝ Ի ՃԱՆԱՊԱՐՀՈՐԳՈՒԹԵԱՆ,
ՕՏԱՐ ՏԱՆՅ ՄԷՋ ՕԹԵԻԱՆՍԾ ԱՏԵՆ ՈՒՆԵՆԱԼԻՔ
ՎԱՐՄՈՒՆՔՆ ԵՒ ՊԱՐՏԻՔ ՀԻՐԸՆԿԱԼՈՒԹԵԱՆ

Ներկայ դարուս սկիզբը, կնոջ կամ օրիորդի մը համար յոյժ վտանգաբեր էր հեռաւոր ճանբորդութիւն մ'ընել. բայց այսօր կարի սովորական եղած է այդ : Ուստի աւելորդ չէ ճշդել այն կէտերն, որք ճանապարհորդող տիկնոջ մը համար պիտանի են :

Նախ եւ յառաջ ճանբորդութեան զգեստուց համար զիտել պէտք է, որ բաց գոյն պաստառք նախապատիւ են սեւագոյններէն, վասն զի փոշին մեծ թշնամի է տիկնայց արդու-գարդին :

Ի տան ձգել պէտք է պակք, ապարանջանք եւ այլն. եւ պարզ գլխարկ մը, պատշաճ մուճակք

եւ թեթեւ ու կակուղ վերարկու մը կրելու է :

Առանձին ճանապարհորդող տիկնայք անհաճոյ դիպաց տեղի չտալու համար պարտին միշտ տիկնայց յատկացեալ տեղերը նստիլ ի շոգեկառս :

Հին առակ մը կայ, որ կ'ըսէ թէ՛ « ճանբորդութիւնը կը կրթէ զմարդ : » Այո՛, ստէպ խնդիր է թէ՛ մարդ որո՞ւ հետ կը ճանբորդէ : Ի հնուճն, յորում դեռ երկաթուղիք չկային եւ սուրհանդակով կը լինէին ուղեւորութիւնք, ժամանակ ունէր մարդ եւ կրնար մէկու մը մերձենալ եւ անոր հետ միահաղոյն՝ բնութեան եւ նորա գեղեցկութեանց վրայ խօսակցիլ, եւ այս կամ այն բանին վրայ մին՝ միւսին ուշադրութիւնը դարձնել, սքանչանալ եւ խորհրդակցիլ. եւ ահա յայնժամ ճանբորդութիւնը կը կրթէր զմարդ :

Իսկ այսօր, որ մարդ կէս քուն կէս արթուն կամ լռիկ մտածելով եւ խոնջեալ՝ միայն երթալիք տեղւոյն վրայ կը խորհի եւ ամայի դաշտերու մէջէն սլանալով կ'անցնի, այդպիսի վիճակ մը, ուր մարդուս բնութիւնը կատարելապէս կրաւորական է, նուազ կրթիչ կրնայ լինիլ :

Որպիսի՛ հաճելի ներդործութիւն մը կը պատճառէր մարդուս բնութեան վրայ սուրհանդակի շեփորի հնչիւնը, դաշտի մը միջավայրին մէջ : Ամէն մէկ տերեւ, ծառ, ամէն մէկ տեսիլ գեղեցիկ էր եւ գրաւիչ եւ բնութեան գեղեցկութեանց եւ մեծվայելչութեան վրայ տեղի ունեցած շարունակական փոփոխումն հաճելի էին : Մարդուս հոգին կ'ընդլայնէր եւ կը կրթուէր իւրաքանչիւր ներքին փոփոխմանց : Իսկ այսօր սուլչի մը գալարուն ձայ-

նը, դաշտի մը մօտենալը կ'իմացընէ, զոր մեծ արագութեան պատճառաւ կամ ծառոց միահաղոյն տեսեամբ անկարելի կը լինի նշմարել : Այս է ճանբորդութեան այժմու եղանակին պատճառած կրթութիւնը : Մասնագիտութիւն մ'է արդարեւ ճանբորդելն՝ մանաւանդ տիկնայց համար. ուստի աստ պարտիմք լոկ մարդկան կրթութեան վրայ խօսիլ : Գժբաղդաբար երկաթուղեաց գիւտէն հետէ, մարդկային սեռից մտաց եւ հոգւոյ ուղղութիւնը, եւ չմոռնանք ըսել, թէ նոյն իսկ երկրիս ամբողջ մակերեւոյթն, ուրիշ եղանակ մ'առած է. բայց այդ ալ ուրիշ խնդիր մ'է : Անոնք որ առիթ ունեցած են հետի կամ կառօք կամ ձիով գերմանական երկիրները ճանբորդել, կրնան բաղդատել հին եւ նոր ճանբորդութեան եղանակներն :

Որպէս ըսինք, առանձին ճանապարհորդող տիկնայք պարտին միշտ տիկնայց յատուկ տեղերը նստիլ : Գժբաղդաբար, վայելուչ քաղաքավարութիւն մը յոյժ հազուադիւտ է այժմու ճանապարհորդաց քով : Աննկատողութիւնք այնչափ յառաջ դացած են, որ բազումք այնչափ տարածեալ կը նստին, որ այլք, յաճախ վեհերոտք, իրենց տեղերուն վրայ սեղմուած կը նեղուին. իսկ տիկնայց յատուկ տեղերն այդ անպատեհութիւնք շատ դիւրաւ չեն պատահիր, եւ եթէ պատահին իսկ, դեռ աստի տիկին մը միշտ աւելի դիւրաւ կրնայ դիմախօսել իւր նմանեաց : Եթէ չկարողանայ իսկ ինքն անձամբ դիմակալել եւ իրեն պատճառեալ նեղութենէն ազատիլ, յայնժամ կայանի պաշտօնէից կը դիմէ :

Առանձին ճանապարհորդող տիկնայց համար միշտ օգտակար է, կառխուժի դադարաց ատեն չբաժնուել իրենց տեղերէն. սակայն երբ նախահոգութեամբ ճանապարհի ուտելիք հետ չեն առած եւ պէտք ունին, աւելի լաւ է, որ կայանի մէջ միշտ պատրաստ գտնուող ծառայից բերել տան դայնս, փոխանակ անձամբ երթալու մինչ ի ճաշարան, ուր բազմութեան մէջէն անցանելը անկարելի կը լինի յաճախ:

Շողեմաուց մէջ, առանձին ճանրորդող տիկնայց համար, մասնաւոր խուցեր կան միշտ. սակայն երբ օղը ներէ տախտակամածի վրայ մնալ, դեռատի տիկնոջ մը համար պէտք է տեղ մը ընտրել եւ նստիլ անդ, փոխանակ ուղեւորաց մէջ ման գալու:

Երբ երկրի մը գեղեցկութիւնը մասնաւոր ըսքանչացման պատճառ լինի, այդ ներքին սքանչացումն պէտք է ինքնին զգալ. եթէ կարելի չլինի իսկ, պարտի խիստ հանդարտ կերպով արտայայտել զայդ սքանչացում, առանց շարժմանց կամ եռանդուն ցոյցերու, որ կրնան շարժել այլոց ծիծաղն:

Յայտնի է թէ, ատոտ որպէս եւ միշտ, արք պարտին յանդիման տիկնայց յարգելի, բարեկիրթ եւ պատուասիրական վարմունք մ'ունենալ: Ուստի պատշաճից պահանջումն է որ երբ այդ մը լաւ տեղ մ'ունենայ, տիկնոջ մը ընծայէ զայն: Տիկինը պարտի առանց երկար խօսելու, շնորհակալութեան երկու բառով քաղաքավարաբար ընդունել իրեն ընծայեալ տեղն:

Երբ խօսակցութիւն մը բացուի, զգուշանալու է ամէն ծայրայեղ վարմունքէ. ո՛չ պէտք է հպարտ եւ կսկծեցուցիչ չեղոքութիւն մը եւ ո՛չ ալ չափազանց մտերմութիւն ցոյց տալ: Պարկեշտ եւ միջին վարմունք մը լաւ կրթութեան նշան է. խօսակցութեան ատեն լաւ կը հասկցուի օտարականի մը կրթութեան աստիճանը եւ աղոր հետեւութենէն կախումն ունի խօսակցութեան շարունակութիւնը կամ վերջացումն:

Ճանրորդութեան ժամանակ, երբ դեռատի տիկին մը իրեն անծանօթ եղող անձանց մերձենայ եւ մասնաւոր վարմանց մէջ մտնէ, իրաւամբ թեթեւամիտ եւ ծանծաղաբարոյ ցոյց կուտայ զանձն:

Ճանրորդութեան ատեն, շատ դիւրին է քողարկել բնաւորութիւնը, մանաւանդ յանդիման օտարականաց: Երբ մարդ օտարականի մը միայն արտաքին լաւ երեւոյթէն եւ հաճելի վարմունքէն զբաւեալ՝ ուղէ անոր հետ մտերմանալ, պարտի միշտ մտածել, թէ այդ հարեւանցի ճանաչողութեամբ, բնաւորութեան ճշմարիտ յատկութեանց վերահասու լինելը շատ դժուար է, եւ միշտ այդ անձնաւորութեան ճշմարիտ բնութեան անտեղեակ կը մնայ: Շահախնդիր ինքնասիրութիւնն ու զանձն ընդ քողով պահելն այնչափ տարածեալ են, որ միայն արտաքին նկատողութեամբ մերձենալու է օտարականի մը, երբ մարդ միայն արտաքին երեւոյթէ գրաւեալ զգայ զանձն:

Եթէ ոք ճանրորդութեան ատեն այնպէս տեղերու հանդիպի, որոյ մօտակայքը բնութեան գեղեցկութիւններ կամ տեսնելու արժանի արուեստ

տական գործեր կը գտնուին , անհոգ գտնուելու չէ տեսնելու դայնս : Յաճախ , երբ նոյն տեղացի բընակչաց հարցանէ մարդ , այդպիսի քննութեանց համար անպիտան եւ անհետաքրքիր դիտողութեամբ ետ կեցնել կ'ուզեն : Տեղացիք իրենց երկրի մէջ գտնուած բնական գեղեցկութեանց եւ արուեստապէս ուշադրութեան արժանի եղող իրաց վերջին աստիճան անարգող են . ուստի , այդ պարագայից մէջ պէտք է ի ձեռին ունենալ նոյն տեղւոյն գիրք - առաջնորդն :

Երբ պարագայից բերմամբ պէտք լինի՝ նշանաւոր անձանց հետ տեսակցիլ , օգուտ քաղելու է ի դոցանէ՝ ընդարձակելով մտաւորական կարողութիւնն եւ ճոխացնելով գիտութիւնն . այդպիսի ճըգունք անդուլ եւ աշխոյժ մտաց տէր լինելու ապացոյց են եւ նպաստաւոր ներգործութիւն մը կ'ընեն :

Եթէ ոք ուզէ տեղ մը օթեւանիլ , ամենէն աւելի յաճախեալ օթեւանը հարցանելու է . վախնալով ներս մտնելու չէ , այլ պէտք է լրջօրէն խօսիլ համարձակ :

Եթէ ոք բարեկամ ընտանիքէ մը հրաւիրուի օթեւանիլ , կանխաւ պարտի խորհիլ , թէ կրնա՞յ իւր կենցաղավարական սովորոյթէ այնչափ ատեն ետ կենալ եւ յարմարիլ օտար տան սովորութեանց ու կարգադրութեանց . վասն զի պէտք չէ յուսալ թէ ուրիշի մը տան կարգադրութիւնք հիւրի մը բնաւորութեան կը յարմարին : Աններելի քմահաճոյից եւ աննկատ բնաւորութեան տէր եղողները , հիւրասիրական վայելից ատեն , երկար տարիներէ

հետէ արմատացեալ բարեկամութեան մը խզման պատճառ կը լինին :

Բարեկիրթ եւ երախտագէտ հիւր մը միշտ կը ջանայ իւր ասպնջականին ըստ կարելւոյն քիչ նեղութիւն տալ . երբէք չխանգարեր տան սովորական կարգը . ճիշտ ճաշի ժամանակ ներկայ կը գտնուի միշտ . նուազ ծառայել կուտայ . ընտանեաց կենաց եղանակին կը յարմարի եւ միշտ կամակատար եւ հաճելի կը լինի : Եթէ ծառայութեան մէջ մերթ պակասութիւն մ'ալ պատահի , անտես կ'առնէ զայն . միւս կողմանէ պէտք է որ մարդ չգովէ անդադար ամէն կարգաւորութիւն , առանց իրազեկ լինելու ո՛ր եւ է գործի , զի այդ՝ պարզաբար շողոքորթութեան կարգը կը մտնէ : Պէտք է մերթ ընդ մերթ դիտցնել տայ թէ ճշմարիտն ու բարին գնահատել գիտէ , բայց այդ ալ միայն յարմար առթի : Երբ մարդ բացարձակ ու մեկին հարցում մ'ընդունի , կրնայ յայտնի եւ պատուաւորապէս պատասխանել եւ իւր անկեղծ կարծիքն յայտնել :

Պէտք չէ առանին եւ ընկերական լսնդրոց խառնուիլ , եւ նոյն իսկ ընտանեաց հետ ո՛ր եւ է առնչութիւն ունեցող դիպաց համար վերջին աստիճան դադոնապահութիւն գործածելու է :

Եթէ պատահին այնպիսի տեսարաններ , որ անհաճոյ լինին հիւրին եւ բարկութեան ատեն , մոռցուելով հիւրին ներկայութիւնն , այնպիսի խօսքեր լինին զորս պէտք չէ լսել ինքն , յայնժամ պէտք է հեռանալ ըստ կարելւոյն աննշմարելի կերպով : Գլխաւորապէս պէտք է միշտ լսածներուն

վրայ լռութիւն պահել, նա մանաւանդ երբ՝ իբրեւ հիւր՝ օտար ընտանիքի մը մէջ կը գտնուի : Այդ պարագայից մէջ անխորհրդապահութիւնն անուղիղ եւ վատ բնաւորութեան մը արտանիշն է :

Երբ մարդ յոյժ մտերիմ բարեկամութիւն մը չունի ընտանիքի մը հետ, պէտք չէ առանց տեղեկութեան այցելել եւ կամ հրաւէր չընդունած առանց կանխաւ ծանուցման երթալ, կարծելով թէ հաճելի կը լինի իւր այցն :

Այս, ո՛չ թէ առանին կարգաւորութեանց անհամաձայն լինելուն համար, այլ այդու կրնայ լինի որ մարդ այնպիսի անյարմար ժամու մը երթայ, որ ընտանեկան տխուր կամ անհաճոյ միջադէպ մը սկսած լինի, եւ այդ պահուն հանդիպող այց մը երկու կողման համար ալ անփափաքելի լինի :

Ուստի պէտք չէ չարաչար գործածել հիւրական իրաւունքն . ըստ պարագայից կրնայ մարդ վաղ կամ անազան տաղտկալի լինիլ . պէտք է ի նկատ առնուլ զայս, եւ պատշաճութիւնը կը պահանջէ որ մարդ իւր այցը վերջացընէ, մինչեւ իսկ երբ իւր հիւրընկալին հետ ընդերկար մնալ որոշեալ լինի . պէտք է պատշաճ պատրուակ մը գըտնել մեկնելու համար :

Սովորութիւն է, որ ընդհանրապէս այցելուութիւնը կրկնել կը խնդրուի . երբեմն ալ միայն առ հարկի քաղաքավարութեան : Ուշադիր հիւր մը, դիտելու է թէ այդ խնդիր, լոկ քաղաքավարական ձեւ մ'է, թէ՛ ճշմարիտ բարեկամական փափաք :

Ո՛ր որ ընդունելութիւնը բազում դժուարութեամբ տեղի կ'ունենայ, պէտք է տաղտկալի չը

լինելու համար խիստ քիչ անգամ այցելել :

Յայտնի է թէ մեկնելու ատեն, սպասաւորաց սովորական նուէրը տալու է . արդարեւ, բարձր դասուց մէջ, ուր սովորութիւնն ու վայելչութիւնը կը պահանջեն զայդ, երբ մարդ չկրնար եւ կամ չուզեր, աւելի լաւ է որ այդ օրինակ հրաւէրէ մը հետու կենայ քան ինքզինքն անյարգի եւ անպատիւ ընէ :

Ո՛վ որ հիւր մը կ'ընդունի, պարտաւոր է ամենայն ինչ ընել նորա հանգստեան համար . այդ պարտուց անխոյժ լինելն, առ նա պատկան յարգանաց պակասութեան նշան է : Այդ մասնաւոր հոգածութեան չափն ալ անցընելու չէ, զի շատ հիւրեր կը տաղտկանան այդպիսի չափազանցութեանէ : Բնականաբար, ազատ թողլոյ է հիւրն իւր կամաց մէջ, փոքր ինչ լրագիր կամ նշանաւոր գըրքեր ընթեռնոյ, կամ շրջագայելու եւ կամ փոքր աշխատանայ :

Եթէ ոք հիւրեր հրաւիրէ իւր տունը, պարտի ի նկատ առնուլ իւր նիւթ ա կ ա ն վ ի ճ ա կ ն , որպէս զի օտարականք չկարենան ո՛ր եւ է կերպով տեղեկանալ այն վիճակին, որ երկարատեւ բնակակցութեան մէջ անխուսափելի է :

Ք Լ Ո Ւ Խ Ը .



« Քաղաքավարութեանը քաղաքակրթութեան
դասարան է, որ կուսման ունի ցուցնել
բարին՝ ո՛ր որ է. և բերել անոր՝ ուր որ չէ: »

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Քաղաքակրթութեան չափ հին է նաև քաղաքավարութիւնը. միայն թէ քաղաքավարութեան կիրառութիւնը՝ դարուց ընթացքին հետ՝ զանազան փոփոխմանց ենթարկուած է: Այսօր բազումք քաղաքավար կը կարծեն զանձինս, երբ ընկալեալ ձեւակերպութիւններ կատարեն և քաղաքավարութեան զանազան ձեւերը դիտնան: Բազմաց համար քաղաքավարութիւնը դիմակ մ'է, զոր ի պատեհ առիթս կը գործածեն:

Բայց պէտք չէ այդպէս լինի. սրտին պէտք է լինիլ այն հիմն՝ որոյ վրայ մեր քաղաքավարութիւնը կը հաստատուի. անկեղծ անարգամեծարութիւն պէտք է լինի մեր վարմունքն առ միմեանս:

Պարտ է դաւանիլ զկինն իբրև բնական պահական փափուկ նկատմանց և ուշադրութեանց.

նա պարտի բանիւ և օրինակաւ, ներդաշնակութեան և քաղցրաբարոյութեան վարժեցնել իւր մերձակայները:

Ըստ ամենայնի դնահատեալ ազդեցութիւն մ'է այս, զոր իզական սեռն յատկապէս արանց վրայ ներգործելու կոչուած է ի նախախնամութենէ: Գանգատիլ թէ արք նուազ կը յարգեն զտիկնայս, ապացոյց է թէ իզական սեռն իւր գերազնիւ պարտաւորութիւնը չկատարեր պատշաճապէս:

Ինչո՞ւ բաղում կանայք նուազ մեծարանաց կամ անվայել վարմանց կ'ենթարկին. - վասն զի պարտուց զգացումն, իրենց կնային արժանեաց ճանաչողութիւնը կորուսած են:

Կինը պարտի յարգել տալ իւր ազդեցութիւնը փափկապէս և լուրեայն իմն. կինը պէտք չէ որ իւր կամայ պաշտպանութեան համար բարձրացնէ ինքզինքն. պէտք չէ կշտամբանաց, ծաղու և արհամարհանաց մէջ շողացնէ այն զէնքն՝ որով կը յաղթուին արք:

Օրիորդի մը համար, մօրն օրինակն անհամեմատ կարեւորութիւն ունի:

Քաղաքավարութեան ձեւերն ու եղանակն երկու տեսակ են. կարելի է կոչել զայնս ներքին և արտաքին:

Առաջինք այնք են, որ այլոց բարեխառութեան համար ձգտարտապէս անկեղծ արտայայտութեամբը կը գործածուին. և երկրորդք այնք են, որ լոկ արտաքին ձեւերով կը լինին նոյն պատուանքն: Առաջինք, իբրև զուտ մարդկային, ուղղապէս ի սրտէ կը բղխին և ամէն քաղաքակրթեալ ժողո-

վրդոց մէջ միեւնոյն են . վերջինք կը զանազանին ստեպ եւ հակառակ են միմեանց , այնպէս որ ազգի մը քաղաքավարական ընթացքն ուրիշ ազգաց մէջ անբարոյական եւ կակծեցուցիչ կը ճանչցուի : Մինչդեռ ի Գերմանիա այրը կը բարեւէ նախապէս զկիւնն , Անգլիոյ մէջ ընդհակառակն է . անդ մեծ անարգանք մը կը նկատուի՝ երբ այրը բարեւէ նախապէս զկիւնն : Պ ա տ շ ա ճ ի ց տ ե ս ա կ է տ ո վ շ ա տ իրաւացի է այս :

Ճշմարիտ քաղաքավարութիւնը սրտին մէջ կ'արմատանայ . հոմանիշ է եղբայրսիրութեան եւ ճշմարիտ արտայայտութիւնն բարեսէր բնաւորութեան : Մարդասիրական այդ փոփոխակի արտայայտութիւնը , զոր ի տղայ տիոց պէտք է զարթուցանել , պահպանել եւ խնամել բնաւորութեան մէջ , հիմն է նաեւ ապագայ առտնին եւ ակմբոց ընկերական կենաց . արտայայտութիւնն է ճշմարիտ քաղաքակրթութեան եւ բարձր ու հասարակ կենաց մէջ ալ ազգի մը բն աւ ո թ ու թ իւ լ ն ը կը ներկայացընէ :

Եւ որովհետեւ զգացման եւ զգայութեան փափկութեան մէջ իգական սեռն աւելի բարձր կ'երեւի քան զարականն , առաջինք ի բնէ մասնաւոր կոչումն ունին , ընկերակցական եւ ընկերական կենաց յարաբերութեան ներդաշնակութիւն տալու եւ սոցա վարմունքէն կախումն ունի ազգի մը հանրային կամ մասնաւոր կենաց մէջ ունեցած իմացականութիւնը : Եւ առ ա՛յդ իսկ կոչուած են կանայք , երկու կողման համար դործել , փափուկ եւ ճշմարիտ զգացման հետեւողութեամբ . մասնաւոր կենաց մէջ՝

սերնդի աճման եւ առտնին կրթութեան ձեռնհասութեամբ . հանրային կենաց մէջ՝ ընկերական յարաբերութեան ձեռնհասութեամբ :

« Եթէ կամիս ճշմարտիս տեղեկանայ թէ ի՛նչ պատշաճ է ,

Տեղեկութիւնն ա՛ն ազնուական կիներէ : »

Ա՛րդ , իգական սեռին ճշմարիտ ազատագրութիւնը , ճշմարտապէս բարոյական կենաց կատարելագործութենէ կախումն ունի . իգական սեռն իւր փափուկ զգացմամբ կը ներդաշնակաւորէ զայդ կեանք , եւ իւր վարմունքէն կախեալ է ազգի մը իմացականութիւնը , մտային կարողութեան բարւոք կամ յոռի վիճակն , եւ այնու՝ նիւթական , իմա՛ մարմնական վիճակն եւ հետեւապէս առ ո ղ ջ ու թ իւ լ ն ը :

Իգական սեռը՝ տանը տիրուհին՝ այսինքն մայրըն միանգամ ընդ միշտ կենաց այն հիմն է , որ ճշմարիտ քաղաքակրթութիւնն իւր վրայ կրել եւ աճեցընել կոչուած է . կենաց այն արեւն է , որով ամենայն ինչ կը զանգուի եւ կը շարժի եւ որ իւր լոյսն զգացման փափկութեամբ կը տարածէ եւ այդու ճշմարիտ կենաց ջերմութիւնը կը սփռէ ի վերայ ամենայնի , որք ընդունակ են ամենայն բարեաց , ճշմարտին եւ գեղեցկին , ընդունակ են ճշմարիտ դաստիարակութեամբ եւ բարոյականի ճշմարիտ տիպարաւ :

Իգական սեռը պարտի միշտ առաջի աչաց ունենալ այս ճշմարիտ եւ բնատուր ազդեցութիւնը . կենաց այս ճշմարիտ ու բարձր պարտաւորութիւնը :

Իգական սեռն իւր այս ամենաբարձր եւ ամեն

նասուրբ կոչմամբ գեր ի վերոյ է քան զարականն . եւ բարեբարոյ , կիրթ ու լուսամիտ այր մը աստ ոչպէս եւ միշտ կը հպատակի այդսիսի իշխանութեան , ո՛չ թէ ի ցոյց պարզ քաղաքավարութեան , ո՛չ , այլ ի պարտաւորութենէ ճշմարտութեան եւ ճանաչողութեան :

Սեոից եւ ո՛չ մին ըստ ինքեան կատարեալ ամբողջ մ'է , այլ կ է ս մը եւ հետեւապէս անկատար լինելով՝ իւր կատարելագործման համար պէտք ունի ուրիշի . զայս գիտենք մեք , կը զգամք եւ կ'ընդունիմք . օր է ն ք է այս :

Այս օրէնքը հաստատ է , դրական է եւ պէտք չունի յապաւման . ըստ ինքեան կատարեալ է , այլ ո՛չ ի գործադրութեան , զի գործադրութիւնը կախումն ունի ազգի մը վայրկենական կրթութեան աստիճանէն , անհատից կրթութենէն , դաստիարակութենէն եւ այս հիման վրայ հանգչող երկու սեռի բարոյական յարաբերութենէն , իմա՝ քաղաքավարութենէն , որ է ճշմարտապէս անկեղծ անարգամեծարութիւն եւ օրինաւոր սէր առ մերձակայն . սա՛ պէտք է կազմէ ընդհանուր մարդկութեան յարաբերութեան հիմն :

Քաղաքավարութեան արտաքին ձեւերն , որք մասամբ իւրիք իրր օրէնք են , հանրային եւ մասնաւոր կենաց մէջ տեղի ունեցած արտաքին յարաբերութեանց եւ վարմանց կը պատկանին :

Յոյժ քաղցրաբոյր ծաղկամբ կը վերթի օրիորդաց մատաղ տիոց կոկոնն՝ երբ մօր ձեռքն քաղցր ու փափուկ կերպով հսկեն նորա վրայ :

Չափահաս աղջիկ մը մօրն օրինակէն կ'առնու

այն վսեմ պարտուց գիտութիւնը , զոր քիչ մը վերջն ի կիր արկանել կոչուած է : Քրոջ՝ առ եղբայրն՝ սիրազեղ վարմանց մէջ մեծամեծ բաղդից աղբիւրը ծածկուած կայ . վասն զի քեռ անկեղծ բարեսիրութիւնը , ղեռահաս եղբօր հոգւոյն մէջ , ճշմարիտ կնութեան վայել պատկառանքը կը զարթուցանէ :

Անջ ոգւոյն քաղցրայարդար աղիներէն , գեղեցիկն , ճշմարտին եւ բարւոյն ներշնչումն պիտի նուազի :

Ազնիւ կին մը պարտի մոռնալ զանձն իսկ , որպէս զի կարող լինի ըստ ամենայնի անձնանուէր հանդիսանալ :

Կանանց սեռին նուիրական ճակատադիրն է զոհուել աշխարհի :

Կինը շատ գերազնիւ ծառայութեան մը յատկացեալ է . ցամաքեցընել արտասուքը , մեղմել վիշտերն եւ ազնուագործութիւն ներշնչել յայրն , որ պէտք ունի նմա եթէ կը բաղձայ իւր կենաց պարտաւորութիւններն ուղղապէս կատարել :

Անձնուրացութիւնը կանանց սրտին մէջ խորապէս անկուած է . ո՛վ որ չգործածեր զայն՝ անփոյթ գտնուած կը լինի իւր վիսաւոր պարտուց համար :

Կինն առտնին շրջանակին մէջ այն բարի ըղձանոյն է , որ հանդիստ կը սփռէ իւր շուրջն , ո՛չ թէ յառաջխաղացմամբ այլ սիրով եւ համեստութեամբ , կարգաւորելով եւ յարգարելով :

Անկեղծ եւ բարեսիրտ լինելու է եւ առ ծառայս : Չափազանցեալ քաղաքավարութիւնը՝ շողո

քորթութեան, կեղծաւորութեան եւ ստախօսութեան մէջ կը գործածուի. եւ անագնիւ անձանց յատուկ է :

Կանայք եւ օրիորդք իրենց քաղաքավարական մասնակցութեանց մէջ զգոյշ լինելու են. իւրաքանչիւր պէտք է լուսաւորել նոցա շնորհաց արեւով. Իգական սեռի անդամք պարտին նուրբ քողին շնորհաց մէջ, արթնութեամբ սնուցանել զեղեցիկ զգացման հուրն :

Մեծարանքը, կա՛մ քաղաքավարական ցոյց մ'է որով մարդ իւր յարգանքը կը ցուցընէ այլու՛մ եւ կա՛մ պատուասիրութիւն մը զոր ո՛ր եւ է առթիւ կ'ըսէ միում :

Բարեւելու կերպն ու եղանակը, գլխաւորապէս մեր բարեւել ուղած անձին մեզ հետ ունեցած յարաբերութենէ կախումն ունի :

Անցնելու ատեն, տիկին մը կը բարեւէ եւ բարեւ կ'առնու այնպիսի թեթեւ խոնարհմամբ, որ գլուխը միայն կը հակի :

Բարեւի մէջ պէտք է միշտ թեթեւ քաղցրութիւն մը լինիլ :

Կանգեալ բարեւելու ատեն, ոտից մին՝ միւսէն դոյզն ինչ ետ տանելով խոնարհելու է : Զգուշանալու է թեթեւօլիկ շարժմանէ, որպէս եւ զըժնեղիմութենէ :

Նստած ատեն պատահած բարեւը, լոկ գլխոյ չափաւոր հակմամբ կը կատարի :

Ի գնալն՝ տիկինն առն աջ կողմը կը գտնուի որպէս եւ ի կառս :

Երբ երկու տիկնայք լինին, յայնժամ սոքա

կառաց խորն եւ արք յետակողմն կը նստին. եթէ տիկնայք անայր լինին, յայնժամ տարեւորք պատուատեղին կը բազմին եւ շրջագայութեանց ատեն ալ դեռատիք միշտ տարեւորաց ձախ կողմէն կը քալեն : Այս եղանակը յարգելի է նաեւ նշանաւոր եւ բարձրաստիճան անձանց մօտ, առանց տարիքը միայն դիտելու : Սակայն քաղաքավարութեան այս մասնաւոր ցոյցերն եթէ չընդունուին, պէտք չէ շատ ստիպել, այլ նոցա կամաց հետեւելու է :

Դատողութեան տէր նշանաւոր կին մը իրմէ ստորինէն բարեւուիլ չսպասեր, այլ ինքն կը խօսի անոր հետ եւ կը նստի նաեւ պատուոյ տեղն, եթէ միջոցը շատ քիչ հեռի է : Նոյնպէս ստորնակարգ կին մ'ալ չկրնար բարձրաստիճան տիկնոջ մը խօսք ուղղել եւ ողջոյնատուութիւնը անձայն կը կատարի : Միայն թէ երբ բարձրաստիճան տիկինը խօսք բանայ, յայնժամ կրնայ խօսքի մտնել նա՛ առ որ ուղղեալ է խօսքն :

Աւելորդ իսկ է ըսել, թէ մտից ատեն, միշտ տիկնայք այրերէն առաջ մտնելու են : Այս կանոնի բացառութիւնն է սանդուխքէ վար իջնուած ատեն, յորժամ միշտ արք յառաջընթաց լինելու են : Մտերիմ եւ քաջածանօթ տիկնայք հասարակաց վայրեր իրարու հանդիպած ատեն, որպէս են՝ թատր, նուագահանդէս, եւայլն. պարզապէս կը բարեւեն զմիմեանս եւ կը զգուշանան համբուրի, զրկափարման եւ այլ ամէն բարեկամական ցոյցերէ : Հասարակաց վայրերու մէջ զգուշանալու է յամենայնէ, որ ներկայից ունն իրենց վրայ կը դարձընեն :

Երբ ոք թատեր կամ նուագահանդիսի մը սը-
րահէն ներս կը մտնէ, պէտք չէ դէմքն թատերա-
բեմին դարձնել, այլ դէպ յայն կողմ, ուր կ'եր-
թայ իւր տեղը գրաւելու: Բարձրաձայն խօսելու
չէ: Յոյժ անհաճոյ եւ վերջին աստիճան անկը-
թուծիւն է թատրերգութեան կամ նուագահան-
դիսի մը աւարտմանէ յառաջ դուրս ելնել եւ այ-
դու մնացելոց վայելումն խանդարել:

Յոյժ անվայել է, երբ դեռատի տիկին մը թա-
տեր կամ հանդիսի մը մէջ զիտակաւ հայի ժողո-
վրդեան. ներելի է միայն նայիլ ի թատերաբեմն:
Տիկնայք ո՛չ ծափով եւ ո՛չ կեցցէ գոչելով մասնակ-
ցելու չեն հաւանութեանց: Արուեստագէտ մը քըն-
նադատել եւ կամ դերի մը արժանեաց նկատմամբ
կարծիք յայտնելու համար չափազանց զգոյշ լինե-
լու է, վասն զի շուտափոյթ եւ սխալ վճիռ մը շատ
դիւրաւ յերեւան կը հանէ իւր կարողութիւնն եւ
հետեւաբար լաւ ճանաչողութեան եւ արուեստա-
կան ճաշակի պակասութիւն մը:

Այսպէս նաեւ մասնաւոր շրջանակաց մէջ,
ուր ընկերային ակմբէն մէկ քանի հոգի յանձն
կ'առնուն ո՛ր եւ է գործադրութիւն, շատ զգոյշ լի-
նելու է վճռոց: Գեռատի տիկնայք մերթ կ'եռան-
դաւորին եւ որ գէշն է՝ քրքիջ կը բառնան եւ կամ
ծիծաղելի բանի մը վրայ անդադար կը ծիծաղին.
բարեկիրթ տիկնայք գեղեցկի ճաշակին անվայել եւ
խանդարիչ եղող այս վիճակէն ինքնին զգուշանա-
լու են: Նթէ չկարենան իսկ ինքզինքնին բռնել,
յայնժամ լաւագոյն է օթեկաց խորը քաշուիլ:

Նթէ ոք ճառ մ'արտասանելու կամ նուագ մը

ի հանգէս ածելու առաջարկութիւն ընդունի եւ
կարող լինի յայդմ, պարտի առանց ծեփծեփման
կատարել ներկայից փափաքը. իսկ եթէ անկարող
է յայդմ, յայնժամ պէտք է որոշապէս մերժել զայդ:

Բացարձակապէս անվայել է որ ո՛ր եւ է բան
մը խօսիլ չուզողը, շարունակ աղաչանաց ենթար-
կի եւ աղով նեղուի:

Նթէ ոք ընկերական ակմբի մը մէջ եւ կամ
հարսանեաց գիշեր մը, բանախօսութիւն մ'ընել
ուղէ, պարտի զայն ամբողջապէս բերնուց դիտնալ.
ընդհատում մը եւ փոխանակ անձնիշխանութեան
եւ մտամբոյնութեան՝ շփոթութիւն մը, կը կորու-
սանէ իւր արդիւնքն եւ տխուր կշտամբանաց տե-
ղի կուտայ: Այդ օրինակ տխրառիթ վիճակէ ըզ-
գոյշ կենալու է ամէն ոք: Կան նաեւ այնպիսիք,
որ բանախօսութեան մ'ատեն չեն կարող այլոց հա-
յիլ. այդ ատեն լաւ է որոշ նիւթ մ'ընտրել եւ առ
այն հայիլ: Հարսանեաց գիշերը, բանախօսել ու-
զողը, հարսն ու փեսային առջեւ երթալով, թէ
ինքն ամբոյնութեան եւ թէ զունկնդիրս ի լուծիւն
բերելու համար կարճ դադարէ մը ետքը, երբ ա-
մէն ոք լուռ են, կը սկսի բանախօսել, հայելով
հարսին ու փեսային եւ համարձակապէս, որ աւելի
լաւ կը յաջողի քան մեծ ակմբի մը հանդէպ:

Կրնանք ցոյց տալ աստ, քաղաքավարութեան
վրայ մի քանի ընդհանրական դիտողութիւնք եւս:

Երբ ոք առ ինքն ցոյց տրուած քաղաքավա-
րութեան չպատասխաներ, եւ աննկատ կ'առնու
զայն, այդ պատճառ չէ վշտանալու կամ քաղաքա-
վարական ցոյցէ ետ կենալու. այլ այդ վարմունք

ապացոյց է կրթութեան ամենամեծ պակասութեան, որ կարեկցութեան արժանի է եւ ո՛չ թէ նման ելու :

Քաղաքավարութիւնը՝ սրտի ճշմարիտ կրթութեան արդիւնք է, որ բնաւորութեան բարեկրթութիւնը կ'ապացուցանէ . զի քաղաքավար եւ բարի լինիլ՝ հոմանիշ են : Քաղաքավարական ցոյցք բարի լինելու գործնական կերպերն են : Ո՛վ որ ճշմարտապէս բարի է, զայս ո՛չ կ'անգոսնէ եւ ո՛չ կը վշտացնէ, այլ միշտ քաղցրութիւն կը ցուցնէ . ստիպեալ է նա, չկրնար ուրիշ կերպիւ վարուիլ : Սրտի քաղաքավարութեան հետ պէտք է քաղաքավարութեան փափուկ տարբերութեան ճանաչումը գտնուիլ, որ աննշան պարագայի մը մէջ խի կը ջանայ հաճոյք պատճառել, բարերարել . այդպիսի քաղաքավարութիւն մը ո՛չ միայն բարի՛ այլ ազնիւ է :

Սէրն՝ որ քաղաքավարութեան եւ եղբայրսիրութեան արմատն է, կ'ընդլայնէ իւր եղանակն ընտանեկան եւ բարեկամական շրջանակաց եւ հանրային կենաց մէջ : Աստ ազատութիւն մը կայ բարեբարելու, մարդասիրաբար մէկգմէկու հետ եւ միմեանց համար աշխատելու եւ այդ ազատութիւնն ո՛չ ոք, ո՛չ մի օրէնք եւ ո՛չ մի զօրութիւն կ'արգելու : Այդ բարեսէր, բարեկամ եւ ճշմարիտ մարդկութիւնը, եղբայրսիրութենէ յառաջ կուգայ, որոյ գոյութիւնն է՝ սրտի կըրթութեան մշակումը եւ որոյ անունն է ճշմարիտ քաղաքավարութիւն :



Գ Լ Ո Ւ Խ Թ .



« Ար+ հեռամտն ազատութեան,
Ե- հանայ+ բարոյականութեան : »

« Ըսէ՛ Թն, որո- հեռ կը որեսայնս,
Ե- ես ըսէ՛մ +եղ լէ՛ ով ես որո- : »

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ ՕՐԻՈՐԿԱՑ
ԸՆԿ ԱՐՍ

ԿԱՆՈՆՔ ՎՈՐՈՒՅ . ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Եթէ 14-17 տարեկան պատանիք համատի օրիորդաց պէս ենթակայ չեն՝ իրենց վարմանցն ու դատողութեանց համար՝ խիտ քննադատութեանց, պատճառն սա՛ է որ օրիորդք այդ հասակի մէջ մըտաւորապէս եւ մարմնապէս առաւել բարգաւաճեալ են . եւ որովհետեւ այն օրէ հետէ յորում այդ հասակի օրիորդք կը սկսին օրիորդաց եւ ախիւսայց հետ տեսակցիլ, պատշաճից օրինաց եւ կնութեան պահանջքն հարկ ի վերայ կը դնեն, որ նոքա ընտանեանս, սովորին եւ ճանչնան ճշմարիտ կնութեան հանդամանքն, որպէս զի հասարակ կենաց

մէջ թեւակոխած ատեն , ընկերական կանոնաց պահանջմունքը կատարելապէս գոհացընեն :

Բայց ասկէց չհետեւիր թէ տղայք եւ պատանիք երբ քննադատութեան չեն ենթարկուիր , պէտք չունին հիմնական կրթութեան . ո՛չ , տղայք եւ օրիորդիկք ե՛ւս պարտին սրտի եւ հոգւոյ կրթութեան համար հ ա լ ա ս ա ր դաստիարակութիւն ունենալ : Մայրական կանխահոգութեան ամենաբարձր պարտաւորութիւնն է՝ երկու սեռերն ալ մայրական հ ա լ ա ս ա ր սիրով դաստիարակել , որով նոքա կարող լինին յանտիական հասակէ փոխադարձաբար բարեսէր լինիլ եւ այդու վարժիլ քաղաքավարութեան . վասն զի այդ փ ո խ ա դ ա ր ձ յարաբերութիւնը՝ բնական դաստիարակութենէն կախումն ունի , իմա՝ սրտի եւ բնաւորութեան մաքրութենէ . բարւոյն , ճշմարտին եւ գեղեցկին ճանաչողութենէ : Այդպէս դաստիարարակեալ բնաւորութիւնը , բնական եւ ճշմարտապէս բարեբաղդ բնոյթներ են , որ զայլս եւս ճ ը շ մ ա ր տ ի ւ երջանիկ ընել կարող են , եւ այս իսկ է , այո՛ , կենաց գլխաւոր նպատակն :

Դաստիարակութիւնը , որոյ նպատակն է միայն սրտի եւ հոգւոյ կրթութիւնը , դժբաղդաբար խեղադիւրեալ է . վասն զի բիրտ նիւթապաշտութեան եւ լոկ արտաքին երեւութից ժամանակը կը խեղդէ ճշմարիտ եւ մաքուր սէրն եւ չթողուր որ բարգաւաճի :

Առ որդիս սէրն , զարդիս չէ՛ այնպէս , որպէս էր ի հունմն . որոշ յետաքայլ մը տեսանելի է : Արդի դաստիարակութիւնը շատ պակաս է . բայց մեր

նպատակէն հեռու է այդ կէտ , վասն զի մեք կ'ուզեմք աստ չափահասներու համար խօսիլ , այն եւրիտասարդութեան համար՝ որ պատրաստ կայ մրտանել ի հասարակ կեանս եւ դիմագրաւել այն վրտանդաց , զորս իւր հետ կը բերէ այդ կեանք :

Թէպէտ մարդաճանաչողութիւնն այն փորձառական գիտութիւնն է , զոր մարդ անձնական համոզմամբ տակաւ առ տակաւ կը ստանայ , բայց ուրիշ տեսական վարդապետութիւն մ'ալ կայ , որոյ կանոնաց հետեւիլ պարտի օրիորդ մը , որպէս զի կարող լինի խուսափիլ այն բազմադիմի վտանգներէ , որոց կը սլատահի : Դաստիարակութիւնը , այո՛ , որպէս ըսինք , աւա՛ղ , առջինը չէ . գերմանական բնաւորութիւնը փոքր ինչ եղծեալ է ուրիշ ազգաց ներկայութեամբ . պարկեշտութիւնը ետ գացած է , եւ ծանրաբարոյութիւնն՝ որ գերմանացւոց յատուկ էր , չտեսնուիր իւր նախնի վիճակին մէջ *) :

Օրիորդ մը հասարակ կենաց մէջ մտած ատեն քիչ առիթ ունի արանց հետ ծանօթանալու եւ կարի նուազ փորձառութիւն եւ մարդաճանաչութիւն ստանալու , ուստի չկրնար որ եւ է մէկու մը բնաւորութիւնը ճանչնալ :

Օրիորդի մը սիրտն իւր մանկական զբօսանաց ատեն ունեցած ընկերին եւ խաղակցին կը համակրի ստէպ . բայց պէտք չէ որ հետեւի իւր զգացման . վասն զի , նախ՝ ինքզինքն ու իւր սիրտը չը ճանչնար զեռ եւ չկրնար գիտնալ թէ այդ տղայա-

*) Անիրաս ջենք Գլատուիք կարծեմք , երբ մեր ազգին համար ալ բսեք Գոյնը : Ծ . Թ .

կան սէրը, փորձառական, անկեղծ եւ ճշմարիտ է, եւ թէ կը համապատասխանէ՞ իրեն, երբ ինքն մէկ քանի տարիէն կենաց կատարելութեան եւ փորձառութեան մէջ բարդաւաճի. երկրորդ՝ դեռ կատարելապէս կարող չէ վճռել թէ ի՞նչ է այն երիտասարդին բնաւորութիւնն՝ առ որ հակում մը կը զգայ, մինչեւ իսկ երբ նա իւր այդ հակման կը պատասխանէ եւ ուշադրութեամբ կը նախապատուէ դայն: Մանաւանդ այժմ, դիւրաւ կը փոխուի երիտասարդի մը բնաւորութիւնն, երբ սա լաւ դաստիարակութիւն մը չէ առած. վիճակ մը՝ որ ինչպէս բազմիցս ըսինք, հազուադէպ չէ այսօր: Ուստի, օրիորդ մը պարտի զգուշանալ այլոց համար ունեցած դիտաւորութիւնն ու ըսածներն եւ վարմանց եղանակը ճանչնալ սովորիլ, որպէս զի ենթակայ չընէ դանձնն հասարակաց վճոց եւ շշուկներու, քանզի ամէն պարագայի մէջ ճշմարտութիւն մը պահուած կայ:

Օրիորդ մը կրնայ համակրել առ երիտասարդն եթէ արժանաւորութիւն ունի. բայց պարտի ջանալ զսպել նախապէս՝ խորին սէր մը:

Եթէ այդ մը, ի ներկայութեան մի տիկնոջ, խօսքով կամ վարմամբ վիրաւորէ պատշաճից զգացումն, դա անարգանք եւ նախատինք մ'է այդ տիկնոջ դէմ եւ սա լաւ կ'ընէ եթէ հեռանայ:

Շատ ծանր եւ խիստ է այն պայքար, երբ անձայն վճիռը կը ճանչցընէ թէ այն անձնաւորութիւնն առ որ խոր հակում մը կը զգայ մարդ, բարոյական պատճառներով անարժան է դորա: Քանի որ օրիորդ մը բարձրագոյն փառքն անկեղծ սիրոյ

մէջ կը գտնէ, ուստի պարտի ջանալ վերահասու լինիլ թէ այն անձնաւորութիւնն, որ իւր ամբողջ եան, իւր էութիւնը եւ աշխատանքն իրեն կը զօհէ, արժանի է նաեւ այն մաքուր եւ անշահախնդիր զոհաբերման զոր ինքն եւս կ'ընծայէ առ նա: Երջանիկ է այն օրիորդն, երբ կարող է այդ վճիռն ինքնին տալ: Այդպիսի դատողութեան մը համար փորձառութիւն պէտք է, եւ օրիորդ կամ դեռատի տիկին մը մեծապէս զգուշանալու է վաղ-վաղակի որոշում չտալ ինքնին, այդպիսի անքակտելի կապի մը ենթարկուելու, մինչեւ որ ինքն կարող չլինի ինքնահամոզմամբ այդ օրինակ վճիռ մը տալու, վասն զի իւր ամբողջ կենաց վիճակն այդ վճռէն կախումն ունի: Մանաւանդ թէ այդպիսի փորձառու կին մը, բոլորովին տարբեր թեկն մ'է իւր ամուսնոյն քան զայն անփորձ աղջիկ, որ դեռ հաղիւ կը զգայ իւր կոչումն, իւր պարտքը: Յաճախակի, ծնողք կը զոհեն իրենց աղջիկներն, որք երբեմն հազիւ դիտեն թէ ինչ կ'ընեն եւ մօր քմահաճոյից եւ փառասիրութեան կը համակերպին: Քիչ ժամանակ ետքը, երբ ճշմարիտ սէրն զգան եւ ճանչնան բռնական եւ ճշմարիտ սիրոյ տարբերութիւնն, ա՛նդ է անապերջանկութիւնը. դրժգոհութիւնը մուտ կը գտնէ տակաւ սրտին մէջ եւ անդորրութիւնը կը կորնչի:

Աններելի է անխիղճ ծնողաց այդ արարքն, որք փոխանակ իրենց զաւակաց ապագայն շինելու, կը զոհեն զնոսա, միայն անձնական քմահաճոյից եւ արտաքին երեւութի մը համար:

Արդարեւ, ո՛ւր որ սէրը կ'անդոյանայ կամ նիւ-

Թական այլ նկատմամբ ոտնակոխ կը լինի, եւ ո՛չ մէկ ազգային կամ ժողովրդական կեանք չկազմու-
ւիր. այդ կեանք կը յետադիմէ մտաւորապէս եւ
մարմնապէս: Կենաց գաղափարականը կ'անհետի,
գործելու ոյժը կ'անդամալուծի եւ վեր ի վայր կը
լինի ամենայն ինչ, վասն զի սիրտը՝ կենաց եւ ճը-
գանց ուղղիչը՝ դժգոհ է եւ չմասնակցի կենաց:
Ընդհակառակն, քանի՜ վսեմ, բարձր, ոգեւոր եւ
հանդարտ զգացում մ'է երբ մարդ կը զգայ թէ սիր-
տը կը մասնակցի կենաց ամէն ճգանց: Ծնելատէր
ծնողք, մարք ջանալու են նախ քան զամենայն
այս ճշմարտութիւնը ճանչցընել եւ ներկայացնել
միշտ չափահաս սերնդեան: Սիրտ եւ հոգի պէտք
է ի ճշմարտին ունենալ: Լոկ արտաքին հաճոյակա-
նութեան մենամոլութենէ խոյս տալու է. արտա-
քին տեսլեան մենամոլութիւնը, մայրական դաս-
տիարակութեամբ սեղմուելու, ջնջուելու է ի տղայ
տիոց. դէպ առ այդ ո՛ր եւ է սերմն կամ հակում ա-
ռաջին առթիւ ի հիմանց ոչնչացնելու է: Զգուշա-
նալու է ի պչրանաց, արտաքին երեւոյթով հաճոյ
լինելէ եւ գիտութեամբ՝ այն է՝ ամենագէտ լինե-
լու պչրողութենէ: Պէտք է միշտ աչաց առջեւ ու-
նենալ թէ խօսակցութեան եւ յարաբերութեան
եղանակին մէջ նախապատուութեամբ ընդունելի
բանը, ո՛չ թէ գիտութիւնն, այլ իզական շնորհա-
զեղութիւնն է. խօսակցութեան մէջ կարի՛ անկեղծ
եղանակ մը, աւելի հաստատ, վսեմ եւ ազնիւ
ներգործութիւն մը կ'ընէ քան լոկ գիտական հըմ-
տութիւն մը:

« Կնոջ ամենագեղեցիկ գարդն՝

Խոր շնորհքն ու արժանիքն է: »

ըսած է Շիլլէր: Բայց շնորհ եւ արժանաւորու-
թիւն արդիւնք են ներքին իմացականութեան,
արդիւնք սրտի եւ հոգւոյ՝ մարդկային էակին բար-
ձր եւ գերազնիւ զգացման: Շնորհիւ շառագու-
նիլն եւ արժանաւորութեամբ լուելը, ճշմարիտ կը-
նութեան ազնուագոյն եւ վսեմ վիճակն է: Իզա-
կան սեռը, ջանալու է յինքն ունենալ այդ բնա-
կան առաջնաւորութիւնը, զի իւր անձնական ար-
ժանեաց հիմն է այս: Իզական սեռն ամենաբարձր,
ամենաջերմ եւ ամենամաքուր սէր եւ մեծարանք
կը պահանջէ. սակայն նա լինչպէս կրնայ արժա-
նանալ եւ ընդունիլ զայն: Շքեղ զգեստի՞ւք, չա-
փազանց արդուզարդով եւ պչրողութեամբ, օ-
տար լեզուայ հարեւանցի եւ սիրող ուսմամբ, ա-
ռանց տաղանդ ունենալու՝ նուագածական վեր ի
վերոյ ծանօթութեամբ եւ այլ սնտոի բանի՞ւք.
ո՛չ, ամենեւին ո՛չ. այլ բնաւորութեան ճշմարիտ
կրթութեամբ եւ սրտի ու հոգւոյ մշակմամբ:
Ճշմարտապէս մարդկային այս ճանաչողութենէ եւ
զգացողութեան մէջ անկեղծ սիրոյ այս ամենաբար-
ձր ու վսեմ զգացմանէ է որ կի՛նն առաւել բարձր
կը հանդիսանայ քան զայրն. իւր յատուկ կոչումն
է այդ. եւ ցորչափ սէրն՝ վսեմ, ցորչափ սիրտն՝
ազնուագոյն մնայ, այնչափ եւ կի՛նն արարածոց
բարձրագոյնն ու ազնուագոյնը կը մնայ: Զայս
ճանչնալը, պահելն ու կազմելն, իզական սեռի
դաստիարակութեան ամենազլխաւոր պարտքն է.
վասն զի կի՛նն ընդհանուր մարդկային կազմութեան

եւ ընդունելութեան ճգանց , շարժմանց եւ կենաց կրողն է եւ նորա վիճակէն կախումն ունի մեծ մասամբ ընդհանուր ընկերական , իմա՝ ընտանեկան բարգաւաճումն , որ ամէն պետութեան կենսական հիմն կը կազմէ :

Այնն այրէն յոյժ տարբեր կերպիւ կը սիրէ : սէրն իւր յատկական կոչումն է , իւր էութիւնն ու համակ ճգունքն : Այդ օրինակ ճշմարիտ կնային սէր մը ամենայնի կարող է եւ կենաց ամէն վիճակի մէջ առն եւ ընտանեաց ապահովագոյն նեցուկն է :

Այդ անբիծ սիրոյ մէջ եւ այդ սիրով պէտք է որ կնութեան եղանակը սերունդէ ի սերունդ փոխանցանէ . յայնժամ միայն կրնայ մարդկութիւնը լաւագոյն վիճակի մը հասնիլ , նորա բարձր հեղիւ նակութենէն եւ ի նմանէ դաստիարակիլ եւ կըրթուիլ : Բայց այդպիսի ճշմարիտ սէր մը եւ մայրական գորով մը , այժմու ընդհանուր տիրող կարծեաց մէջ այնչափ հազուադիւտ է , որ այսօր դըժուար է գտնել ադամանդեայ հարսանիք մը *) : Սուրա պակասութեան պատճառն ալ արդի սեռից կենաց կարճատեւութիւնն է , վասն զի ճշմարիտ սի-

*) Գերմանացոց մեզ վաղեմի սովորութիւն մը կայ , որով այն ամուրք որ 25 տարի կենակցած են , հանդես մը կը տօնեն որ կը կոչուի արծաթե հարսանիք . 50րդ տարւոյն վերջն ալ նոյնպէս հանդես մ'ունին որ կը կոչուի ոսկեայ հարսանիք . 65րդ տարւոյն վերջը տօնուած հանդեսն է ադամանդեայ հարսանիք :

րոյ պակասութեամբ սերնդեան մը ոյժն եւս կը պակսի . այն ոյժն՝ որ մտաւորական եւ ֆիզիքական առողջութեան աղբիւրն լինքն կը պահէ . այն առողջութեան՝ որոյ գոյութենէն կախումն ունի սերնդեան մը կենաց տեւողութիւնն ու մտաւորական վայն :

Այդ պատճառաւ բարեբարոյ եւ լաւ դաստիարակեալ այր մը՝ կնոջ վրայ ճշմարիտ կնութիւն մը , ճշմարիտ կնութեան ընդթ մը կը վնտոէ , որոյ գոյութեան պատճառն է անկեղծ սէր . ուստի բարեբաղդ է այն անձն երբ գտնէ այդ ճշմարիտ կընութիւնը . վասն զի սա կրնայ միշտ բարձր կնութեան մը տեղը բռնել , մանաւանդ թէ այդպիսի կին մը տակաւ յինքնէ եւ ինքնին իւր սիրոյն մէջ եւ սիրովը կը կըրթուի եւ միայն առն միջոցաւ մտաւորական զրգման մը պէտք կ'ունենայ :

Արք պարտին սիրոյ մէջ այդ զրգումն ու մեծարանք՝ չքեղ , համեստ եւ պատկառելի եղանակաւ ընձեռել , եւ այդու՝ յարգանաց , ազդեցութեան եւ սիրոյ արժանանալ , որ պատկան է իրենց : Այլը ճշմարտիւ պէտք է արժանացընել զանձնն այդ մասնաւոր յարգանաց . այդ պէտք է իւր հաճոյական ջանքը լինի . եւ կարելի կը լինի այդ երբ մայրըն իւր որդւոյն ի աղայ տիոց ճշմարիտ մայրական սիրով ներկայացընէ այն յարգն ու մեծարանք զորս քաղաքավարական շարժամբ պէտք է ընծայել ի դական սեռին : Այս փոխադարձ անկեղծ եւ սրտանուէր վարմունք կը պարզէ , կը զարթուցանէ երկու սեռից անկեղծ յարաբերութեան մեծ գաղտնիքն եւ զիրար յարգելու , մեծարելու շարու-

նակական գործման մէջ կը պահէ , ի ճշմարիտ գոհոնանակութիւն ընդհանուր մարդկութեան : Առանց սրտի եւ հոգւոյ , սիրոյ եւ մարդասիրութեան այդ բարձր շարժման , որ ամբողջ մարդկութեան վրայ կ'իշխէ եւ կը ներկայացնէ եւ ի կատարելութեան կարող կ'ընէ , չպիտի յիշուէր ո՛չ մէկ մարդկային ընկերականութեան , ո՛չ մի մարդկային կենսակցութեան եւ գործակցութեան տեւական լինելն . այդ շարժումն է եւ կը մնայ ճշմարիտ քաղաքակրթութեան հիմն :

Առ իւր դուստրն ուղղած նամակին մէջ, Փօն Լամպէրդ մարքիզուհին սապէս կը գրէ . « Նթէ ի քեզ յարձակի սէր մը , զոր քու անձնական վճիռդ, քու պատուոյ եւ բարոյականի զգացումը չկարենայ վաւերացնել , եւ սպառնալով քեզ՝ քու ամբողջ հոգւոյդ իշխէ , խորհէ՛ թէ քու խինդդ խաբուսիկ է եւ թէ չուտով խոյս պիտի տայ ի քէն : Այդ սէր ի սկզբան ծաղիկ ցոյց կուտայ քեզ եւ թերեւս դու գուշակես թէ անոր ետեւ օձեր կրնան թաղչիլ . բայց քու սիրտդ՝ նորա հետ միաբան՝ կը պահէ իւր գաղտնի անվստահութիւնն , առ ահի թէ երբ բարձրաձայն խօսի , ուղղադատութիւնը կը զարթնու : Կիրքն այդպէս մեղմիւ իւր ցանցին մէջ կ'առնու զքեզ մինչեւ որ դու նորա գերին լինիս , մինչեւ որ նա քենէ աւելի ուժաւորի : Բայց յայնժամ վար կ'առնու իւր դահէն զբանավարութիւն , նա կ'իշխէ քեզ եւ կ'առաջնորդէ քեզ յանլուր վիշտըս . փոխան անդորրու եւ հանգստեան՝ փութանակի վրայ կը համին տառապանք ցաւալի , եւ քիչ մը ետքը առաքինութիւնդ կը տատանի եւ անմե-

զութեանդ ծաղիկը թառամեալ , ամօթ եւ կսկիծ ընկեր կը լինին քու ապագայ կենաց ճանբուղ մէջ :

« Ուստի , փախի՛ր , աղջիկս , երբ ընդհանրապէս անվայել կիրք մը զօրացնէ քեզ . փախի՛ր անմիջապէս երբ դեռ նոր որոմն կը ձգէ ի քեզ . թող ցաւի սիրտդ , զի սէրը դիւրութեամբ դուրս չվանուիր հողիէն . վասն զի դա բոյսի մը նման հաղարաւոր արմատաթելերով մեր սրտի շուրջն , մեր ներքին խորհրդոց եւ զգայութեան հետ կը կապուի Նթէ չկարենաս այդ մըրկին մէջ վերստին անձիդ տէր լինիլ , յայնժամ տկարութեանդ համեմատութեամբ ընթացիր , վասն զի կիրքն յաճախ առաւել կը զօրանայ երբ բռնի դիմակալես նմա . հեռացիր սիրոյդ պատկան ամէն բանէ . մի՛ խօսիր անոր վրայ եւ ջանա՛ բանավարութեամբ եւ հաստատ կամեցողութեամբ ձեռք բերել կորուսեալ հանգիստդ եւ հոգւոյդ խաղաղութիւնն : »

Արդարեւ , օրիորդի մը կենաց ամենանշանաւոր ժամանակն է , երբ սիրան՝ անդիմադրելի եռանդով երիտասարդի մը համար կը տրուի . ժամանակ մը , որ յաճախ նորա ամբողջ ապագայ կենաց վրայ կը ներգործէ . ուստի եւ ոչ մէկ կերպիւ թեթեւամիտ յարաբերութեանց եւ անզգոյշ վարմանց մէջ գտնուելու չէ : Նթէ օրիորդն սիրելի մայր մը կամ սիրեցեալ աղջականուհի մը կամ ճշմարիտ եւ բարեւէր բարեկամուհի մ'ունի , յայնժամ պէտք չէ առանձին դործել , այլ նախազգոյշ լինելու որ նորա խորհուրդն առնու , եւ խրատուի նորա փորձառութիւնէն եւ ճանաչողութիւնէն : Միայնակեաց օրիորդ մը չկրնար ըստ բաւականին

զգոյշ լինիլ արանց հետ ունեցած յարաբերութեանց մէջ : Պահանջելի է որ դեռափ տիկին մը , իւր նորազգաց սէրն , իւր շարժմանց սիրուն եւ անձայն ծանրաբարոյութեան մէջ թաքուցանէ սերտիւ : Ասոր համար , դեռափ տիկին մը , մասնաւորապէս համակրած մէկ երիտասարդին հետ խօսած ատեն , կարի՛ զգոյշ լինելու է որ չմակաբերուի թէ սիրտն այդ խօսակցութենէն կը հրճուի . ընկերային ակըմբոց մէջ այդպիսի մակաբերութիւն մը նպաստաւոր վճիռ չտար նոյն դեռափ տիկինոյ ընթացից համար , այլ խիստ դժան կերպով կը վճռուի : Միայն թէ երբ այդ յարաբերութիւնը ծնողացն երկուստեք ծանօթ եւ հաճոյ լինի , օրիորդը կրնայ չծածկել ի ներկայից իւր այդ փափուկ զգացումն :

Դեռափ տիկին մը գլխաւորապէս պարահանդիսի մը մէջ գտնուած ատեն , պարի ատեն առիթ կ'ունենայ երիտասարդի մը հետ խօսակցելու . աստ եւ գլխաւորապէս դադարի ժամուց մէջ երբ խօսակցութիւնը կը սկսին , պարտինա աշալուրջ դըռնուիլ եւ լաւ դիտել երիտասարդաց վարմունքն , եւ երբ անհաճոյ մտերմութիւնք ծագին , պարտի յետս մղել զայնս : Ընդհանրապէս , դեռափ տիկին մը չզղջար երբ միշտ մեծ անձնապահութիւն մ'ունենայ հանդէպ արանց . այլ այսպէս՝ կ'ընդունի իրեն պատկան մեծարանքն եւ կը պահէ զյարգ անձինս :

Օրիորդի մը դաստիարակութիւնը պարտի նախապէս սիրտն ու հոգին զարթուցանել եւ կրթել նորա ընկան յատկութիւնն ու սուրբ կոչումն յապագային՝ իրրեւ կին եւ մայր : Ո՛չ թէ արտաքին ձեւակերպութիւնք եւ հրապոյրք , այլ մտաց , սրտի

եւ հոգւոյ ներքին գեղեցկութիւնք : Ո՛չ թէ սոսկ արտաքին եւ հարեւանցի հմտութիւնք , այլ ներքին հաստատականութիւն , ո՛չ թէ արտաքին խաղու բանք եւ մնտիք , այլ ներքին լրջութիւն եւ սէր պահանջելի են : Պէտք է ժամանակ եւ դրամ վատնել այն ուսմանց եւ իրաց համար , որոց համար անձնական տաղանդ կը պակսի , որպէս են նուագածութիւն , նկարչութիւն եւ այլն . վասն զի այդպիսի պակասաւոր աշխատութիւնք ո՛չ միայն գեղեցիկ ժամանակն ու ծախքն ընդունայն կը կորսընցնեն , այլ իրապէս գտնուած տաղանդն ու մասնաւոր ձիրքը թմրեալ եւ անօգուտ մնալով բոլորովին անպէտ կը լինի եւ կը կորնչի : Իւրաքանչիւր ոք ամէն բանի տաղանդ չունի , այլ մէկ բանի միայն . եւ նախ քան դամնայն , պէտք է սրբտով եւ հոգով զարթուցանել եւ մշակել զայդ : Նոյնպէս հեռի կենալու է օտար լեզուաց ուսմանէ . փոխանակադոնց՝ պէտք է գերմանական քերականութիւնը հիմնապէս մշակել , գերմանական գրականութիւնը եւ գերմանական մատենագրական գործերն առաւել եւ հիմնապէս ուսումնասիրել , որք միտքը կը բարձրացնեն , սիրտն ու հոգին կ'աղնուացնեն , եւ ասոնց հետ կ'ընդլայնեն ընտանեկանութեան ըմբռնումն : Այսպէս լաւ դաստիարակեալ օրիորդք կարող պիտի լինին նաեւ դիմակալել իրենց ղէմ ելած ամէն վտանգաց :

Օրիորդք յաճախ մասնաւոր դժուարութեանց կը հանդիպին ա՛յն երիտասարդաց հետ վարմանց մէջ , որ իրենց մանկական ընկերակից են կամ ո՛ր եւ է ազգականական յարաբերութիւն ունին :

Գեռատի տիկին կամ օրիորդ մը հող չէ թէ շարունակէ կամ իրեն պահէ այդ բարեկամական վստահութիւնը, բայց ընկերական ակմբոց մէջ շատ զգոյշ եւ անձնապահ լինելու է, որպէս զի օտարական դիտողք անիրաւ դատումներ ընելու առիթ չունենան :

Ընդհանրապէս երիտասարդ արանց եւ տիկնայց մէջ գտնուած բարեկամութիւնը խիստ խրճրածանաց եւ քննադատութեանց տեղի կուտայ, մերթ իրաւամբ մերթ մնապարծութեամբ համբաւոյ եւ մերթ առ նախանձու : Ուստի գեռատի տիկին մը իրական բարեկամութեամբ կապուած լինելու է առն միոյ հետ այն ատեն միայն, երբ համոզուած է նորա բնաւորութեան օրինաւորութեանն ու ճշմարտութեան, երբ նորա բարոյական կեանքն ու արժանիքը ճանչցած է եւ վստահ է նոցա աներկեւան հաստատութեան վրայ :

Բայց այս ըսել չէ թէ առն եւ տիկնոջ մը բարեկամական յարաբերութիւնք ի սէր վերածուելուն . ճշմարիտ մտաւորական յարաբերութիւն մը կարելի է նոցա մէջ անչէջ մնայ, մանաւանդ թէ երբ հաւասար կրթութիւն ունենան եւ ամէն բարիէ եւ գեղեցկէ հաւասարապէս շահակցին :

Օրիորդ մը իւր նմանեաց հետ բարեկամութիւն հաստատելու համար՝ աճապարանօք կամ անխորհուրդ վարուելու չէ . զի մայր մը չկրնար իւր զաւկին ըստ բաւականի ամենայն ինչ ծանօթացընել . քանի՛ բարի բարոյականք կը զեղծանին չար օրինակօք : Խնամեալ դաստիարակութիւն մը վատի մը յարաբերութեամբ կ'ոչնչանայ յաճախ :

Մեր յարաբերութեանց մէջ միշտ զանազանութիւնք կ'ընդունիմք, եւ այլք ըստ այնս կը դատեն զմեզ : Փափաքելի է որ ըստ կարելոյն հաւասար կրթութիւն ունեցողի հետ մտերմանանք, վասն զի այդ կերպով մտաւորական բարգաւաճումն, վարմանց չնորհք եւ ձեւակերպութեանց ազատութիւն կը շահինք :

Օրիորդ մը վստահելի բարեկամուհի մը ընտրելուն պէս սիրտը կը բանայ անոր . բայց թող անսիրտ չգտնուի փորձել թէ այդ ընտրելի բարեկամուհին ազատ է ո՛ր եւ է թեթեւամտութենէ եւ խօլամտութենէ, կամ թէ ազնիւ հողոյ կամ մաքուր բարոյականի մը ազամանդներով զարդարեալ է : Եթէ կը պակսին այդքիկ, յայնժամ պէտք չէ որ գեռատի տիկինն իւր համակրութիւնն, իւր վստահութիւնն, ընծայէ նմա :

Նոյնպէս, լաւ է որ միայն այն օրիորդք միասին գտնուին, որք հաւասար եւ միօրինակ յարաբերութեանց մէջ կ'ապրին : Առատութեան մէջ մեծցած օրիորդ մը եւ բազմակարօտ ծնողաց աղջիկ մը ի միասին չեն կրնար լաւ կենակցել, վասն զի այնպիսի պարագայներ կը պատահին յորում նոքա կ'ամ գիրար չեն հասկնար եւ կամ իրենց կարծիքներն իրարու չեն համաձայնիր : Որպէս զի սոքա գիրար չկսկծեցընեն, պէտք կը լինի բնաւորութեան բարձր կրթութիւն մը :

Գեռատի տիկին մը պարտի վստահելի յարաբերութեանց ատեն զգուշանալ այնպիսի տիկին մ'ընտրելէ, որոյ անունը բացարձակապէս բարի եւ անարատ չէ . նա կը վնասի այդ պատճառաւ՝ թէ-

պէտ յանիրաւի . ուստի կարի՛ յոյժ հոգ տանելու է պահպանել իւր անունն եւ զգուշանալ զնասակար բամբասանաց տեղի տալէ : Վնասակար զրպարտութիւն մը դիւրաւ չմաքրուիր : Բազումք փոքր յանցանաց համար կ'ընդունին այդ արտան իրենց ամբողջ կենաց համար, եւ ընկերութեան մէջ շատ ըզգալի կը լինի ա՛յդ, մինչեւ իսկ երբ ընդերկար բարոյական եւ բարի վարմամբ, այդ միակ արտաքաւած լինին : Երբ ոք ընկերական ակմրոց մէջ նախապէս վայելած յանգանքը չընդունի, քանի՞օն դառնազին կ'արտասուէ ի վերադարձին ի տուն, առանձնութեան մէջ :

Կան դեռատի տիկնայք, որոց բացարձակապէս անպատուաբեր եւ հասարակ բան մը չըրուիր թէ եւ, բայց իրենց շարժմանց անփութութեամբ, իրենց հայեցուածոց համարձակ ամբարձմամբ, բարձրաձայն խօսելով եւ անձահ ծիծաղելով եւ չափազանց արդուզարդով, ընկերութեանց մէջ որպէս եւ շրջադայութեանց ատեն հասարակաց ուշադրութիւնն յինքեանս կը ձգեն . զնասակար է ամենեւին նոցա հետ ստէպ տեսակցիլ :

Օրիորդ մը իւր սրտի գաղտնիքը վստահելու է անոր՝ որոյ խորհրդապահութեան համոզուած է . ապա թէ ո՛չ եւ ո՛չ ումեք հաղորդելու է իւր գաղտնիքն, որպէս զի մեծ մտահոգութեանց չենթարկի :

Երբ օրիորդ մը, որպէս ըսինք քիչ մը յառաջ, ընկերական յարաբերութեան մը մէջ արանց հետ լուրջ անձնապահութիւն մ'ընել ուղէ, պէտք չէ չափն անցընել . չափազանց վեհերոտութիւն մը

աննպաստ վճռոյ տեղի կուտայ . յայնժամ կը նըմանի Ֆրից Ռայդըրի՝ Մէքլէմպուրկի ազնուականին բանաստեղծութեան՝ որ առաջին անգամ ընկերական ակմրի մը մասնակցեցաւ եւ նշանաւոր երեւելու համար մտադրեց բնաւ չխօսիլ, մինչեւ որ վերջապէս բարեկամուհի մը բարձրանալով գոչեց իւր ընկերուհւոյն . « ո՛չ, Սօֆի, այս մարդ կամ համր է եւ կամ վերջին աստիճան տխմար : »

Յաճախ կը պատահի, որ անփորձ օրիորդք եւ մինչեւ իսկ դեռատի տիկնայք հաւատ կ'ընծայեն այն կնահաճութեանց զորս այր մը խօսից ընթացքին մէջ կ'ընէ իրենց . մինչդեռ դոքա սոսկ քաղաքավարական մտօք կը գործածեն զայնս, անհեռատեսութեամբ : Փափկազգաց եւ աշալուրջ տիկնայք կրնան ձեւական արտաքին քաղաքավարութիւններն, որոշել անմիջապէս ճշմարիտ ներքինէն եւ անկեղծէն :

Ամուսնացեալ կանայք մանաւանդ, կարի՛ ըզգոյ՛ լինելու են տեսակիցներու ընտրութեան մէջ . այդ ընտրութիւն պէտք է յարմարի ամէն կերպով իրենց ամուսնոց յարաբերութեանց եւ դրամական վիճակին : Վիճակի այդ համահաւասարութիւն կարի յոյժ անհրաժեշտ է : Յոյժ անհաճոյ է հրաւիրուիլ նշանաւոր եւ հարուստ անձերէ, առանց կարող լինելու փոխարինել զայդ հրաւեր, մեծամեծ զնասուց չենթարկուելով : Ուստի, ա՛յնպիսի անձանց հետ յարաբերութիւն ունենալու է, որ արտաքին, այն է՝ նիւթական կարողութեամբ վիճակակից են : Արդարեւ, այսպանելի է կարգ մը կանանց այն մենամոլութիւն

նըն , որք իրենց զգեստաւորմամբ չափէ դուրս կ'ել-
նեն , միայն իրենց արանց կ'ենաց դիրքին
համար :

Ամուսնացեալ կին մը արանց հետ դանուած
ատեն այնպիսի յարգելի վատահուծիւն մը ցոյց
տալու է , որով տեսնուի թէ այդ կին իւր պարտ-
քըն , իւր եւ իւր ամուսնոյն պատիւն անարատ
պահելու համար միշտ կը խորհի եւ կը ճգնի :

Տիկնայք յաճախ ծայրահեղ վիճակի մէջ կը
գտնուին . մէկ կողմանէ կարի յոյժ վեհերոտութիւն ,
անձնապահութիւն , եւ միւս կողմանէ՝ պչրո-
ղութեամբ՝ մասնաւոր անձնացուցութիւն եւ նը-
շանաւոր երեւելու տենչ : Հաճոյ լինելու բըռ-
նաղբօսիկ արուեստակութիւն մ'է այս , որ չը յար-
մարիր ճշմարիտ կնութեան , շնորհաց եւ ար-
ժանեաց . այդպիսիք շատ պարագայից մէջ իրենց
ակնկալութեան հակառակն յառաջ կը բերեն եւ
այդ ապարդիւն վիճակէն յառաջ կուգայ մախանքը՝
կանանց սեռին ամենամեծ տկարութիւնը՝ որ կ'եղ-
ծանէ զքնաւորութիւն . հետեւապէս , անդ՝ ուր կը
մտնէ այդ մոլութիւն՝ եւ գլխաւորապէս օրիորդաց
քով արմատախիլ ընելու է ի հիմանց . վասն զի
անկանացի է այդ , վասն զի անհաշտելի է բարի
բնաւորութեան , սրտի եւ շնորհաց հետ : Պչրողի
վարքն այսպանելի է . նա յաճախ մարդկան մաքուր
զգացմանց հետ կը խաղայ . չուղեր միազգաց սիրտ
մը , եւ չկրնար ալ ուզել՝ վասն զի անզգայ է . մի-
այն կ'ուզէ արտաքին հրապոյրով հաճելի լինիլ ,
յաղթանակել ամենեցուն եւ ամենուն մախանաց
տեղի տալ . եւ որպէ՛ս ստէպ անմիտ կամ նիւթա-

պաշտ արք իւր խաբուսիկ ցանցին մէջ կը բռնուին :
Այդ ցաւալի , անճաշակ եւ անզգայ պչրողութիւն
ամենեւին չամանիր այն ճշմարիտ ձգողականու-
թեան եւ շնորհաց ու արժանեաց անդիմադրելի հը-
րապոյրին , ճշմարիտ եւ անբիծ կնութեան հրապոյր-
ին , որ բնական եղանակաւ տեւողութեան եւ
հաստատութեան ազդեցութիւնը կը ներգործէ եւ
որ ամենամաքուր փառքն իւր մէջ ունի : Յայտ
կը կայանայ գլխաւորապէս կնոջ՝ առն վրայ ունե-
ցած ազդեցութիւնն , արական սեռի հոգւոյ եւ մը-
տաց ուղղութեան եւ կրթութեան վրայ կանանց
ազդեցութիւնը , վասն զի շնորհք եւ արժանիք
արդասիք են սրտի եւ հոգւոյ , որ զմարդ իւր ճըշ-
մարիտ եւ բարձր իսկութեան մէջ կը ներկայացը-
նեն , եւ ամբողջ մարդկան այս գաղտնի յայտնու-
թիւնն ի սրտի եւ ի հոգւոյ , ճշմարիտ անձնաճա-
նաչութեան միջոցաւ ճշմարիտ կատարելութեան
յաջողելու բնական հիմն է : Ուստի , օրիորդք եւ
դեռատի տիկնայք պարտին իրենց անկեղծ բնակա-
նըն անարուեստակեալ եւ անշար պահել եւ ճըշ-
մարիտ սիրելութեան ու շնորհաց մէջ շարժիլ միշտ .
յայնժամ սոսկ արտաքին հրապոյրէ եւ խաբուսիկ
պչրողութենէ առաւել կը շահին :

Երկու սեռից յարաբերութեան մէջ այդ ճըշ-
մարիտ սիրելութիւնը տակաւ կը զօրացընէ անհա-
տից մէջ , բացարձակապէս ի միմեանց կախեալ լինե-
լու ներքին համոզումն , եւ կը զարթուցանէ եւ կ'ըն-
դարձակէ միտքն ի մանունս , մինչեւ իւր ամենա-
բարձր զգացողութիւն յանրիծն , անձնուէր սէրն
եւ մերձակայի սէրն , որ ճշմարտապէս մարդկային

զգացողութեան եւ վարմանց ամենաբարձր արտա-
յայտութիւնն է, եւ որոյ ծագումն նման ճշմարիտ
սիրելութեան կը զանակալէ ի սրտի :

Այսպէս, կ'ընդարձակի հոգւոյ եւ սրտի ներ-
դաշնակութիւնը, եւ այս՝ գլխաւորապէս իզական
սեռի իմացականութենէն, վարմունքէն եւ էութե-
նէն կախումն ունի : Անստերիւր կնութեան այդ
զաղափարային տիպարաւ, կինը կարող կը լինի
միշտ ազնուացընել, սրտի սիրոյ մէջ զօրացընել
զայրն, եւ սրտի ու հոգւոյ այդ ազնուացումն ու
զօրացումն ճշմարիտ երախտագիտութեամբ ի կին
կ'անդրադառնայ : Այս է հոգւոյ շրջանը, որ որ-
պէս ի սրտի եւ ի հոգւոյ, ճշմարիտ կնութեան ըը-
նականէն ծագումն կ'առնու, անդադար փոխա-
դարձութեամբ առ նա վերադառնալու համար . եւ
այդ ճանաչողութեան մէջ կայացեալ է կանանց ա-
մենաբարի եւ ամենասուրբ կոչումն, իմա՝ ի կըր-
թութեան եւ ի բարգաւաճման սրտի : Այսու կը
լինի բնաւորութեանց միօրինակութիւնը, կենաց
ներդաշնակութիւնը : Չայս բարգաւաճ առնել եւ
ընձեռել, ճշմարիտ կըթութեան եւ երկու սեռից
առ միմեանս ճշմարիտ սիրելութեամբ ընկերական
յարաբերութեան նշանաբանն է :

Ք Լ Ո Ւ Խ Թ .

« Երկնախաղաղ Բնակավայրը Կոստն է : »

ՎԱՅԵԼՈՒՉ ՏԱՆ ՄԸ ԿԱՀԱՐԱՍԵԱՅ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ո՛չ թէ հիւսիսային խիստ կլիմայն, յորում
կ'ապրիմք, այլ գլխաւորաբար ճշմարիտ սնաչինու-
թեան բարձր ոգին եւ ընտանեկան ներքին ու վա-
յելուչ կենաց եղանակն են, որ կը զանազանեն
զմեզ միւս ազգերէ : Տնտեսութեան այս բարձր ու-
գին կը պարտաւորէ եւ կը ստիպէ զմեզ յոյժ վայել-
չութեամբ եւ պիտանի զարդարանօք յարդարել եւ
կահաւորել մեր բնակավայր :

Կինը տան հոգին է, եւ նորա միտքն ու ոգին
տան մէջ տիրող եղանակը կը ճանչընէ, եւ տան
սենեկաց վայելուչ եւ բնակելի եղանակը կը պատ-
կերացընէ :

Տան տիկնոջ դատողութիւնն, որպէս եւ շնորհք
ու մտային կարողութիւնն, ո՛չ թէ կահուց ա-
ռաւել կամ նուազ պերճանաց մէջ, այլ՝ կարաս-
եաց կարգադրութեան, գունոց ներդաշնակութեան
եւ սենեկաց կահուց յարդարման մէջ կը փայլին :

Հարկ չէ յատուկ կանոններ տալ աստ, այլ բաւ են քանի մը բացատրութիւններ, որ ինչպէս ըսինք՝ տան տիկնոջ ի գեղեցկին ունեցած անձնական ճաշակէն կախումն ունին:

Այսօր, ընդհանրապէս թանկագին եւ զարդարուն սպասները սրահներէ դուրս ձգուած են. այսինքն, ապակեպատ դարակներու մէջ արծաթեայ սպասներ ի տես դնել, եւ այլն:

Մտից կամ նախասենեկի մը կահաւորման համար ընտրելի են կաղնափայտէ քանդակեալ կարասիք, որ կը բաղկանան սեղանէ մը, որոշ թուով յեցաթոռներէ եւ բազմոցէ մը: Պատին վրայ կը գտնուին զգեստակաշներ: Պատուհանք ունին սպիտակազոյն վարագոյրներ:

Շքեղապէս կահաւորեալ նախասենեակ մը փայլուն գունաւոր եւ վայելուչ ծոպերով զարդարեալ ստորներ եւ վարագոյրներ ունի: Տախտակամածին վրայ գորգ մը կը գտնուի, որոյ վերայ կամ գոգո-փսիաթ մը տարածուած կայ եւ կամ ճանբայներ ձեւացեալ անցքեր կը փուռին: Մահակոնի փայտէ կարասիք են մեծ հայելի մը, յեցաթոռներ եւ կճեայ տախտակով սեղան մը: Ղամբար մը՝ որոյ մէջ տեղ վառուած լոյսն ազուլուսաւորութիւն մը կը տարածէ: Սեղանին վրայ կը գտնուի թղթապանակ մը եւ գրելու գործիք:

Ճաշի սենեկի կահարասիքն Գաղղիոյ եւ Անգլիոյ մէջ ընկուզենիէ է, եւ Գերմանիոյ մէջ ալ վերջին ատեններս մեծ սիրով կաղնեայ կը գործածեն: Գեղեցիկ ու մեծ սպասադարան մը յեցեալ կայ ընդդէմ դիւսաւոր պատին. դորա աստիճաննե-

րը զարդարուած են ճենապակեանայ ամաններով եւ գերմանական հնօրեայ սափորներով: Այդ դարան ապակեպատ դարակ մ'ալ կ'ունենայ, յորում կը պահուին արծաթեայ սպասներ եւ սկահակներ:

Լաւ ճաշակ ունեցող տիկին մը, զանազան ըսպասներ պարունակող տուփերու բերանը բաց թողլով ի ցոյց չդնէր:

Ճաշի սենեկին մէջ տեղ կերակրոյ մեծ սեղան մը կը գտնուի, որ ի պահանջել հարկի կրնայ երկարիլ, այսինքն երկարեցընելու յատուկ տախտակներ ունի:

Լուսաւորեալ պատի մը մէկ կողմն կը գտնուի նաեւ ուտելիք ջարդելու յատուկ սեղան մը, որ որչափ պիտանի նոյնչափ ալ գործածական է: Այս սեղան երկու տախտակ ունի, որոց բարձրադիրին վրայ ուտելիք կը ջարդուի եւ ստորադիրին վրայ կը զետեղուի այն ամենայն որ ճաշի ատեն պէտք են:

Այս պատրաստութեամբ՝ ճաշի ժամանակ այսօր անդր վազվազելու յոյժ խանդարիչ անպատեհութիւնը կ'արգիլուի:

Ուտելիք ջարդելու այս գործածական սեղան կճեայ տախտակ մ'ունի, որ բարձրադիր տախտակին վրայ դրուած է. եթէ այս վերջինը միայն գործածել ուզուի, յայնժամ կճեայ տախտակը դէպ ի պատին կողմն կը հրուի, որպէս զի բան մը ջարդուած ատեն անմաքրութենէ կամ հեղուկաց սըրսուումէ զերծ մնայ:

Ներելի է, ճաշի սենեկին անկեանց մէջ դարակներ կախել եւ զարդարել ճենապակեայ ամաններով:

Դրան ծալածոյ վարագոյրն այժմու պերճանաց մին է : Սա՛ կամ պարզ վարագուրաց կամ կարասեաց ծածկոցաց պատառէն , եւ կամ սոցա հակառակ գոյնով պատառէ կը շինուի , որպէս զի երկուքին ալ գոյներն զգալի լինին : Նոյնպէս՝ ծանր , ասուեայ պատառէ ալ կը շինուի , թուրքական փայլուն ծոպերով զարդարեալ : Դրանց միագոյն վարագոյրներն երփներանգ ասեղնեգործեալ ծոպերով կը չրջապատուին եւ կը զարդարուին :

Երբ պատուհանի վարագոյրք ասուեայ են , կարելի է դրան վարագոյրը նոյն պատառէն շինել , սակայն պէտք է որ գոյնը յարմարի սենեկի կահուց գոյնին :

Պէտք է , որ ճեմելի սրահք ընկուզենիէ շինուած լինին :

Եթէ նախապատուութիւն տրուի բարձաւոր աթոռաց , ճաշի սենեկի աթոռաց նստարանները կաշիով ծածկեալներն ընտրելու է : Սակայն երբ սոքա ասուեայ պատառէ կամ տամասկոսէ են , յայնժամ պէտք է որ դոցա վրայ ծածկեալ պատառք պատուհանի վարագուրաց նման լինին :

Ճաշի սեղանին վրայ ջահի ձեւով բազմաթեւեան եւ զսպանակաւոր զամբար մը կը կախուի : Ժամացոյցի մը անդ գտնուիլը՝ փափուկ նկատողութեամբ անպատշաճ է : Ճաշի սենեկի յարմար մի քանի նկարներ կախելու է անդ : Սպասաւորաց ոտնաձայնն անլսելի ընելու համար , կակուղ գոգո-փախթէ անցքեր դնելու է :

Ընդունելութեան սրահի որմնածածկ վարագուրաց կամ թուղթերու համար փայլուն սպիտակ գոյնն

անհամեմատ դերադանց է : Կարմրագոյն կամ մութ մանիշակագոյնը մանր գունոց տեսնուելուն սննդպատ կը լինին : Ընդհակառակն փայլուն կանաչ գունաւորք , ճերմակ եւ բոսորագոյն անձանց լաւ կը յարմարին : Երփներանգ ծաղկենկարներն այն ատեն միայն ընտրելի են , երբ դոքա իրենց նկարուց մէջ արուեստական շքեղութիւններ ունին եւ թանկագին պատառաց վրայ նկարուած են : Գիւղական կամ մարդկային նկարաւորք չեն յարմարիր այն սրահաց , ուր պատկերներ կախուած են պատերու վրայ : Սպիտակ կամ փայլուն կանաչ գունաւոր որմնածածկ վարագոյրով եւ թուղթերով զարդարեալ սրահի մը կարասիքը , պատուհանաց եւ դրանց վարագոյրներն անձնական լաւ ճաշակաւ ընտրելու է , վասն զի աստ , գունոց ընտրութեան համար յոյժ ընդարձակ ասպարէզ մը կայ : Մետաքսեայ ծանրագին պատառներ դնել չուզողը կըրնայ վըլուր տը լին ըսուած պատառն ընտրել : Պատուհանի վարագուրաց կարգէն են նաեւ գեղեցիկ ասեղնեգործութեամբ շղարչէ վարագոյրներ :

Կարասեաց փայտի տեսակը ժամանակի ճաշակին կը յարմարի :

Ընդունելութեան սրահի մը կահաւորման համար պէտք է՝ ըստ ընդարձակութեանն՝ մէկ կամ երկու բազմոց , բաւական թիկնաթոռք , կէս կամ ամբողջ երկոտամնեակ աթոռ , արոյրէ կամ միւս կարասեաց փայտի տեսակէն քանդակագործ չրջանակաւոր մէկ կամ աւելի հայելիներ , մէկ քանի կճեայ տախտակաւոր քոնսօյներ եւ խաղի սեղան մը : Գրասեղան կամ դարան սրահին մէջ չեն դրուիր :

Ջարդու պատկան եւ աննպատակ մանր իրեր աստ անդ ցան եւ ցիր դնելը՝ հնօրեայ եւ այժման յարգի սովորութիւն մ'է : Այլպիսի իրեր ա՛յն ատեն միայն կը դրուին , երբ նպատակի մը համար գործածուին , որպէս է այցետունից պահպանման համար մեծ թաղար մը , բիւրեղեայ սկահակ մը , եւ այլն :

Երբ սրահն որմակից չմինա մ'ունենայ , գորա պսակին վրայ կը դրուի յեցաւոր ժամացոյց մը , երկու միածեւ կանդեղներ կամ նմանք :

Սրահի տախտակամածը կը զարդարուի գորգով :

Սրահաց մէջ լաւ կը յարմարին պատկերներ , երբ որմնածածկ վարագոյրք կամ թղթեր պարզ են . թխագոյններու վրայ լաւ կը ներկայացուին իւղանկար պատկերներ :

Երբ սրահին մէջ իւղաներկ պատկերներ կան , պղնձանկարք կամ սեւ գրչանկարք անպատշաճ են նոյն սրահին մէջ :

Բացարձակապէս անճաշակ ճանչցուած է խրճողել սենեակ մը շատ պատկերներով եւ իւղանկարներով , մանաւանդ՝ եթէ անարժէք են : Գլխաւոր պատին վրայ մեծ եւ արժէքաւոր նկար մը կը կախուի , եւ երկու հատ եւս զուգաչափ պատկերներ՝ անոր երկու կողմերը : Մեծադիր իւղաներկ պատկերներու յոյժ վայելուչ կը լինին ոսկեզօծ լայն շրջանակք : Կանաչ եւ երկնակապոյտ գոյներով գիւղանկարից եւ մանաւանդ արեւապատկերաց համար փայտեղէն մթագոյն շրջանակներ լաւ կը յարմարին :

Սիրելի անձանց պատկերներն ընդունելութեան սրահից կամ այցելուաց յատուկ սենեկաց մէջ չեն կախեր , այլ բնակեալ կամ աշխատութեան սենեկաց մէջ , որպէս զի միշտ աչաց առջեւ գըտնուին : Նոյնպէս ամէն տեսակ մանրադիր արեւապատկերք անպատշաճ են դահլճի մէջ :

Գեոատի տիկնոջ մը բնակութեան սենեկին գլխաւոր զարդը կը կազմեն , գրական շքեղ պիտոյքով , այլօմներով եւ այլպիսեօք զարդարեալ գրասեղան մը . այդ գրասեղանին համար պատուհանի մը քով այնպիսի տեղ մը ընտրելու է որ գրողն իւր ձախ կողմէն առնու լոյսն : Կարի սեղան մը կը գտնուի նաեւ պատուհանի քով , եւ սենեկի անկիւններն ալ ասեղնեգործեալ ծածկոցներով զարդարուն զարակներ , որոց վրայ կը դրուին տիկնայց աշխատութեան պիտանի նիւթերը : Բաց յայսցանէ , սենեկին մէջ բնակող տիկնոջ ճաշակին կամ փափաքին համեմատ կը գտնուի նաեւ զաչնամուր մը կամ գրադարան մը . նոյնպէս բազմոց մը եւ թոռներ կրնան դրուիլ անդ :

Լաւ իննամեալ գեղեցիկ տերեւոտ տունկերով ծաղկակալ մը՝ տիրուհւոյն հողածու եւ աղու բնաւորութիւնը ցոյց կուտայ :

Նշմասենեկի մը համար ալ , յառաջ քան զամենայն , բարձրադիր , մեծ , օղատուն եւ լուսաւոր սենեակ մը ընտրելու է : Ամէն մէկ մահճի առջեւ գեղեցիկ փոքր գորգ մը կը դրուի եւ գլխոյ վերեւ ալ կճեայ տախտակով սեղան մը :

Արդուզարդու սեղանն , որ նոյնպէս կճեայ տախտակով ծածկուած է , լուացման անդրիական

սպասներով կը զարդարուի . դաստառակները յատուկ կալերու վրայ դնելու է :

Վերջապէս յիշեմք օրիորդի մը սենեակն ալ :

Այդ սենեակ կը կահաւորի անդղիական բամպակեղէնով , որ փայլուն գոյնի մը վրայ ծաղկեփունջեր նկարուած ունի . վարագոյրք նոյն պատտանէ լինելու են :

Կարասիքն՝ սպիտակ գունաւոր փայտէ կը պատրաստուին . սենեկին մէջ կը գտնուին անկողին մը , արդուզարդու սեղան , բազմոց եւ աթոռ . փոքր գրասեղան մը , դարան մը , հայելի մը , կարի սեղան մը փոքրադիր , եւ եթէ սենեկի ընդարձակութիւնը ներէ՝ ծաղկի յատուկ փոքր սեղան մը :



Պ Լ Ո Ւ Խ ԺԱ.



« Ար+ յոյժ անխաւ են ,
Ընդդէմ մեր ուխտ սեւին .
Իրենց ոճերն առաւելութիւնն կը համարին ,
Եւ յէս շնէրէն մեր ուխտութեան : »

Ա Ր Գ Ո Ւ Զ Ա Ր Գ



ԳԱՂՏՆԻՔ ԱՐԳՈՒԶԱՐԳՈՒ

« Զգե՛տք մարդ կ'ընեն զմարդ : » Ահա առած մը , որ չարամիտ հեղինակութիւն մ'է :

Զգեստք ծածկոց են , բայց դժբաղդարար մարդիկ այժմ զգեստուց նայելով կը դնահատեն զայլս :

Արդար չէ այս , բայց ո՞վ կրնայ փոխել զայս : Ուստի քանի որ միանգամ այսպէս եղած է , հարկ կը լինի զգեստուց համար ալ հոգ տանիլ :

« Մաքրութիւն եւ միամասնութիւն , փայլ կուտան աննշան պատտափն : » Այս խօսք զգեստուց համար գլխաւոր կանոն մ'է : Աղտոտ կամ պատռուած զգեստք զգուելի ազդեցութիւն մը կ'ընեն

տեսնողին վրայ եւ անմաքրութեան ու անհոգութեան մահացուցիչ վճռոյն տեղի կուտան : Ուստի , օրիորդք եւ կանայք կարի՛ զգոյ՜ լինելու են զգետուոց ընտրողութեան մէջ եւ գլխաւորապէս յամենայն ծայրայեղութենէ :

Նորեկեաց մէջ ալ երբէք հեռանալու չէ միջին ընթացքէ . խոհեմութեամբ հետեւելու է այդ բըռնակալ ոգւոյն :

Տարիքին հետ մէկտեղ , մարդ իւր գտնը ու ած վիճակին ալ ուշադրութիւն ընելու է :

Աւելորդ է յիշել աստ թէ տարւոյ եղանակներն զգեստուոց ընտրութեան վրայ մեծ ազդեցութիւն ունին : Միագոյն զգեստք , լաւագոյն եւ վայելուչ են միշտ : Հոգ տանելու է որ զգեստուոց ամէն մէկ մասն ներդաշնակ լինի միմեանց հետ :

Բարեկիրթ տիկին մը , որ փափկազգաց է եւ լաւ դատողութեան տէր , եթէ երբէք բարձրադիր ազնուականաց կամ բարեկեցիկ միջնակարգի մը պատկանի , միշտ թէ ի տան եւ թէ ի շրջապայութեան եւ՝ մասնաւոր բացառութեամբ՝ ի սրահս , այնպիսի իմն պարզութեամբ կը զգեստաւորի , որ լաւ եւ գեղեցիկ ճաշակ մը կը ներկայացընէ : Կ'ըսեն թէ « զգեստը մարդ կընէ զմարդ , » այո՛ , բայց զգեստք ծիծաղելի ալ կընեն . վասն զի ի բարձրագունէ ի ծիծաղականն քայլ մը եւեթ կայ : Պէտք է որ զգեստուոց մէջ ներդաշնակութիւն լինի եւ անհատական վայելչութեան մէջ պէտք է այն ընտրութիւնն ընել , որպէս կը պահանջէ ճշմարտապէս բարի ընկերութիւնը՝ հանճարով եւ ճաշակաւ : Ո՛չ պաճուճազարդ եւ ո՛չ ծիծաղելի լինիլ , նման զը-

րամի ազնուականաց անկիրթ մասին եւ կամ անպարկեշտ դասուն ունայնամտութեանց , որք անձկանօք ի տես կը դնեն զանձինս : Աւելորդ զարդերէ հեռանալու է . անպիտան բաներ են այդոքիկ . ներքին զարդերն են որ հաճոյ կ'երեւին , այն է՝ հանճար , շնորհք եւ արժանիք :

Վրայի զգեստուոց տակիններն՝ ըստ կարելւոյն ձերմակ լինելու են , մասնաւանդ յամրան :

Գէշ մուճակք եւ ձեռնոցք մեծապէս կ'աղաւաղեն զվայելչութիւն : Ձեռնոցք զգեստուոց գոյնէն աւելի մթագոյն լինելու են :

Հոգ չէ թէ շրջազգեստուոց պաստառն՝ մետաքսեայ , թաւշեայ կամ մարմաշէ եւ կամ այլ տեսակ լինի . ճաշակաւոր եւ հաճոյատեսիլ արդուզարդ մը կը լինի երբ զգեստք վայելուչ ձեւուած են , երբ գունոց եւ գլխոյ զարդուց , գրից , հասակի եւ անձնական այն է՝ դրամական կարողութեան մէջ ներդաշնակ կարգաւորութիւն մը կայ : Կուրաբար՝ նորաձեւութեան հետեւին , անձնական ճաշակի ստորնացում մ'է , եւ ապացոյց՝ թէ մարդ իւր անձին տէր չէ : Այդու՝ վերջապէս գերի կը լինի այլոց անվայելչութեան , վասն զի նորեկքն ու լաւ ճաշակը կը տարբերին ի միմեանց որպէս գինիք : Գաղղիացի տիկնայք , որք ընդհանրապէս վայելչութեամբ կը զգեստաւորին , նորաձեւութիւն ըսելով կ'ըմբռնեն այն հիմն , ըստ որում իրենց անձնական ճաշակաւ կը կարգադրեն իրենց արդուզարդը : Նոքա այդ իբր ծիծաղական եւ անգործածելի նորաձեւութեանց չեն հետեւիր կուրաբար , այլ գիտեն՝ իրենց լաւ դատողութեամբ՝ վարուիլ այն անհե-

Թեթ այլանդակութեանց հետ, զորս օտար երկրաց մէջ՝ անմիտ, կոյր եւ հլու նմանողութեան մոլութեամբ, ամբողջապէս իբր «բարձր նորելք Փարիզու» (haute nouveauté de Paris) կ'ընդունուին:

Կ'ըսուի, թէ զգեստաւորման եղանակն տիկնոջ մը ներքին կարողութեան արտայայտութիւնն է. ասի ա՛յն ատեն է, երբ անհատական ճաշակը ճշմարտապէս կը հասուննայ եւ հաճոյարար ազդեցութիւն մը կ'ընէ: Ա.յո՛, երբ տիկնայք զխոնային թէ ճաշակաւոր ու պարզ արդուզարդ մը որպիսի՛ յանկուցիչ հրապոյր մ'ունի, թերեւս ուրիշ կերպով զգեստաւորուէին. թերեւս կ'ըսեմք, վասն զի թշուառական մախանքը տիկնայց մէջ տխուր դեր մը կը խաղայ. նոքա կը զգեստաւորին շքեղապէս, ո՛չ թէ հաճոյանալու համար, ո՛չ, այլ միմեանց հետ խիզախելու եւ իրարմէ՛ նշանաւոր լինելու համար, առանց նկատառման թէ նորելք մը կը վայելէ՞ իրենց, թէ՛ ոչ:

Որպէս յիշեցինք վերեւ, արդուզարդու շքեղութիւնն ու ճաշակն, զգեստուց պատառին սրղութենէն կախումն չունին, այլ ձեւի, գունոց եւ պատառի վայելչութենէն, որպէս եւ զիմաց ներկերու եւ վարսից գունոց վիճակէն:

Արդուզարդու պայմանաց մին ալ, ն պ ա տ ա կ ի յ ա ր մ ա ր լինելն է: Օրինակի համար, յետ միջօրէի, պէտք չէ առաւօտեան զգեստուք զգեստաւորուիլ. կամ տան մէջ պարահանդիսի զգեստուք եւ կամ փողոցի մէջ եւ ճանբորդութեան ատեն ակմբային հանդերձներով: Յաւակցական այցելութեան կամ յուզարկաւորութեան ատեն բաց

գոյնով, կամ հարսանեաց մէջ մութ գոյնով զգեստներ կրելը յոյժ անպատշաճ է:

Արդուզարդք պէտք է յարմարին տարւոյն եւ զանակաց եւ օդոյ. փայլուն արդուզարդ մ'ունանք եւտո գէշ օդ մը չեն յարմարիլ միմեանց:

Չմրան եւ աշնան շրջագայութեանց յատուկ արդուզարդք պէտք է բացարձակապէս մթորակ պատտռէ լինին: Բազմերանգ եւ շատ փայլուն գոյները ճաշակի ազնուութեան հակառակ են:

Ձեռնոցներն ալ պէտք է որ յարմարին զգեստուց: Ամրան բաց գունով զգեստուց հետ պէտք է բաց գոյն ձեռնոցներ կրել:

Փողոցի մէջ քղանցաւոր զգեստք ալ մնասաւոր են առողջութեան. վասն զի մնասակար եւ վտանգաւոր բարակ փոշի եւ աղտեղութիւն, վեր դէպ ի թոքերը կը հանեն. այնպիսի աններելի անուշադրութիւն մ'է այս, որ շատ անգամ թոքացաւի պատճառ կը լինի: Բաց յայտանէ, քղանցք այլոց ազատ ընթացից եւս արգելք կը լինին:

Սպիտակ արդուզարդը մարմնոյ ձեւը լայն կը ցուցնէ, իսկ սեւագոյնը՝ ընդհակառակն՝ վտիտ: Ուստի, գիրութեամբ փառաւորեալ տիկնայց համար սպիտակ զգեստք անյարմար են: Նոյնպէս, ոտներն սպիտակ մուճակաց մէջ մեծ կ'երեւին. պէտք է միայն սպիտակ զգեստուց հետ հազնիլ սպիտակագոյն մուճակ: Լաւ ճաշակ ունենալու եւ կազմելու եւ ինքնակամ որոշում մը տալու համար պէտք է միշտ շքեղապէս եւ ճաշակաւոր զգեստաւորեալ տիկնայց օրինակին հետեւիլ, եւ ապա մըտաղիլ փորձերու միջոցաւ, հայելոյ մէջ նայելով,

պատրաստել ինչ որ անհատական ճաշակը կը պահանջէ : Ասի անհատական ճաշակի ու վճռոյ կըրթութեան միջոցն է :

Խոպոպիք՝ երբ պարզ , վայելուչ եւ գեղեցիկ լինին՝ առանց սակայն պաճուճալի եւ տգեղ լինելու , կը բարձրացընեն ո՛չ միայն զիմաց չնորհքն ու գեղեցկութիւնն , այլ ամբողջ արդուզարդի պերճութիւնը . արդուզարդութեան է այդ :

Ընդհանրապէս , վարսից խոպոպիքը վայելուչ չլինիր եւ կը խանդարէ կատարելապէս զիմաց դեղն ու չնորհն : Խոպոպիքը վայելուչ ընելու համար մերթ բացառութիւնք կան , որով ղէմքն հաճելի եւ սիրելի տեսք մը կ'առնու : Սեւ վարսերը պէտք է ողորկ պահել , իսկ խարտեաչներն՝ դալարուն :

Մերթ՝ վարսերն այտերն ի վար կը հիւսեն . այդու՝ ղէմքը սեղմեալ ձեւ մը եւ տարիքոտ կանանց յատուկ տեսք մը կ'առնու : Զուսձեւը զիմաց ամենագեղեցիկ ձեւն է , եւ ո՛վ որ ունի զայդ ձեւ , զգուշանալու է զայն անսովոր եւ անվայելուչ խոպոպիքով տգեղացընելէ . սակայն ո՛վ որ չունի կ'ուզէ յարմար խոպոպիքով մը ձեռք բերել զայն :

Գլխոյ համար ընտրուած դարդերը պէտք է պարզ եւ ազնիւ լինին : Գլխաւորապէս զգուշանալու է սնտաի պաճուճանքէ : Օրիորդաց համար յոյժ սիրելի զարդ են ծաղկունք , բայց այդքիք ալ իրենց գոյներով յարմարելու են զգեստուց . այս մասին մէջ ալ չափազանցութիւնն անվայել է որպէս յամենայնի : Միակ ծաղիկ մը , կոկոն մը , ստէպ զլսու ամենագեղեցիկ զարդը կը կազմէ :

Տիկնայք ի դ՛ւր կը կարծեն թէ փայլուն եւ նորագոյն արդուզարդի մը համար , մեծ գումարի մը ծախուց պէտք կայ , որպէս զի կատարեալ արդիւնք մը ձեռք բերուի : Բայց ընդհակառակն ամէն ատեն այդպէս չէ : Ընդհանրապէս , որպէս ըսուեցաւ քիչ մը յառաջ , միշտ լաւ անհատական ճաշակն ու ինքնահարութիւնն , նիւթական վիճակին հետ համեմատելով , գովելի արդիւնք մը յառաջ կը բերեն :

Սովորական է որ , տիկին մը միշտ երկու սեւագոյն սնդուսէ զգեստ ունենայ . պարզը՝ մտերմական յարաբերութեանց մէջ գործածէ եւ լաւագոյնն՝ ձմրան մէջ հացկերութից եւ գիշերային ալ կըմտց ատեն : Բարեկամական պարզ այցելութեանց ատեն՝ բրդեայ կապերտէ , եւ պաշտօնական այցելութեանց ատեն՝ սնդուսէ կամ մետաքսեայ զգեստներ կրելու է : Սեւագոյն սնդուսէ զգեստ մը , թէեւ բաւական սուղ , թէեւ գեղեցիկ եւ զիմացկուն է , բայց միայն տարիքոտ տիկնայց յատուկ է :

Սետաքսեայ զգեստուց համար պէտք է ողորկ եւ մթագոյնն ընտրել , որպէս զի իրենց առաջին փայլը գործածմամբ կորուսանելէն ետքը , երկրորդ կարգի զգեստուց փոխել կարելի լինի : Սակայն գարնան մէջ տեղի ունեցած մեծ ակմրոց եւ հացկերութից համար , պահանջելի են բաց գոյն մետաքսեղէնէ զգեստք եւ սովորական է այնպիսի պաստառ մ'ընտրել , որ յետոյ իբրեւ ներքնազգեստ գործածել կարելի լինի :

Գեղատի տիկնայց պարահանդիսի յատուկ ըզ-

գետտուց համար մետաքսեայ զգեստք անընդունելի եղած են այժմ : Ասուեայ թեթեւ պատտաւք , շքադարչ եւ կաղ, պարահանդիսի յատուկ թեթեւ ըզգետտուց գլխաւոր պատտաւք ճանչցուած են : Տարւոյ գեղեցիկ եղանակին մէջ ալ դիպակը պերճաշքեղ արդուզարդու կը յատկանայ :

Տիկնայք ոմանք կը կարծեն թէ առանին արդուզարդու համար հոգածութիւն պէտք չէ . անընդունելի է այդ անհոգութիւն, վասն զի հակառակ է պատշաճից :

Տիկին մը տան մէջ եւս պէտք է այնպիսի իմն զգեստաւորեալ լինիլ, որ կարենայ այցեր ընդունիլ . առաւօտեան զգեստն իսկ վայելուչ լինելու է :

Պակինին՝ ձմրան մէջ առանին զգեստուց համար յոյժ գործածական պատտաւ մ'է . զարդերն ու ասեղնազորք աւելի կամ նուազ վայելուչ կ'ընեն զգեստն : Նոյնպէս անձրեւոտ օդոյ ատեն, մըթադոյն զգեստ մը փողոցի լաւ հագուստ մ'է :

Եւ որովհետեւ իննայողութիւնը ճշմարիտ տանտիկնոջ մը առաքինութիւնն է, արդուզարդուց պատկանեալ ամենայն ինչ պէտք է որ ինքն պատրաստէ : Երբ զգեստ մը հինցած է, շատ դիւրաւ կրնայ փոխուիլ եւ նորոգուիլ, երբ այդ աշխատութիւնը կարելի լինի անձամբ հոգալ . մանաւանդ թէ տան մէջ օգտակար զբաղմամբ կ'աշխատուի եւ պարապոյ ժամերն ալ կը լցուին, փոխանակ՝ օրինակի համար՝ այն դժուարահիւս սպիտակ ասեղնազորքութեամբք եւ կամ այլ զարդու իրերով զբաղելու, որ շատ դիւրագին են եւ միայն պատրաստելու համար գնուած նիւթոց արժէքն ունին :

Այս պատճառաւ, մարք հող տանելու են որ իրենց աղջկուէք իրենց զգեստներն իրենք պատրաստելու կամ փոխելու արհեստը սովորին բացարձակապէս : Այդու պիտի վարժուին իրենց անձնական ճաշակի կրթութեան եւ ընդարձակման եւ պիտի կարողանան զիրենք եւ իրենց ընտանիքը կարի՛ նուազ ծախքով զգեստաւորել վայելչապէս :

Գաղղիացի տիկնայք, որք առանին պարագայից մէջ յոյժ թեթեւ եւ վեր ի վերոյ կերպիւ կը վարուին, սկզբունք ունին թէ պէտք չէ երբէք զգեստուց եւ գլխարկի կուտակ մը դիզել . վասն զի այդու՝ ժամանակին հետ՝ հնաճեւ զգեստներ հազնելու կը պարտաւորին : Գաղղիացի վայելուչ տիկին մը՝ ըստ կանոնի՝ ամէն մէկ նպատակի յատուկ հագուստ մ'ունի . ակմբի, շրջադայութեան, պաշտօնական արարողութեանց, առանին եւ թատերական . սոցա ամէն մէկն այնչափ ընդերկար կը հազնի, մինչեւ որ կորուսանէ իւր փայլ եւ ապա կարգէ դուրս կը ձգէ :

Գաղղիացի տիկնայք ուրիշ օրինակ մ'եւս կուտան մեղ, այն՝ թէ բնաւ չեն նեղուիր մի եւ նոյն առօրին մի եւ նոյն զգեստիք շարունակ երեւեյի : Այս՝ իրենց վերոյիշեալ սկզբանց բնական հետեւութիւնն է . այն թէ՛ մէկ մասնաւոր զգեստ ունենալ իւրաքանչիւր մասնաւոր նպատակի համար, եւ այնչափ ընդերկար գործածել զայն, մինչեւ որ փայն կորուսանէ : Սակայն կ'առարկուի աստ թէ զգեստուց սովորական փոփոխումն մի եւ նոյն նպատակի համար վայել չէ, մասնաւանդ յաճախակի օդոյ փոփոխմանց ատեն, որ մարդ անդ թերեւս

այնչափ ստիպուած չէ՝ քան մեր երկրի նուազ նը-
պաստաւոր կլիմայի մէջ :

Աստ, այն սովորական կարծիք թէ՛ տիկին
մը ամէն պարահանդիսի համար զատ հագուստ մը
ունենալ պարտի, ապա թէ ոչ՝ սուր լեզուաց խըծ-
բըծանաց կ'ենթարկի, ժամանակիս տիրող կարծ-
եաց յոյժ նողկալի ասացուածքն է :

Թաւշեայ գլխարկ մը ձմրան համար շատ սովո-
րական է . իսկ չքեղ արդուզարդի մը համար թաւի-
չէ եւ մետաքսէ պատրաստուածներն ընտրելի են,
որք այնպիսի իմն կը զարդարուին, զոր գարնան մէջ
իսկ կրել կարելի կը լինի :

Ամրան պարզ արդուզարդի համար լաւագոյն է
բարակ յարդէ հիւստուած, իսկ չքեղ արդուզարդի
համար ալ շղարչէ պատրաստուած գլխարկ մը :
Գլխարկի պաստառք, որ գլխաւորապէս մետաք-
սեայ կը լինին, պէտք է զիւրազին տեսակէ լինին,
որպէս եւ կապն, որ պատշաճ լայնութիւն ունենա-
լու է :

Ծաղիկք պէտք է լաւ տեսակէ լինին . ստո-
րին կարգի պատրաստուած ծաղկունք տիկնոջ մը
փափուկ արդուզարդին հետ անյարմար հակադրու-
թիւն մը կը կազմեն եւ գէշ ազդեցութիւն մը կ'ը-
նեն . բոլորչի կամ գնդաձեւ գլխարկք զիւղաբնա-
կութեանց, կամ անձնական գործոյ երթալու եւ
կամ մտերմական այցելութեան մ'ատեն միայն ըն-
դունելի են :

Շքեղ արդուզարդու կը պատկանին մանաւանդ
այն գոց գլխարկք, որ Ֆասուն կը կոչուին :

Յայտնի է թէ լաւ ոտնամանք եւ ձեռնոցք թէ՛

առ անձին եւ թէ զիմացնին վայելչութեան առա-
ջին պայմանն է : Այդ տեսակ իրաց գնման ատեն
պէտք չէ զիւրազինը վնասուել, վասն զի այս տեսակ
վաճառաց մէջ աժան ծախուածներն իրենց աժնու-
թիւնէն առաւել գէշ տեսակէ են :

Նուազ գինով գնելը շատ պարագայներու մէջ
իրօք սուղ գնուած կը լինի, զի ճշմարիտ ամրու-
թիւնն ու տոկութիւնը կը վճռեն վերջապէս, թէ
ինչ որ զիմացկուն է այն է աժան :

Ձեռնոցները պէտք է որ լաւ զետեղուին եւ
կաղապարեն ձեռաց ու մատանց ձեւերն : Նքր օք
միանգամ իւր ձեռաց յարմար ձեռնոց մը գնէ, լա-
ւ միտք պահելու է նորա թիւն, որպէս զի ուրիշ ան-
գամ գնած ատեն դարձեալ նոյն յարմարութիւնն
ունենայ : Ձեռնոցի գոյնն, որպէս ըսինք, պէտք է
միշտ ներդաշնակ լինի հագուստին հետ :

Պէտք է մէկզի գնել այն ձեռնոցներն եւ ոտ-
նամաններն, որ իրենց գոյնն ու ձեւը կորուսած
են :

Սպիտակ ասեղնագործք պէտք է միշտ թարմ ու
մաքուր վիճակի մէջ լինին :


Դժբաղդաբար վերջին ժամանակաց մէջ ար-
ուեստակեալ զարդեր տակաւ աւելի արժէք մը
կ'առնուն . յաչս ամենեցուն փառաւոր երեւելու
մոլութիւնը դժբաղդաբար այնչափ մեծ է, որ ներ-
կայ միջոցը չեն բաւեր փայլն իրական արժէքի մէջ
ներկայացընելու : Ուստի այնպիսի արուեստակեալ
իրաց կը զիմեն, որք երբ ճանչցուին, յոյժ ծիծա-
ղական տապաւորութիւն մը կ'ընեն :

Ականաւոր տիկին մը պէտք չէ որ ամենաչնչին

իր մ'իսկ արուեստակեալ կրէ : Այդ պատճառաւ
եւս, երբ նորածեւութիւնը փոխուի, արուես-
տակեալ իրք ամբողջապէս անարժէք կը լինին,
մինչդեռ ճշմարիտ եւ անխարդախ իրք չեն կորու-
սաներ իրենց իրական արժէքն, որով կարելի կը
լինի, ձեւը փոխուած ատենն իսկ, ուրիշ նորա-
ձեւ իրական արժէքաւոր զարդու մը վերածել
զայն :



Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .



Զորք՝ Լատիններէ :

ՀԱՆԴԵՐՁԱՍԵՆՆԵԱԿ



ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԳԱՂՏԵՆԱՅ ՍՐԴՈՒՋԱՐԴՈՒ

Մարմնոյ թարմութիւնն ու դեղն անվթար պա-
հելու միակ միջոցն է մաքրութիւնը : Լաւ է ննջե-
լէ յառաջ ամբողջ մարմինը պաղ ջրով լուալ, որով
դիչերն ամբողջ ծակոտիքն լաւագոյնս կարենան կա-
տարել իրենց պաշտօն :

Աւելի լաւ կը լինի՝ լուացմանէ յետոյ ազատ-
քեղի ջրով չփել մարմինն, զգուշանալով աճատի
գործածութենէ որ շատ անգամ վնասակար տար-
րեր կը պարունակէ իւր մէջ :

Գեղեցկացուցման անուանական միջոցներու
գործածման յիմարամտութիւնը տակաւ կ'ընդար-
ձակի, եւ տիկնայց տգէտ ու դիւրահաւան մասն
կը յարդէ զայնս : Կարեւորութիւն տալու չէ ամե-
նեւին այդոցիկ, զի իրենց օգտէն աւելի վնաս կու-
տան : Մորթին արտաքին կողման տրուելիք խը-

նամքը , գլխաւորապէս պաղ ջրով լուացուիլ , ասուակի կտորով եւ հաստ դաստառակով մը ուժով սրբուելով մաքրուին է , որով մորթին ծակերուն մէջ գտնուած բարակ փոշին դուրս կ'ելնէ եւ ծակօտիքն կը սկսին իրենց կանոնաւոր գործողութիւնը : մորթի առողջութիւնն եւ նորա փափուկ գոյնը կ'ապահովի ինքնին ի ներքուստ :

Արուեստական ամէն արտաքին միջոցը , որ պէս են սնդոյրը , օծանելիք եւ այլն , զուրկ են ա՛յն յատկութիւններէն որ կը վերագրուին իրենց . ծակօտեաց բերանը կը խցեն , եւ կ'արգելուն նոցա գործողութիւնը . մորթը կը հիւանդանայ եւ գոյնին թարմութիւնը կ'անհետի : Մարմնոյ ծակօտին մաքուր ու բաց պահելն ու նորա գործօնէութիւնը անխափան թողուլ՝ պարզ գաղտնիքն է մորթի բնական ինամոց եւ մինչեւ ցխոր ծերութիւն մորթի առողջութեան պահպանման : Սրբուելու յատուկ ամէն լաթեր ու դաստառակը պէտք է որ հաստ ու կարծր լինին : Երբ դէմքը դեռ տաք է եւ փոշուով ծածկուած , անմիջապէս լուալու չէ , այլ չոր կերպով սրբելու է . վասն զի ծակօտիքը ջերմ արտաշնչութեամբ բաւական բացուած լինելով՝ պաղ ջրոյ հպմամբ կը ձգին եւ բարակ փոշին իրենց մէջ կը պահեն , որով դժուար կը լինի մաքրել զայնս : Նոյնպէս խելացութիւն չէ մաքրուելէ անմիջապէս յետոյ մորթն օդոյ եւ արեւու դէմ դնել . առ նրւազն կէս ժամ սպասելու է . վասն զի լուացուելէն ետքը մորթն ամէն մնասաբեր ազդեցութեանց ընդունակ է . մանաւանդ թէ լուացուելէ ետքն արեւու տակ մնալով շատ անգամ ցաներ կ'ելնեն

մարմնոյ վրայ : Այդ պարագային մէջ շատ աղէկ է սպիտակ քող մը կրել : Լաւ է նաեւ օրական լուացման ատեն լեմոնի թթու գործածել : Գիւղօրէից մէջ արեւակիզութեան դէմ շճուկով կը լուացուին , որ յոյժ լաւ հետեւութիւն մը կուտայ :

Երբ մասնաւորապէս փոշոյ մէջ գտնուած չը լինի ոք , պէտք չէ ամէն օր աճառով լուալ դէմքը : Աճառով ստէպ լուացուիլ , մորթէն , իմա՝ ծակօտիքէն շատ դուրս կը հանէ մարմնոյ ճարպային հիւթն , եւ մորթն՝ փոխանակ կակուղ եւ առաճգական լինելու՝ դիւրաւ կը կարծրանայ : Ճարպաւոր աճառը գլխաւոր պիտանին է . ամէն անուն ու գոյն կարի՛ աւելորդ բաներ են . միայն ճարպաւորն ընդունելի է : Գոյներն ու անուանք ա՛յն են աճառաց համար , ինչ որ են զինեաց պիտակք , որ իրենց պարունակածէն յոյժ տարբեր բաներ ցոյց կուտան :

Բաց յայտմանէ , այդ գոյները շատ անգամ յոյժ մնասակար նիւթերով պատրաստուած են : Գեղին եւ թուխ գունաւոր աճառներն անմնաս են :

Նուշի փոշիացեալ թեփն , ստէպ փոխանակ աճառի կը գործածուի եւ մորթը կակուղ ու դիւրածիզ կ'ընէ :

Որպէս մորթն , նոյնպէս վարսերը մասնաւոր ինամք ու պահպանութիւն կը պահանջեն : Գլխաւորապէս , սանտրելու ատեն պէտք է կարի՛ յոյժ մեղմաբար սանտրել , թնճուկի կամ արմատախիլ լինելու տեղի չտալու համար : Օրական սանտրուքը լայն եւ նեղ սանտրերով լինելու է . ուր որ մազերը խառնուած կ'երեւին , զուրս հանելու է

այդ մասն, զգուշութեամբ քակելով . պէտք է սանտրել ծայրերէն եւ ապա մասն առ մասն մինչ յարմատն յառաջանայ, մինչեւ պարզուիլն :

Մարմնոյ այլ մասանց պէս, գլխոյ մորթին ալ մաքրութիւնը վարսից աճման համար էական պայման մ'է : Գլխոյ թեփուկներու անհետացման եւ ծակոտեաց մաքրութեան համար, հաւկթի մը դեղնուցով լուացումն յոյժ ընդունելի է . այդու՝ ծակոտեաց գործօնէութիւնը կ'առաւելու եւ վարսից աճումն յառաջ կուգայ :

Վարսերը փափկացընելու համար յոյժ անօտր իւղը լաւագոյնն է : Օձանելիքն՝ մազերը սերտիւ միմեանց կը փակցընեն, կ'արդելուն նոցա աճումն եւ գլխոյ ծակոտին իւղոտելով կը խանդարեն նոցա գործօնէութիւնը, եւ վարսից արմատոց առողջութեան ու աճման կը վնասեն :

Վնասակար է նաեւ վարսից կապը . սա կը պրկէ գլխոյ մորթին ու ջիղերը, կը տկարացընէ վարսից արմատն եւ կարի յոյժ կը վնասէ վարսից աճման, եւ մորթին ամուր ձգմամբ, ճակտի վրայ կնճիռներ յառաջ կը բերէ :

Վարսից աճման համար գործածելու է քինքինայի օձանելիք, բայց այդ ալ վնասատու է միւս օձանելեաց պէս . ուստի քինքինան հեղուկ վիճակի մէջ գործածել լաւագոյնն է :

Առ այդ՝ հետեւեալ միջոցը կը պատուիրեմք :

Չափաւոր քանակութեամբ գաղղիական ցքիի մէջ 22 կրամ քինքինայ աւելցնելով, լաւ մը իրարու խառնելէն զկնի, այդ բաղադրութեամբ, փոքր սպունքով մը շարաթն 2-3 անգամ, ննջելէ յա-

ռաջ, գլխոյ մորթը լուալու եւ ապա կակուղ խոզանակով մը խառնելու է մազերը մինչեւ որ չորնան : Այդ ցքին կը մաքրէ գլուխն եւ կ'առաւելու մորթին գործօնէութիւնը, որ եւ քինքինայով կը զօրանայ : Վարսերը վերստին փափկացընելու եւ յղկելու համար, սակաւ ինչ իւղ բաւ է : Զգուշանալու է օձանելիքէն՝ վերոյիշեալ պատճառներով . մանաւանդ թէ գլխոյ մորթի մաքրութեան եւ վարսից աճման վնասատու յատկութենէ զատ, յաճախ պփռալի եւ եղծեալ ճարպեր կը պարունակեն, եւ անուշահոտութեամբ, դոյներով եւ օտար անուամբք քողարկեալ են :

Խոզի հալեալ ճարպն ալ օձանելիքէն աւելի օգտակար է, վասն զի շուտով կը ցնդի եւ գլխոյ մորթն չհաստըցնէր : Այդ ճարպը գործածելէ յառաջ պէտք է զտմամբ մաքրել եւ անուշաբոյր իւղ մը խառնել մէջը :

Ահռաները կակուղ խոզանակով մը մաքրել պէտք է օրական արդուզարդի ատեն . մաքրութեան համար, երբ կ'ուզուի փոշի մը գործածել, օգտակար է թմբիի ածուխի փոշին, եւ ապա յստակ ջրով լուալ բերանը : Ատամանց կեղտերը մաքրելու համար լաւագոյն միջոցն է զմուսի երփնաջուրն . դա՛ հնացեալ կեղտերը կը քակէ ամբողջապէս, այնպէս որ ինքնին փոքր առ փոքր կը փշրէ զնոսա եւ նոր կեղտաց գոյացումն կ'արգելու : Մանաւանդ թէ այդ երփնաջուր կը զօրացընէ լինտրերն եւ բերին յստակ ճաշակ մը կուտայ : Փոքր ուժով ջրոյ մէջ 6, 8 կամ 10 կաթիլ զմուսի այդ երփնաջուրն յաւելլով լաւ մը խառնելու եւ մէկ

վայրկեան բերնին մէջ պահելու եւ աստ անդ շար-
ժելով լուարու է բերանը : Այդ հեղուկ կը մանկ
ամենանեղ միջոցներու մէջ իսկ , ուր կարելի չէ
խողանակ հասցընել : Առաւօտուն , ճաշէ ետքը եւ
երեկոյնն ննջելէ յառաջ գործածելու է դայդ հե-
ղուկ :

Կարի՛ դգոյշ լինելու է պաղ ու տաք կերա-
կուր կամ ըմպելի անմիջապէս իրարու ետեւէ ու-
տելէ կամ խմելէ . վասն զի այդ եղանակն անսահ-
ման կերպով վնասաբեր է ատամանց : Ատամանց
կերտուածն՝ որ պաղէն կարի կը կարծրանայ , յան-
կարծական տաքէն շուտով կը թուլանայ եւ դիւ-
րաւ կը ձեղքուի : Ամենափոքր խոռոչ մը տակաւ
կը մեծնայ եւ վերջապէս ամբողջ ախռայն կը կոր-
սուի , ստէպ դառնակսկիծ ցաւեր պատճառելով :

Բերնի դարչահոտութեան համար
սա՛ հետեւեալ բաղալրութիւնը գերադանց բերա-
նաջուր մ'է : $\frac{3}{4}$ լիտր զինիի ոգւոյ մէջ , մէկ ուն-
կի յոյժ բարակ փոշիացեալ քինքինա եւ $\frac{1}{2}$ ունկի
պաղեղ դնելով 8 օր շարունակ պահելէն յետոյ ,
լաւ մը սեղմելու եւ ջուրը զտելէն յետոյ 5 կաթիլ
պղպեղեալ անանուխ եւ 5 կաթիլ ալ մեխակի իւղ
կաթեցընելու է :

Չեռաց խնամքը մեծ ուշադրութիւն կը
պահանջէ : Ամէն ձեռք կատարելապէս գեղեցիկ չէն ,
բայց ամէն ոք կրնայ իւր ձեռքն հոգատար խնամ-
ով մը գեղեցկացընել : Մորթի փափկութեանն
համար սա՛ օժանելիքն ընտրելագոյնն է : 10-12 ա-
նոյշ նուշ տաք ջրոյ մէջ դնելով դալար կեղեւն
հանելէն ետքը , յախճապակեայ սանդի մը մէջ ճըղ-

մելու է . մէկ տրամ մեղր եւ հինգ հաւկթի դեղ-
նուց դգալ մը նշածէթի հետ խառնելէն յետոյ , յա-
ւելլու է նորա հետ , եւ ամբողջն սանթի կոթովն
այնչափ երկար ատեն խառնելու է , որ հայտ մը
դառնայ , ուսկից գործածութեան համար ամէն ան-
գամուն կաղնոյ մեծութեամբ առնլով քսելու է ձե-
ռաց : Այս քսելէ ետքը , որոյ յարմար ժամանակն
իրիկուններն է , կաշեայ ձեռնոց մը դնելու է որ
ամբողջ գիշերն վրան մնայ : Բազմաց կողմանէ համ-
բաւեալ է , ձեռաց մորթի փափկութեան համար ,
ուլենիէ ձեռնոցի գործածութիւնն : Բայց պէտք է
ձեռաց ափին կողմն մէծիտիէի մեծութեամբ ծակ
մը բանալ , որպէս զի ձեռաց արտաշնչութիւնը
չարգիլուի :

Եղունգաց խնամքն ալ յոյժ կարեւոր
է : Լաւ խնամեալ եղունգք , պէտք է երկայնաձեւ
կլորակ կերպով կարուած լինին եւ տակի կողմէն ,
մաշկակապն աղատ լինի : Պէտք է նաեւ եղունգաց
տակ ժողովեալ փոշին ու աղտերը միշտ մաքրել խը-
նամով : Չափազանց երկար եղունգներն ոչ միայն
յոռետեսիլ են , այլ շատ դժարմանց մէջ արգելք են
գործելու եւ դիւրաւ կը կոտրին :

Եղունգները փոշիացեալ բնակաղնիի թթուով
մաքրուած ատեն , վարդագոյն փայլ մը կ'առնուն :

Եթէ տիկին մը քաղցրաբոյր ջուր մը գործա-
ծել ուզէ , պարտի նուազ քանակու-
թեամբ գործածել . առ այդ Գոլոնիոյ ջուրը հա-
ճոյագոյնն է :

Նամակները մանուշակի փոշիով կ'անուշահո-
տին :

Չգետուց եւ ձերմակեղինաց փափուկ բոյր մը տալու համար, պէտք է հոտի-բարձ մ'ունենալ . զայդ պատրաստելու համար առնելու է կէս քիւլօկրամ վարդի չորցած տերեւ, կէս քիւլօկրամ սեւապտուղ հաղարջենույ չորցած տերեւ, կէս քիւլօկրամ մանուշակի փոշիացեալ արմատ, քառորդ քիւլօկրամ մանուշակի դալուանացեալ արմատ եւ սակաւ ինչ նշածէթ : Նոյնպէս կարելի է ամբողջ սերկեւիլ մը ձերմակեղինաց մէջ տեղը դնել, որով հաճելի եւ թարմ բոյր մը կ'ընդունին :

Ընտրելի են նոյնպէս մեծ եւ լաւ հասունցած միրգեր :

Յօդուածիս վերջաւորութենէն յառաջ պարտ կը զգամք անգամ մ'եւս զգուշացընել ընթերցողն ա'յն ամէն արուեստական միջոցներէն, որք կ'եղծանեն զառողջութիւն : Այն բնական միջոցներ, զորս յայտնեցինք, միշտ լաւագոյնք են, վասն զի նպատակին հասցընելով հանդերձ մնաս չեն տար առողջութեան :



Գ Լ Ո Ւ Ծ Ժ Գ .



ՎԱՐՄՈՒՆՔ՝ ԾԱՌԱՅԻՑ ՀԵՏ

Կարի յոյժ ուշադրութեան արժանի է այն եւ զանակն, որով տիկնայք կը վարուին ծառայից դասուն հետ, թէ՛ տան մէջ եւ թէ՛ դուրսը : Այդու կը չափուի տիկնոջ մը կրթութեան աստիճանը :

Ծառայի մը հետ՝ տիկնոջ գոռոզաբար, խստիկ կամ արհամարհոտ կերպով վարուին ասպցոյց է, թէ ընդհանրական կրթութեան մէջ շատ ետ մնացած է նա :

Գլխաւորապէս առաւել զգուշացընելու է զորդայս, քաղաքավարութեամբ եւ յարգանօք վարուիլ ծառայից հետ : Այդ՝ նշան մ'է բարձր կրթութեան, եթէ կ'ուզուի բարձր կացուցանել եւ ըզծառայս, որպէս էր ի հնումն :

Տիկին մը կրնայ առանց պատշաճից դէմ գործած լինելու, ըսել իւր ծառային « տուր ինձ զայդ » կամ « ինձ բեր զայդ » . մինչդեռ բարեկա-

մուհւոյն ծառային պարտի ըսել, « կ'ուզէ՞ք զայդ ինձ բերել կամ տալ » եւ կամ « կը խնդրեմ, ինձ բերէ՛ք զայդ » եւ ուղուածը բերուած ատեն յարել անմիջապէս « շնորհակալ եմ » :

Պէտք չէ կշտամբական կամ խիստ բառ մ'ըսել բարձրաձայն առ ծառայս : Լսողաց միշտ անհաճոյ կը լինի, երբ տիկնայք, մանաւանդ նոքա որք մեծաւ զղուշութեամբ վարուիլ ընութիւն են ըրած իրենց, կատարելապէս անտարբեր վարուին իրենց սպասաւորաց հետ :

Ծառայք խիստ վարմունքով չեն բարւոքիլ, ընդհակառակն կրնայ ըսուիլ թէ աւելի բիրտ եւ անսիրտ կը լինին : Որպէս խթան ի բարին՝ քաղցր, քաջալերական եւ գնահատական բառ մը մեծ դործ կը տեսնէ :

Պէտք է վարժեցընել զծառայս, որ սենեակի դուռն չբանան, առանց կանխաւ զայն բաղխելու :

Քաղցրութեամբ խնդրուած ծառայութիւն մը միշտ հաճութեամբ կը կատարուի :

Մերթ ընդ մերթ ծառայից հաճոյք տալու է սակայն մեծ հոգ տանելու է որ վտանգաւոր վայրեր չայցելեն կամ գէշ ընկերակցութեամբ չեղծանին :

Պէտք է, որ արդար լինի ինչ որ կը պահանջուի ծառայներէ. պարտ է համբերել ակամայ սըխալանաց :

Կերակրոյ համար պէտք չէ ազահ լինիլ, զի այդու տեղի կը տրուի ծառայից՝ ապօրէն կերպով ձեռք բերել իրենց ստիպողական պիտոյքն :

Երբ կանոնապահ տանտիկին մը իւր բանալի-

ներն այլոց չտար, նա իւր անվտանգութեան մէջ շատ յառաջ չկրնար երթալ :

Ապաքէն, ծառայք կարի՛ շուտ կրնան ուսանիլ մեր տկարութիւններն ու սխալներ, վասն զի մեք միշտ նոցա դիտողութեանց ենթակայ եմք. ուստի ջանալու եմք միշտ բարի օրինակ տալ նոցա եւ ամէն բանէ յառաջ քաղաքավարութեան մէջ. վասն զի որպէս ընկերական յարաբերութեանց մէջ ամբարհաւաճութեամբ, ինքնասիրութեամբ եւ անքաղաքավարութեամբ կը վնասէ մարդ միայն իւր անձին, նոյնպէս ծառայից դէմ անքաղաքավարութեամբ՝ կը վնասէ մարդ իւր անձին :

Քմահաճոյքն ու խստութիւնք յաճախ դառնացուցած եւ վնասակար ըրած են ընտիր ու հաւատարիմ ծառաներ : Նախ քան զամենայն մեծ կարեւորութիւն ունի, որ վարժ տանտիկինք վարժեցընեն դեռատի, դեռուս եւ անփորձ ծառաներն, վասն զի ինքնին եւ կամ դպրոցի մէջ չեն կրնար ուսանիլ ամենայն ինչ. նոցա փորձառութիւնը կը սկսի անդ՝ ուր դպրոցը կը դադրի, եւ հնարմաց տանտիկնոջ մը փորձառական վերակացութեան պէտք ունին :

Այն դեռատի տիկնայք՝ որ անձնական շահու համար ի տղայ տիոց ընտանեաց առանին զբաղմամբ գործօնեայ եղած են, եւ արհամարհած չեն՝ մէկ քանի տարի վերջն իրենց պատրաստեալ ապագային ուսման համար ուրիշ ընտանեաց առանին կառավարութեանց ծանօթանալն, եւ այդպէս՝ վարժուած են այլոց սնակառավարութեանց հետեւիլ, հպատակելով այլոց առանին կառավարութեանց, եւ

տան կառավարութեանց մէջ դռնուած տարբերութիւնը ճանչնալէ յետոյ, կարողացած են կ'ամ իրենց առանին կառավարութեանց մէջ բարելաւութիւններ մտցնել եւ կ'ամ կատարելագործուիլ. այդպիսի տիկնայք որ յօժարութեամբ առանին գործոց կը նուիրեն զանձինս, ո՛չ միայն կը թող են իրենց ծառայից, այլ սիրեցեալ եւ փորձառու մայրեր են իրենց ապագայ որդեկաց :

Այդպիսի տիկնայց թիւը տակաւ կը նուազի, յամօթ եւ ի մեաս ճշմարիտ ընտանեկան կենաց :

Գժբաղդաբար կա՛ն բազում օրիորդք եւ կանայք, որք իրենց սպասաւորաց հետ միշտ հրամայական եւ բուռն կերպիւ կը վարուին, վասն զի չունին ճշմարիտ մարդաճանաչութիւն : Նոքա չեն գիտեր թէ, կարելի է սպասաւորաց հետ քաղաքավարութեամբ վարուիլ, առանց կորուսանելու ըզյարգ անձին :

Քաղցրութեամբ վարուելով հանդերձ կարելի է խստանալ : Նոքա չեն գիտեր, թէ քաղցր եւ օրինաւոր վարմամբ, յաճախ տասնապատիկը ձեռք կը բերուի, քան խիստ ու դաժան վարմամբ. եւ թէ սպասաւորաց հետ քաղցրութեամբ եւ ողորանօք վարուելով, ի հաւատարմութիւն, յանձնութիւն եւ յերախտագիտութիւն կը մղեն զնոսա, որք գործօնէութեան հաստատ երաշխիք են :

Յանդիմանութիւնն իսկ, եթէ երբէք հարկ լինի, այլոց առջեւ ընելու չէ. եւ լաւագոյն է խրատելով ի կարգ բերել զնոսա :

Ի ներկայութեան հիւրոց, սխալմունք մը ի տես բերելն ո՛չ միայն անդէպ է յաչս ներկայից,

այլ մեասաբեր է սպասաւորաց, մանաւանդ՝ երբ անձնասիրութեան տէր լինին : Նոքա անարգեալ կը զգան զանձինս եւ փոխանակ իրենց պակասութիւնը ճանչնալու, առիթ կը փնտրեն ինքզինքնին արդարացընել, իրենց վիրաւորեալ անձնասիրութիւնը դոնացընելու համար :

Պէտք է սպասաւորները ժամանակին հրահանգել, որ ինչպէս իրենց տեսրց եւ տիրուհեաց, նոյնպէս եւ նոցա բարեկամաց եւ հիւրոց հետ ուշադրութեամբ եւ քաղաքավարութեամբ վարուին :

Ամէն այս հրահանգաց ատեն պէտք է զգոյշ լինիլ ամէն խստութենէ եւ դաժանութենէ, եւ ջանալ քաղցրութեամբ հասնիլ նպատակին. խնամ տանիլ որ սպասաւորք ոչ թէ կոյր հետեւողութեամբ՝ այլ ինքնին համոզմամբ ուշադիր լինին հրամանաց եւ կարգադրութեանց, եւ ի դէպ պահանջման՝ օրինաւորապէս վերահասու ընել ամենայնի : Ընդ մէջ տեսրց եւ սպասաւորաց անկեղծ փոխադարձութեան մը սկզբունքն իրական եւ ապահով հիմն է, եւ լաւ կը թութեան մը գլխաւոր պարտաւորութիւնն է՝ այս օրինաւոր փոխադարձութիւնը գիտնալ եւ պահանջել :

Ուր որ առ այս մեծ հոգ կը տարուի, ապագայ ձգունք կ'ապահովին, վասն զի ազգի մը բարելաւու տնականավարական բարգաւաճ վիճակը, զԸլխաւորապէս անհատից անձնական դաստիարակութենէն, կը թութենէն եւ մտաւորական յառաջադիմութենէն կախեալ է :

Բաց յայսմանէ, յոյժ կարեւոր է որ տանտիկնայք երբ նոր սպասաւորներ կ'առնուն իրենց քով,

որք դեռ չունին պէտք եղած փորձառութիւնն ու իրենց կարգին ընդհանուր վարմունքն, ջանան լաւ եղանակ մի տալ նոցա վարմանց: Նախ քան դա՝ մենայն ջանալ պէտք է նոցա գէշ սովորութիւններն, անշնորհ վարմունքն եւ պատասխանելու բիրտ ձեւերն ի լաւ անդր փոխել, եւ պարկեշտութեամբ սենեկէ մը ներս մտնել եւ հաճոյ խօսուածք սովորեցնելու է նոցա:

Եթէ տան տիկինը չյաջողի, եւ սպասաւորին անընդունակ եւ անընտել լինելը հաստատուի, հարկ կը լինի ձ ա ն բ ել զ ն ա:



ՅԱԻԵԼՈՒՆԾ

ՅԱՂԱԳՍ ՆԱՄՍԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԻԿՆԱՅՑ

Հանապազօրեայ զիտողութիւն մ'է, թէ բազում կանայք, որք գիտեն ընկերական շրջանակաց մէջ զիւրութեամբ եւ ապահովապէս տեսակցիլ, չեն կարող իրենց խորհուրդներն ու խօսածն ի դիր առնուլ եւ այդ պատճառաւ կը խուսափին նամակ գրելէ: « Աշխարհի մէջ նամակ գրելու պէս զըժուար բան չկայ ինձ համար. մեծ նեղութիւն կը զգամ գրիչ ձեռք առնելու » . խօսք մը որ լսած եմ այնպիսի տիկնայց բերանէ, որք կարող են ընկերութեան մէջ խօսիլ հաճելի եւ յանկուցիչ կերպով:

Ընդհանրապէս, յաճախ զգալի եղած այս պակասութեան պատճառը թեթեւ վեհերոտութիւն մը, անձնական արժանեաց անարգութիւն մ'է: Եթէ ամենապարկեշտ տիկնայք իսկ մտածեն թէ նամակ մը բերանացի խօսուածքի մը գերասանն է, թէ մեք զայն կարգացողին յարգն այնպէս կը դիտեմք եւ կը ձանձնամք, որպէս թէ առ նա խօսած լինիմք անձնապէս, յայնժամ թերեւս անհետին նամակազրութեան համար զգացուած վեհերոտութիւնք, եւ յայնժամ գրական յարաբերութիւնք իբր մի նեղացուցիչ աշխատութիւն չնկատուին:

Ո՛չ եւս այն ժամանակաց մէջ կ'ապրիմք , յորում հողեոյն վիճակը նկարագրելու , փոխադարձաբար իրարու սիրտ զգածեցընելու կամ զիպաց ու եղելութեանց վրայ մանրամասն տեղեկութիւն տալու համար անվերջանալի նամակներ կը գրէին : Այժմ անձնապէս կը տեսակցին եւ կը տեղեկանան , որոյ վասն՝ այժմու նամակաց ոճը կարճ է եւ միայն նիւթին վրայ կը գրուի :

Այսու ամենայնիւ լաւ նամակ մը գրելու համար , իրական գիտելիք կան զորս գիտնալ պէտք է : Ով որ խնդրոյն հետաքրքեալ՝ նստի գրասեղանին վրայ , իւր թարմ արտայայտութիւններն զեզու գրչոյն , անձնապէս ներկայացընէ իւր առջեւ այն անձն առ ո՛ր կ'ուղղէ նամակն եւ առաջնորդ ունենայ իրեն՝ մեր սեռին առ վայելուչն ու պատշաճն ունեցած զգացումն , ահա այդպիսին հաճելի եւ սահուն ոճ մը կը յատկացնէ իրեն : Ով որ հաճութեամբ կը գրէ , լաւ կը գրէ : Անձկութեամբ կամ յակամայս գրուած նամակ մը , զայն ընդունողին վրայ լաւ ազդեցութիւն մը չընէր , եւ մինչեւ իսկ եթէ ճարտար դարձուածներ ալ ունենայ , մարդ շուտով խելամուտ կը լինի այն բռնազբօսիկ զգացմանց , որք կ'ընդնամարուին գրոյն պարունակութեան մէջ :

Նրբ ուզուի՝ մասնաւոր կարեւորութիւն մ'ուսնեցող նամակ մը գրել , լաւ է որ նախապէս կապարեայ գրչով ուրուագիւր մը չինուի . տեղեր կան որ վերընթերցմամբ համառօտել , տեղեր կան զորս կրկնել պէտք կը լինի : Լաւ գրութեանց ընթերցմամբ , մարդ իւր խօսուածքի ձեւը բարելաւել եւ

ազնուացընել կ'ուսանի . մի եւ նոյն նիւթի վրայ կրկնեալ ասացուածէ ետ կը կենայ եւ բացատրութեան հասարակ ձեւն ազդու եւ ընտրելի ոճի մը կը բարեփոխէ :

Ո՛ր եւ է նիւթի մը վրայ գրուած ատեն , խօսելէ աւելի ուշադիր լինելու է խորհուրդներն անպաճոյճ եւ անուռոյց կերպով բացատրել :

Լաւ խօսող փիկնայց գրութիւնները յաճախ դէշ են , վասն զի ջանալով ազդեցութիւն մը տալ իրենց գրուածոց , իրենց բնական դատողութեան սահմանէն դուրս կ'ելնեն . դռքա յաջողապէս կը խօսին , վասն զի իրենց բնական ասպարէզին մէջ են , բայց գրութեանց մէջ գեղեցիկ դարձուածներ եւ գաղափարներ կը փնտռեն . սակայն այդպէս յաճախ ցոյց կուտան թէ ճաշակի համար պիտանի ճանչցուած կրթութիւնը չունին :

Ուստի մտային կարողութեան միջին կրթութիւն ունեցողն իւր նամակին մէջ սոսկ պարզ եղանակ մը կը գործածէ , որ խօսակցութեան մը լեզուին կը մօտենայ . վերոյիշեալ ճգունք անյաջող կը լինին բազմաց համար , վասն զի հեռուն կը փնտռեն ինչ որ իրենց մօտ կայ , եւ վասն զի իրենց կրթութեան սահմանը կ'անցնին :

Կանոնաւոր գրուած նամակ մը երեք մասերէ կը բաղկանայ . յառաջաբան , նիւթն եւ վերջնաբան . Յառաջաբանը պէտք է գրութեան պատճառը կամ քաղաքավարական ասացուածք մը պարունակէ . ընթերցողը՝ նամակին պարունակութեան պատրաստէ եւ նորա ուշադրութիւնը գրաւէ յետագայ տողերուն վրայ . յառաջաբանը՝ նամակին ընդար-

ձակութեան համեմատ՝ պէտք չէ շատ երկար լինի եւ առանց բռնն բացատրութեան պէտք է նամակին իսկական պարունակութեան դառնալ :

Արդարեւ դիւրին չէ միշտ յարմար յառաջաբան մը գտնել , եւ բազումք վասն այնորիկ զըժուարութեանց կը հանդիպին : Առ այդ՝ միայն կարելի է դիւրութիւն մը լինել , երբ մարդ նամակն իրրեւ խօսակցութիւն մը երեւակայէ : Երբ մէկու մը ո՛ր եւ է գործ առաջարկելու պէտք ունենանք , դիւրաւ կը գտնեմք մէկ քանի բառեր , որով կը սկսինք մեր խօսակցութիւն : Ուրեմն եթէ յառաջաբան մը չգտնուի , — պարագայ մը , որ կրնայ պատահիլ երբ մարդ չուզէր առաջուց յայտնել իւր նամակին պարունակութիւնը . օրինակի աղագաւ , տխուր լուր մը գուժելու ատեն , — կրնայ մարդ ընդհանուր եղանակաւ սկսիլ եւ տեղեկութեան մը հետ յօդել զայն :

Մարդ նամակն սկսելէ ետքը այնպիսի տեղ մը կ'ընտրէ որ յառաջաբանին վերջին պարբերութեան հետ լաւ կը համաձայնի եւ խնդրոյն բռնն նպատակն առնելով , առանց խորթ դարձուածոց այնպիսի իմն կը ներկայացնէ , որպէս ի խօսակցութեան , եւ կը յառաջանայ առաջարկութեանց կարգաւ եւ կը վերջացնէ երբ պէտք եղածն ըսած է :

Ի՛նչ որ նամակն ընդունողին կարեւոր է , յառաջ կը գրուի , եւ նամակագրին պատկանեալը՝ ետքը :

Վերջապէս նամակագրութեան մէջ համառօտութիւնը լաւ կը թութեան նշան մ'է . վասն զի կարելի չէ խնդրել բազմազբաղ անձերէ որ մեր

գրութիւնները կարդալու համար շատ ժամանակ յատկացնեն : Երկար բացատրութիւններ բարեկամական նամակաց միայն կը պատկանին : Առանին կենաց մանրամասնութիւններն օտարին գրողն իւր միամտութիւնը կ'ապացուցանէ :

Նամակաց տեսակին զանազանութեան համեմատ՝ գրուածոց եղանակն ալ զանազան է : Կենաց յարաբերութիւնք այնչափ բազմատեսակ են , որ անկարելի է աստ յատուկ օրինակ մը գրել : Ընդհանուր կանոն է սակայն որ նամակ մը յստակ , դիւրըմբռնելի եւ պահաջելի կանոնաց համաձայն գրուի :

Ն ա մ ա կ ի մ ը վ ե ը ջ ա բ ա ն ը : Երբ նամակին պարունակութիւնը , բնական դարձուածով մը մեծարանաց , սիրոյ եւ անձնուիրման վերջաւորական ապահովութեանց կը յանդի , եւ բռնազբօսիկ դարձուածներէ զերծ է , նամակը կանոնաւոր կը լինի : Սակայն երբ այդ դարձուածք նպատակաւոր եւ իրր ակամայ լինին , ընթերցողին վրայ հաճոյ ազդեցութիւն մը չեն գործեր :

Կանոն է որ գրութեան վերջաբանին մէջ պատճառը , խնդիրը , խորհուրդը ու փափաքը , վերջապէս այն ամենայն որ ըսուած են նամակին մէջ՝ կը կրկնուին :

Որպէս մէկու մը յայց կ'ենենմք , եւ մեկնելու ատեն ի՛նչ որ երախտագիտաբար կ'ըսեմք , նամակաց մէջ եւս պէտք է քաղցրութեամբ , խոնարհութեամբ եւ սիրով հրաժեշտ տալով , մեր մեծարանք , անձնուիրութիւնն ու բարեկամութիւնը ապահովացնել :

Հնազանդ , խոնարհ աղախին եւլն . պատուա-
սիրական բառերու կրկնումն այն ատեն միայն կը
լինի , երբ լոկ պատշաճ քաղաքավարութեամբ ,
արտայայտութեան ոյժ կուտան :

Նամակաց պարունակութիւնը , որպէս ըսինք ,
յոյժ բազմազան են եւ կարելի չէ ընդհանուր կա-
նոն մը տալ նոցա շարադրութեան , բայց փորձած
եմք ի ստորեւ , մէկ քանի գիտելիքներ ցոյց տալ
ի գիւրութիւն մեր ընթերցողուհեաց :

Բարեկամական նամակներ պէտք է որ ան-
կեղծութեան դրօշմն կրեն , բայց զգուշանալու է
հետի մնալ այն զգայութենէն զոր ի կիր կ'առնուն
բազում կանայք երբ իրենց ջերմաջերմ զգացում-
ները յայտնել ուզեն : Այնպիսի չափազանց եւ վի-
պական բացատրութիւններ , որք նամակն ընդու-
նողին արժանիքն ամպոց բարձունքը կը հանեն ,
կամ համակրութեան չափազանցեալ վստահացուց-
մունք , ոչ միայն ծիծաղելի են , այլ պարկեշտ եւ
հանդարտ անձանց անհաճոյ կը լինին եւ փափկազ-
գացումն կը վիրաւորեն :

Բարօրութիւն մաղթող գրութեանց մէջ ալ ,
պարզ եւ բնական բառերով կը յայտնուին սրտին
զգացումները :

Ծննդեան եւ այլ այսպիսի տօնական աւուրց
առթիւ ալ առողջութիւն , բարօրութիւն , եր-
կար կեանք կը մաղթուի , յաւելլով ընդ նմին ի՛նչ
որ մասնաւոր պարագայք կ'ընձեռեն . օրինակի
համար , նշանտուութեան առթիւ , փեսացունին սի-
րելութեան , գեղեցկութեան եւ այլ նման ձրից
եւ նորա ընտանեաց պատուաւորութեան վրայ

գրուատական քանի մը բառեր : Տղու մը ծննդեան
առթիւ ալ խնդակցութիւն կը յայտնուի թէ մայրն
ու գաւակն առողջ վիճակի մէջ են , եւ թէ զա-
ւակն իւր ծնողաց ուրախութիւնը պիտի առաւելու :

Ընտանեաց մի անդամոյն մահուան ատեն
պէտք է որ մարդ իւր սրտագին ցաւակցութիւնը
յայտնէ . բայց մխիթարական եղանակը պէտք է որ
սղաւորին բնաւորութեան համաձայն լինի :

Ծնորհաւորական եւ ցաւակցական գրութիւնք
յաճախ պատշաճից օրինաց կը վերաբերին , զի ա-
դոնց յղմամբ քաղաքավարական ձեւակերպութիւն
մը կատարուած կը լինի :

Այդ գրութիւնք եթէ այնպիսի անձանց յղուին ,
որք զրկողէն աւելի բարձրակարգ են , յայտնամբ-
տորնակարգը ուշադիր լինելու են այն յարգանքն
հաւաստել , զոր կը պահաջէ իրենց եւ նամակն ըն-
դունող բարձրապատիւ անձին զրից ու պատուոյն
տարբերութիւնը :

Խնդակցական եւ ցաւակցական ասացուածք ո՛չ
թէ մտեմական եղանակաւ , այլ քաղաքավարու-
թեան պահանջած լեզուաւ եւ յարգական ձեւով
լինելու են :

Այն նամակներ , որ յանձնարարութիւն կամ
տեղեկութիւն մ'ուղելու եւ կամ այլ այսօրինակ նը-
պատակաւ գրուած են , պէտք է որ խնդրանք եւ
ներողութիւն պարունակեն : Եթէ այդպիսի նամակք
բարձրաստիճան անձանց ուղղուին , պէտք է
որ յոյժ պարկեշտ եւ քաղաքավարական եղանա-
կաւ լինին , վասն զի՝ ըստ պատշաճից օրինաց՝ միշտ
անվայել ձանջուած է բարձրաստիճանաց բան մը

հարցանել կամ անոնց նեղութիւն տալ : Առ բարեկամս գրուած նամակաց մէջ պէտք չէ ընդհամարել տալ թէ մեզի հետ իրենց ունեցած յարաբերութիւնը կը պարտաւորէ զիրենք մեր խնդիրը կատարել :

Խնդրագիրք պէտք է խնդրոյ նիւթը կարճ բացատրութեամբ պարունակեն . նոյն իսկ խնդիրն իբրեւ գլխաւոր նիւթ , այնպիսի իմն ներկայացընելու է որ իբր յետամնաց լինի առաջին տողերէն կամ փոքր պարբերութենէ մը ետքը գրուի : Ապա կը ցուցուի պատճառն , որ կը հաստատէ զխնդիր , եւ վերջապէս խնդրոյն ընդունելութեան յոյսը յայտնելով , նամակն ընդունողին վեհանձնութեան կամ այլ առաքինութեանց կը յանձնէ զանձն : Աստ , գործածելու չէ բնաւ ստորնական շողքորթութիւն : Բացայայտ , պարկեշտ ու քաղաքավար լեզու մը՝ ստիպիչ աղաչանքէ եւ ողբերէ աւելի նպաստաւոր ազդեցութիւն մը կ'ընէ յանձին ընդունողին :

Խորհրդատու նամակաց մէջ պէտք է յառաջ քան զամենայն սրտակից հոգածութիւն մը ցոյց տալ , եւ արուած խորհուրդն ալ , ո՛չ թէ , որպէս կը պատահի յաճախ , իբրեւ հրաման ըսելու է : Սովորաբար հաճութեամբ կ'ընդունուի այն խորհուրդ , երբ պատճառն ցոյց արուած է եւ ի բարեկամութենէ զրդեալ իւր կարծեաց իրականութիւնը կը մաղթուի . այս պարագային մէջ ջեօր կարծեր որ , աղեկ ջեօր լինիր որ հարցանման ձեւերը կը գործածուին յատկապէս :

Յանդիմանական եւ կշտամբական գրութիւնք պէտք է հետի լինին զառնութենէ , եւ անձնասի-

րութիւն վիրաւորելու չափ կծու գրուելու չեն :

Եթէ ուզուի գրութեամբ արդարացուցանել զանձն , պէտք է համոզկեր պատճառներով ներկայացընել խնդիրն , կամ գրողն իւր անիրաւութիւնը ցոյց տալով իւր վիշտը ճանչընել :

Ն ա մ ա կ ք ը ն դ մ է ջ ա ր ա ն ց եւ կ ա ն ա ն ց : Թէ ե՞րբ եւ ի՞նչպէս կարելի է որ դեռատի տիկին մը առն միում հետ նամակակցի , առ այդ միշտ կրնան իւր ծնողքն կամ նոցա փոխանորդք որոշումն տալ : Թէ ոք տիկնոջ մը ձեռն խնդրէ եւ այդ առաջարկութիւն յոյժ պատուաւորապէս լինի , տիկինը կրնայ մերժողական պատասխան մը կարելի եղածին չափ խնամով շարադրել , յորում հաճութիւնը ընդ քողով կը նշմարուի : Այնպիսի արժանեաց փափուկ նկատմունք եւ այն գաղափարն թէ գրուած խօսք մը ետ չառնուիր , թէ այնպիսի գրութիւններ կան որք կրնան տարիներէ հետէ մարած զգացումն զարթուցանել , իբր լաւագոյն կանոն կարելի է տալ այն սահմանաց , որոց համաձայն կրնան շարժիլ տիկնայք իրենց նամակակցութեանց մէջ :

Պատշաճից օրինաց համաձայն , նամակ մը ծալուած թերթի վրայ կը գրուի—ո՛չ երբէք կիսատ թերթի մը վրայ—եւ ինքնայայտ է թէ առանց բժի :

Ամէն նամակ , ի՞նչ մեծութիւն ունենայ եւ որի որ ուղղուած լինի , պէտք է պահարանի մը մէջ դրուած զրկուի : Եթէ նամակի մը պարունակութիւնն ո՛ր եւ է կերպիւ պաշտօնական լինի , յայնժամ պէտք է կնքամոմով զմռել պահարանը :

խակ ուրիշ պարագայից մէջ բաւ է լուկ խիժաջրով
 փակել :

Գեղազրութիւն պահանջելի չէ յամենայնէ ,
 բայց ըստ կարելւոյն պէտք է որ յստակ եւ որոշ
 կերպիւ գրուի : Ո՛վ որ լաւ գրել չկրնար , գրելիք
 թուղթին տակ տողաշար մը կը դնէ :

Պատշաճից հակառակ է բառերու վրայէն գը-
 ծելով նորէն գրել եւ գրեալը փոշիով չորցընել :

Յետ գրութիւն մը միայն առ բարեկամս կամ
 առ աստիճանակիցս ուղղեալ նամակաց մէջ ներե-
 լի է :


Եթէ տիտղոսներ ունենան այն անձինք , առ
 որս կ'ուղղուին նամակք , պէտք է գրել զայնս
 հասցէին վրայ : Գոցա մոռացումն կամ զանձառու-
 թիւն իբր անքաղաքավարութիւն կը ճանչցուի :

Ո՛վ որ առիթ չունի թղթակցութեան , պէտք
 է առանձին նամակ գրէ վարժուելու համար . վասն
 զի չգիտցուիր թէ ժամանակն ու պարագայք ինչ
 վիճակի կ'ենթարկեն զմեզ : Այն կին , որ խօսքով
 եւ գրութեամբ ապահով կը զգայ զանձնն , գանձ
 մը կը կրէ յանձին , վասն զի այդ յատկութիւն կե-
 նաց զանազան դիպաց մէջ թեկն ու պաշտպանու-
 թիւն կուտայ իրեն . այդպիսի կին մը՝ յառաջ քան
 զամենայն ապահով կը լինի յամենայն անպատեհու-
 թենէ , այլոց օգնութեան դիմելէ , եւ իւր կենցա-
 ղավարութեան ներքին վիճակն օտարաց անձանօթ
 կը պահէ :

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Բան Թարգմանչիւն	3
ԳԼՈՒԽ Ա.	Այցելութիւնք , Այցեստոմսք , Էւլն	5
ԳԼՈՒԽ Բ.	Խօսակցութիւն Եւ ընկերային վարմունք	17
ԳԼՈՒԽ Գ.	Կարգադրութիւն կոջունքի	31
ԳԼՈՒԽ Դ.	Սեղանի սովորութիւնք	37
ԳԼՈՒԽ Ե.	Պարահանդես	46
ԳԼՈՒԽ Զ.	Խաղ	58
ԳԼՈՒԽ Է.	Կանանց՝ ի ճանապարհորդու- թեան , օտար տանց մէջ օրե- ւանած ատեն ունենալիք վար- մունքն Եւ պարտիք հիւրընկա- լութեան	61
ԳԼՈՒԽ Ը.	Բողաքավարութիւն	70

ԳԼՈՒԽ Թ.	Ընկերական յարաբերութիւնք օրիորդաց ընդ արս	81
ԳԼՈՒԽ Ժ.	Վայելուչ տան մը կանկարաս- եաց կարգադրութիւնք	101
ԳԼՈՒԽ ԺԱ.	Արդուգարդ . - Գաղտնիք արդու- գարդու	109
ԳԼՈՒԽ ԺԲ.	Հարդերձասենեակ . - Շարունա- կութիւն գաղտնեաց արդուգար- դու	121
ԳԼՈՒԽ ԺԳ.	Վարմունք՝ ծառայից հետ	129
ՅԱԻՆԵԼՈՒԱԾ	Յաղագս նամակագրութեան տիկնայց	135



ՀՀ Ազգային գրադարան



NL0348740



Գին $\frac{9}{4}$ Արծաթ Մեհիստիէ



